3702

Վ. Մ. ՄՈԼՈՏՈՎ
Կ. Ե. ՎՈՐՈՇԻԼՈՎ
Լ. Մ. ԿԱԳԱՆՈՎԻՉ
Ա. Ի. ՄԻԿՈՅԱՆ
Մ. Ի. ԿԱԼԻՆԻՆ
Ա. Ա. ԱՆԴՐԵԵՎ
Ն. Ս. ԽՐՈՒՇՉՈՎ
Լ. Պ. ԲԵՐԻԱ
Ն. Մ. ՇՎԵՐՆԻԿ
Գ. Մ. ՄԱԼԵՆԿՈՎ
Գ. Մ. ԴԻՄԻՏՐՈՎ

# ԸՆԿԵՐ ՍՏԱԼԻՆԻ ԾՆՆԴՅԱՆ ՎԱԹՍՈՒՆԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

3К3.
3К36
С-47

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵ՛Ք

3К36
С-47
2 8 JUN 2005
DEC 2009

Վ. Մ. ՄՈԼՈՏՈՎ
Կ. ՅԵ. ՎՈՐՈՇԻԼՈՎ
Լ. Մ. ԿԱԳԱՆՈՎԻՉ
Ա. Ի. ՄԻԿՈՅԱՆ
Մ. Ի. ԿԱԼԻՆԻՆ
Ա. Ա. ԱՆԴՐԵՅԵՎ
Ն. Ս. ԽՐՈՒՇՉՈՎ
Լ. Պ. ԲԵՐԻԱ
Ն. Մ. ՇՎԵՐՆԻԿ
Գ. Մ. ՄԱԼԵՆԿՈՎ
Գ. Մ. ԴԻՄԻՏՐՈՎ

# ԸՆԿԵՐ ՍՏԱԼԻՆԻ ԾՆՆԴՅԱՆ ՎԱԹՍՈՒՆԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

420

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ ● 1940

16.04.2013
3702
3666-91
2011
40



Վ. Մ. ՄՈԼՈՏՈՎ

# ՍՏԱԼԻՆԸ ՎՈՐՊԵՍ ԼԵՆԻՆԻ ԳՈՐԾԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՂ

Ընկ. Ստալինը մեծ Լենինի գործի ճանաչված ու արժանավոր շարունակողն է: Ընկ. Ստալինն այդպիսին է հանդիսանում ո՛չ միայն մեր, կոմունիստական կուսակցության ու ՍՍՀՄ-ի ժողովուրդների աչքում, այլև ամբողջ միջազգային կոմունիստական շարժման մարտիկների ու ամբողջ աշխարհի աշխատավորների աչքում: Դրանով ասված է գլխավորն ընկ. Ստալինի՝ վորպես ՀամԿ(բ)Կ և Խորհրդային Միության առաջնորդի մասին:

Այժմ, Լենինի մահվանից 16 տարի հետո, դժվար չէ հասկանալ, թե ինչու այդպես խայտառակ կերպով սնանկացան մեր կուսակցության մեջ առաջնորդների դերի հայտնի հավակնողները, և թե մեր յերկրի աշխատավորների համար վորքա՛ն վտանգավոր էին նրանց հավակնությունները: Բայց իր ժամանակին նրանք— այդ բոլոր Տրոցկիները, Զինովյեվները, Բուխարինները, վորոնք իրենց ռեկլամում էին վորպես Լենինի «զինակիցներ», թեև վճռական մոմենտին միշտ Լենինի ու լենինյան քաղաքականության դեմ էին դուրս գալիս,—ինչպես հայտնի յե, գործը հասցնում էին մեծ դժվարությունների կուսակցության մեջ ու յերկրում, սպառնում էին բոլշևիկյան կուսակցության պառակտումով, ցնցումներով խորհրդային պետության մեջ, կապիտալիստական պետությունների արշավանքով ՍՍՀՄ-ի դեմ: Հարկ յեղած հակահարվածը տալ, մերկացնել կուսակցության և աշխատավորների շահերի նկատմամբ նրանց քաղաքականության թշնամական բնույթը, մինչև վերջը ջախջախել սոցիալիզմի դիմակավորված թշնամիների այդ բոլոր խմբակներն ու ֆրակցիաները, իսկ դրանց հետ միասին նաև ջախջախել հետագայում նրանց ստեղծած լըրտեսական-վնասարարական կազմակերպությունները, վորոնք կատարում էին ոտարերկրյա հետախուզությունների հակախորհըրդային առաջադրանքները—այդ ամենը մեր կուսակցությունը լիակատար հաջողությամբ կարողացավ կատարել ընկ. Ստալինի, բոլշևիկյան կուսակցության կազմակերպչի ու գաղափարական

առաջնորդի ղեկավարությամբ։ Նրանց դեմ մղված այդ պայքարում, ովքեր մեծ ճարպկություն յերևան բերին իրենց հակախորհրդային հանցավոր գործունեությունը կեղծ-լենինիզմի խարդախ դրոշակով քողարկելու գործում, մեր կուսակցությունը վոչ միայն չքայքայեց իր շարքերը, այլ և՛ ավելի ամրապնդեց դրանք, աճեց քանակապես ու համախմբեց իր ուժերը, ավելացրեց իր բոլշևիկյան մարտունակությունը, աշխատանքի թափը և աշխատավոր մասսաների մեջ ունեցած հեղինակությունը։ Դրա շնորհիվ բոլշևիկյան կուսակցությունը, վորն իրականացնում է մեր պետության մեջ կատարվող ամբողջ սոցիալիստական շինարարության ղեկավարությունը, ապահովեց Խորհրդային Միության մեջ սոցիալիստական հասարակակարգի կառուցման վիթխարի հաջողությունները և խիստ բարձրացրեց ԽՍՀՄ-ի հեղինակությունը մեր ժամանակի միջազգային գործերում։

Այս ամենի մեջ գլխավոր ու վճռական ծառայությունը պատկանում է ընկ. Ստալինին, Լենինի գործը շարունակողին, Համ. Կ(բ)Կ և Խորհրդային Միության առաջնորդին։

## 1. ՍՏԱԼԻՆԸ ՎՈՐՊԵՍ ԲՈԼՇԵՎԻԿՆԵՐԻ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆՈՐԴ

Բոլշևիզմի առաջացման հենց սկզբից ընկ. Ստալինը Լենինի զինակիցն է կուսակցության կառուցման գործում, իսկ հետագայում նաև գլխավոր զինակիցը կուսակցության ղեկավարման գործում։

Մինչև հեղափոխությունը ընկ. Ստալինն ավելի հայտնի յեր վորպես բոլշևիկ-պրակտիկ, վորպես բոլշևիկյան կազմակերպիչ։ Այդ չի նշանակում, թե այն ժամանակ նա չեր զբաղվում մարքսիստական թեորիայի հարցերով։ Ընդհակառակը, իր հրապարակախոսական վաղ աշխատությունների մեջ ևս Անդրկովկասում նա ցույց եր տալիս, վոր հիմնավորապես գիտե մարքսիզմը և խոր կերպով հասկանում է Լենինի՝ այն ժամանակ նոր գաղափարները նոր, մարտական տիպի մարքսիստական կուսակցություն կազմակերպելու և ոպորտունիզմի—մենշևիզմի դեմ պայքարելու մասին, ինչպես նաև ռուսական մարքսիստների հեղափոխական տակտիկայի և ռուսական հեղափոխության բնույթի մասին լենինյան այդ գաղափարների լույսի տակ։ Հետագա ժամանակաշրջանը ցույց տվեց, թե մարքսիզմ-լենինիզմի ինչպիսի խոշորագույն տեսաբան է ընկ. Ստալինը,—այնուամենայնիվ



կարևորագույն նշանակություն ունի հենց այն փաստը, վոր ընկ. Ստալինը միշտ կանգնած է յեղել հեղափոխական յեռուն պրակտիկ աշխատանքի կենտրոնում։ Թե՛ մինչև Հոկտեմբեր և թե՛ նրանից հետո, ընկ. Ստալինը միավորում եր իր մեջ «տեսական հզորությունը՝ պրոլետարական շարժման պրակտիկ-կազմակերպական փորձի հետ», ինչպես նա ինքն արտահայտվեց, յերբ բնութագրում եր Լենինին, վորպես պրոլետարական հեղափոխության և պրոլետարական կուսակցության առաջնորդի, վորպես Համամիութենական Կոմունիստական կուսակցության կազմակերպչի ու առաջնորդի։

Մարքսիզմի խոր ըմբռնման հետ հեղափոխական վիթխարի փորձի միացումով պետք է բացատրել, վոր ընկ. Ստալինը, ինչպես վո՛չ այլ վոք, խորը կերպով հասկացավ լենինյան խորաթափանց գաղափարները նոր տիպի մարքսիստական կուսակցության մասին, վորին, ինչպես ցույց տվին իրադարձությունները, վիճակված եր պրոֆեսիոնալ հեղափոխականների ընդհատակյա կազմակերպությունից վերածվել բոլշևիկյան կուսակցության, վորը հաղթականորեն իրականացրեց սոցիալիստական հեղափոխությունը մեր յերկրում։ Այդ արդեն յերևում է ընկ. Ստալինի «Հարևանցիորեն կուսակցական տարաձայնությունների մասին» հոդվածից, վորը տպագրվեց 1905 թվին։

«Լենինիզմի հիմունքների մասին» հռչակավոր գրքի մեջ ընկ. Ստալինն այդ հարցը ծավալեց լրիվ չափով։ Այստեղ նա տվեց II Ինտերնացիոնալի «սոցիալիստական» կուսակցությունների սպանիչ կերպով չեչտակի բնութագիրը, ցույց տալով, վոր «II Ինտերնացիոնալի կուսակցությունները պիտանի չեն պրոլետարիատի հեղափոխական պայքարի համար, վոր նրանք վոչ թե պրոլետարիատի մարտական կուսակցություններ են, վորոնք բանվորներին տանում են դեպի իշխանություն, այլ ընտրական մի ապարատ, վոր հարմարեցված է պառլամենտական ընտրություններին ու պառլամենտական պայքարին»։ Այդ կուսակցություններն իրականում հանդիսանում են պառլամենտական ֆրակցիաների «կցորդ ու սպասարկող տարր»։ Այդպիսի կուսակցությունները կազմավորվեցին «քիչ թե շատ խաղաղ զարգացման ժամանակաշրջանում», և նրանց ղեկավարությամբ «խոսք անգամ չեր կարող լինել պրոլետարիատի՝ հեղափոխության համար նախապատրաստվելու մասին»։

Յերբ սկսվեց նոր ժամանակաշրջանը, այսինքն՝ արդի ժամանակաշրջանը—«դասակարգերի բացահայտ ընդհարումների ժամա-

նակաշրջանը, պրոլետարիատի հեղափոխական ցնցումների ժամանակաշրջանը, պրոլետարական հեղափոխության ժամանակաշրջանը, իմպերիալիզմը տապալելու համար, իշխանությունը պրոլետարիատի կողմից գրավելու համար ուժերն անմիջապես պատրաստելու ժամանակաշրջանը»—այն ժամանակ բանվոր դասակարգի կուսակցության հարցը այլ կերպ ծառացավ: Այն ժամանակ անխուսափելիորեն պետք է բանվոր դասակարգի առաջ ծառանար «նոր կուսակցության հարցը, մարտական կուսակցության, հեղափոխական կուսակցության, վորը պետք է բավականաչափ համարձակ լինի պրոլետարներին դեպի կռիվ առաջնորդելու համար հանուն իշխանության, բավականաչափ փորձված լինի հեղափոխական իրադրության բարդ պայմաններից գլուխ հանելու համար և բավականաչափ ճկուն լինի իր նպատակի ճանապարհին յեղած բոլոր և ամեն տեսակ ստորջրյա քարերից խուսափելու համար: Առանց այդպիսի կուսակցության նույնիսկ ավելորդ է մտածել իմպերիալիզմի տապալման մասին, պրոլետարիատի դիկտատուրա նվաճելու մասին: Այդ նոր կուսակցությունը լենինիզմի կուսակցությունն է»:

Այս հայացքները բանվոր դասակարգի ժամանակակից կուսակցության, վորպես նոր, մարտական տիպի կուսակցության մասին, վորի օրինակն եղ հենց դարձավ բոլշևիկների կուսակցությունը, բացահայտում են բանի էությունը, վորքան վոր նկատի յե առնվում սոցիալիստական հեղափոխության նախապատրաստման կազմակերպումը և իրականացումը: Լենինը ստեղծեց և դաստիարակեց այդպիսի կուսակցություն: Լենինի հետ միասին տասնյակ տարիներ այդ կուսակցությունը կառուցում եր ընկ. Ստալինը, վորը վոչ միայն խորապես հասկանում եր այդպիսի կազմակերպող ուժի նշանակությունը կապիտալիզմի նկատմամբ հաղթանակ տանելու համար, և սոցիալիստական հեղափոխությունից հետո կոմունիզմի կառուցման համար, այլ վորը, կարելի յե ասել, միշտ հոգին դնում եր բոլշևիկյան կուսակցության կառուցման ու ամրապնդման գործի մեջ, այդ կուսակցությունն օպորտունիզմի ամեն տեսակ աղտեղությունից մաքրելու գործի մեջ, կուսակցությունը բոլշևիզմի բոլոր ու ամեն տեսակ թշնամիների դեմ մղվող հեղափոխական մարտերում մարտականորեն կոփելու գործի մեջ:

«Համկ(բ)Կ պատմության» մեջ, ինչպես հայտնի յե, տրված է բոլշևիկյան կուսակցության զարգացման ամբողջ ուղին,



վորն ուսումնասիրելով պետք է դաստիարակվեն վոչ միայն բոլոր յերկրների կոմունիստները, այլև բոլոր աշխատավորները, վորոնք ձգտում են ազատագրվել կապիտալիզմի ճնշումից, ձգտում են կոմունիզմի հաղթանակին: Դրա համար միանգամայն անհրաժեշտ է հասկանալ կազմակերպող մեծ ուժի—լենինիզմի կուսակցության նշանակությունը, ինչպես սովորեցնում է մեզ ընկ. Ստալինը, վորին նա նվիրում է այնքան ուժեր և իր բացառիկ կազմակերպչական վարպետությունը, կամ ավելի ճիշտ կլինի ասել, կազմակերպչական արվեստը:

Հիշենք Լենինի ցուցումը, վոր կոմունիզմի տեսակետից պրոլետարիատի կազմակերպչական դերը—«այդ նրա գլխավոր դերն է», նկատի ունենալով, վոր բանվոր դասակարգը, վորպես սոցիալիստական հասարակակարգի կառուցման մեջ ղեկավար ուժը, պետք է ունենա վո՛չ միայն կարգապահությամբ ամուր զոդված, միաձույլ կոփված հեղափոխական կորիզ—կուսակցություն, այլև պետք է ունենա ամենաամուր, կենդանի ու բազմակողմանի կապեր աշխատավորների ամբողջ մասսայի հետ, իրագործելու համար վճռական խնդիրը—վերափոխել, վերադաստիարակել աշխատավորների ամբողջ մասսան, այդ թվում նաև հսկայական վոչ-պրոլետարական մասսան՝ «շատ յերկարատև, դանդաղ, զգույշ կազմակերպչական աշխատանքով»:

Գյուղացիական տնտեսությունների բազմամիլիոն մասսայի կոլեկտիվացումն իրականացնելու օրինակով մեր կուսակցությունը լիովին ցույց տվեց լենինյան այդ դրույթների վոչ թե սոսկ ըմբռնումը, այլև դրանք պրակտիկ կերպով կենսագործելու կարողությունը: Բոլորը գիտեն ընկ. Ստալինի մեծագույն ծառայությունները այդ գործում: Բոլորը ճանաչում են ընկ. Ստալինին, վորպես կուսակցության և խորհրդային պետության լայնագույն կազմակերպչի, ներառյալ նաև Կարմիր բանակի կազմակերպման գործը, վորպես Լենինի գործը շարունակողի՝ մեր ամբողջ աճող կուսակցական ու պետական շինարարության մեջ, վորպես առաջնորդ-կառուցողի, վորը հենվում է իր վիթխարի ու բազմակողմանի պրակտիկ փորձի վրա, վորը լավ ծանոթ է մեր կադրերին և ԽՍՀՄ-ի ժողովուրդների կյանքի պայմաններին:

Միշտ մոտիկ գտնվելով պրակտիկային—բոլշևիկյան ընդհատակի ծանր տարիներին, Հոկտեմբերյան ապստամբությունը կազմակերպելու մարտական օրերին, քաղաքացիական պատերազմի գլխավոր ճակատներում, կուսակցության մեջ օպորտունիստա-

ների ու կապիտուլյանտների դեմ մղված բազմաթիվ դատեմարտերում, խորհրդային պետության կառուցման գործերում՝ նրա բոլոր վճռական բնագավառներում, ներառյալ յերկրի պաշտպանության բոլոր հարցերը — ընկ. Ստալինը միշտ զգայուն է դեպի մասսաները, դեպի բանվորների, գյուղացիների ու ինտելիգենցիայի տրամադրությունները և միշտ ակտիվ, հետևողական ու համարձակ է խոշորագույն վճիռների մեջ, ղեկավարվելով մեկ կողմնացույցով — մարքսիզմ-լենինիզմի կողմնացույցով: Ընկ. Ստալինին են պատկանում հետևյալ բառերը՝ «Պրակտիկան կույր է դառնում, յեթե նա իր ճանապարհը չի լուսավորում հեղափոխական թեորիայով»: Յեվ, իրոք, ամբողջ հսկայական ու բազմակողմանի պրակտիկ աշխատանքի մեջ ընկ. Ստալինը հանդես է գալիս վորպես հետևողական մարքսիստ, վորպես անհաշտ լենինյան:

Ընկ. Ստալինը շատ անգամ է խոսել այն մասին, վոր կա մարքսիզմ և «մարքսիզմ»: Կա իսկական մարքսիզմ — ստեղծագործական, բոլշևիկյան-հեղափոխական մարքսիզմ, ինչպիսին մեր ժամանակ հանդիսանում է լենինիզմը: Յեվ կա այլ տեսակի մարքսիզմ — չակերտավոր «մարքսիզմ», դոգմատիկ, մենշևիկյան-հակահեղափոխական մարքսիզմ, վորը միայն արտաքին ձևով է վերաբերում մարքսիզմին, իսկ ըստ էության խորթ է Մարքս—Էնգելսի հեղափոխական-կոմունիստական ուսմունքին:

Ընկ. Ստալինը ստեղծագործական մարքսիզմի խոշորագույն ներկայացուցիչն է: Ավելի՛ն: Ընկ. Ստալինը Լենինի փայլուն շարունակողն է մարքսիզմի գաղափարների հետագա զարգացման գործում, մարքսիզմի, վորի անունը մեր ժամանակում — իմպերիալիզմի և պրոլետարական հեղափոխության դարաշրջանում — լենինիզմ է:

Ինչպես վոր մի ժամանակ բուրժուազիան և նրա գաղափարական ձայնակիցները բանվոր դասակարգի մեջ յեղած ամեն-տեսակ ոպորտունիստական ու հակահեղափոխական խմբերից՝ ձըգտում եյին, առենք դեռ մեր օրերում էլ ճիգեր են գործ դնում, մարքսիզմը հարմարեցնելու իրենց ճաշակին, գիտությունանման պրիոմներով նրա միջից հանելով հեղափոխական-կոմունիստական կորիզը, և դրանով այն անվտանգ դարձնելով կապիտալիզմի համար, — այնպես էլ մեր ժամանակ տրոցկիստները, բուխարինականները և ամեն տեսակի այլ ֆալսիֆիկատորները փորձեր եյին կատարում և կատարում են՝ ժամանակակից մարքսիզմի միջից



դուրս թափելու նրա ամենահաղթ հեղափոխական-ստեղծագործական գաղափարները — լենինիզմի գաղափարների էությունը: Լենինի մահից հետո անցած ամբողջ ժամանակաշրջանը մեր կուսակցության մեջ լի յե լենինիզմի ոպորտունիստական և կապիտուլյանտական խեղաթյուրումների դեմ մղված պայքարով: Կուսակցությունն ընկ. Ստալինի ղեկավարությամբ հաղթականորեն պաշտպանեց լենինիզմն այդ վոտնձգություններից:

Լենինիզմի գաղափարների համար մղված հենց այդ պայքարը մեր հեղափոխության առաջ, հետևապես, նաև մեր կուսակցության առաջ ծառացած նոր հարցերի, նոր խնդիրների արտացոլումն եր: Չեր կարելի գաղափարական արժանի հակահարվածը տալ այդ բոլոր «ձախ» ու աջ, վերջին հաշվով միատեսակ հակաբոլշևիկյան ու հակահեղափոխական յելույթներին, առանց մարքսիստական-լենինյան պարզ պատասխան տալու այն նոր հարցերին, վոր դրեց սոցիալիստական հեղափոխության վերելքը ՍՍՀՄ-ում:

Ընկ. Ստալինի հոդվածների և յելույթների մեջ կուսակցությունը ունեց այդ պատասխանները: Ընկ. Ստալինի պատասխանները նշանակում եյին լենինիզմի թշնամիների գաղափարական ջախջախում: Նրանց մեջ, դրա հետ միասին, լենինիզմի գաղափարներն իրենց հետագա զարգացումն ստացան:

Այստեղ կպահմանափակվեմ միայն միքանի դիտողություններով ամենակարևորի մասին:

Արմատական հարցը մեր ժամանակ, բնականաբար, դարձավ մեկ յերկրում, կապիտալիստական յերկրների շրջապատման մեջ, սոցիալիզմի հաղթության հնարավորության հարցը: Լենինը տվեց այդ հարցի դրական պատասխանի հիմունքները, գիտականորեն հիմնավորելով մեկ յերկրում սոցիալիզմի հաղթության հնարավորության վերաբերյալ իր հռչակավոր թեզիսը, ամենից առաջ կապիտալիստական յերկրների զարգացման անհամաչափությամբ իմպերիալիզմի դարաշրջանում, այսինքն՝ կապիտալիզմի զարգացման արդեն հասած բարձրագույն ստադիայի պայմաններում:

Նկատի ունենալով լենինյան այդ թեզիսի խեղաթյուրման բազմաթիվ ոպորտունիստական-կապիտուլյանտական փորձերը, ընկ. Ստալինը լրիվ չափով ծավալեց լենինյան ուսմունքը մեկ, առանձին վերցրած յերկրում սոցիալիզմի հաղթության հնարավորության մասին և, դրա հետ միասին, ՍՍՀՄ-ում լիակատար

սոցիալիստական հասարակակարգ կառուցելու հնարավորության մասին։ Ընդվորում ընկ. Ստալինը ցույց տվեց, թե մարքսիզմի զարգացման մեջ, կապիտալիզմի արդի ժամանակաշրջանում ինչպիսի առաջընթաց խոշորագույն քայլ է լենինյան այդ ուսմունքը, և մեր կուսակցությանը զինեց կոմունիզմի համար մղվող պայքարում պարզ հեռանկարով, առանց վորի չկա և չի կարող լինել հաղթական պայքար հանուն սոցիալիստական հասարակակարգի կառուցման ԽՍՀՄ-ում։ Ընկ. Ստալինին է պատկանում լենինիզմի այդ մեծ գաղափարների բազմակողմանի հիմնավորման ու զարգացման պատմական ծառայությունը, գաղափարներ, վորոնք անմար փարոսի պես լուսավորեցին կոմունիզմի պայքարի ամբողջ պատմական ուղին, պայքար, վոր մղվում է կապիտալիզմի նկատմամբ լիակատար հաղթանակ տանելու համար։

Կանգ չեմ առնի ընկ. Ստալինի աշխատություններում լենինիզմի տեսական զարգացման մյուս հարցերի վրա։ Կհիշատակեմ միայն, վոր դրանց թվին են պատկանում նրանցից հետևյալ խոշորագույնները—ԽՍՀՄ-ի ինդուստրիալիզացիան, վորպես սոցիալիզմի հաղթության հիմք. գյուղացիական տնտեսությունների բազմամիլիոն մասսայի կոլեկտիվացումը, ընդվորում առաջին ստադիայում՝ արտելի հիման վրա. բանվոր դասակարգի կուլտուր-տեխնիկական մակարդակի բարձրացումը մինչև ինժեներա-տեխնիկական աշխատանքի աշխատողների մակարդակը, վորպես մտավոր աշխատանքի ու ֆիզիկական աշխատանքի միջև յեղած հակադրությունը կոմունիզմի ժամանակ վոչնչացնելու նախադրյալ. կապիտալիստական յերկրների շրջապատման մեջ գտնվող սոցիալիստական պետության ամեն կերպ ամրացումը, կապիտալիզմի նկատմամբ կոմունիզմի վերջնական հաղթանակն ապահովելու համար. կոմունիստական կուսակցության ղեկավարության ապահովումը խորհրդային պետության մեջ՝ նրանց փոխհարաբերությունների համապատասխան ձևեր սահմանելով։ Հարկ չկա այլևս կրկնելու, վոր ընկ. Ստալինը վոչ միայն մյուս բոլորից լավ հասկացավ, այլև զարգացրեց լենինյան գաղափարներն այն մասին, վոր մեր ժամանակը կոմունիզմի համար բանվոր դասակարգի մղելիք պայքարի հաջողությունն ապահովելու նպատակով պահանջում է նոր տիպի—բոլշևիկյան կուսակցության տիպի հեղափոխական կուսակցություն ստեղծել։

Ընկ. Ստալինի ղեկավարությամբ ստեղծված, բոլորին հայտնի, «Համ Կ(բ)Կ պատմությունը» վոչ թե լոկ խոշոր իրա–



դարձությունների և մեր կուսակցության պանծալի գործերի պատմությունն է,—այն պատմական կարևորագույն ժամանակաշրջանի տեսական ընդհանրացումը և ամենաարժեքավոր մի ներդրում է մարքսիզմ-լենինիզմի գիտության մեջ, առանց վորին տիրապետելու չի կարելի ինչպես հարկն է գաղափարապես զինվել՝ կոմունիզմի գործի համար, ամբողջապես կոմունիզմի գործի համար ԽՍՀՄ-ում հետագա պայքար ծավալելու նպատակով։

Բոլշևիկյան կուսակցության պատմությունը միաժամանակ ցույց է տալիս, վոր միայն այդպիսի կուսակցությունը կարող էր ծնել ու կոփել այնպիսի մեծ առաջնորդներ, ինչպես Վ. Ի. Լենինը, ինչպես Ի. Վ. Ստալինը։

## 2. ՍՏԱԼԻՆԸ ՎՈՐՊԵՍ ԽՍՀՄ-Ի ԱՌԱՋՆՈՐԴ

Վորպես ՀամԿ(բ)Կ առաջնորդ, ընկ. Ստալինը միաժամանակ Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության առաջնորդն է։ Այդ միանգամայն բնական է, քանի վոր մեր կուսակցությանն է պատկանում ղեկավար դերը խորհրդային պետության մեջ, վորն իրականացնում է բանվոր դասակարգի դիկտատուրան աշխատավոր գյուղացիության հետ կնքված դաշինքի հիման վրա։

Ընկ. Ստալինի, վորպես ԽՍՀՄ-ի առաջնորդի, դերն արժանի է հատուկ ուշադրության։ Հատկապես այն պատճառով, վոր, ի տարբերություն կուսակցությունից, վորն աշխատավորների ավանգարդի կամավոր կազմակերպությունն է և այդ պատճառով Լենինի արտահայտությամբ—«կուսակցությունը պրոլետարիատի դասակարգային միավորման բարձրագույն ձևն է», բանվոր դասակարգի դիկտատուրայի պետությունն այնպիսի մի կազմակերպություն է, վորն ընդգրկում է բնակչության ամբողջ մասսային՝ նրա դեռևս գոյություն ունեցող դասակարգային տարբերություններով, և միաժամանակ յերկրի բոլոր քաղաքացիները պարտադիր կերպով յենթարկվում են պետական իշխանության կամքին, վորը, հանձին իշխանության գլուխ կանգնած բանվոր դասակարգի, ներկայացնում է ժողովրդի մեծամասնության շահերն ու կամքը։ Դրանից յերևում է, նախ, թե վորքան կարևոր և ուղղակի վճռական նշանակություն ունի պետական կազմակերպության ղեկավարումը կուսակցության կողմից և, յերկրորդ՝ այդ ղեկավարության հատուկ ձևերի անհրաժեշտությունը պետական աշխատանքի առանձին ճյուղերի շրջանին և հենց բնույ–

թին համապատասխանորեն: Տեսական խորտակիչ հակահարված տալով լենինիզմի տրոցկիստական–զինովյեվական–բուխարինական ֆալսիֆիկացիային, ըստ որի բանվոր դասակարգի դիկտատուրան գռեհիկ ձևով նույնացվում էր «կուսակցության դիկտատուրայի» հետ, ընկ. Ստալինը տվեց պրոլետարական դիկտատուրայի սիստեմի մեջ կուսակցության և բանվոր դասակարգի հարցի կլասիկ–մարքսիստական մշակումը: Այստեղ հատկապես պետք է խոսել «Լենինիզմի հարցերի շուրջը» հռչակավոր հոդվածի մասին:

Սակայն ընկ. Ստալինի ամբողջ գրածը նույնիսկ միայն մի փոքր մասն է այն բանի, ինչ նա արել է կուսակցության և աշխատավորների համար գրույցների, հանդիպումների ու խորհըրդակցությունների ժամանակ հեղափոխության արմատական հարցի, սոցիալիստական պետության խնդիրների հարցի լուծական լուսաբանման համար: Դրան պետք է ավելացնել, որ նրա, արտաքուստ ոչ միշտ նկատելի, բայց գործնականում ամենաակտիվ մասնակցությունը բոլոր պետական գործերին՝ ամեն բանի մեջ դրսևորվում է յուրաքանչյուր քայլափոխում:

Հայտնի յե ընկ. Ստալինի բացառիկ դերը հենց Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միությունն ստեղծելու գործում:

Ամենից ավելի ընկ. Ստալինն է աշխատել ոչ–բավականաչափ միավորված խորհրդային հանրապետություններից իր քաղաքական միասնությամբ ամուր Խորհրդային Միություն ստեղծելու և նրա առաջին Սահմանադրությունը կազմելու վրա: Դրանով դրվեց հզոր խորհրդային պետության հիմքը, պետություն, որը հիմնված է խորհրդային ժողովուրդների մեծ բարեկամության վրա:

ԽՍՀՄ այժմյան Սահմանադրությունը ժողովրդի մեջ «Ստալինյան Սահմանադրություն» անունն է ստացել: Դրանով ոչ միայն նրա նախագիծը ստեղծողի անունն է նշված, այլ և ընդգծված է, թե Խորհրդային Միությունն ինչ դրոշի ներքո յե հասել այն մեծ հաղթանակներին, որոնք արձանագրված են մեր Սահմանադրության մեջ: Այդ Սահմանադրությունն ամրապնդեց բազմազգ Խորհրդային Միության մեջ մտնող ազգությունների դեմոկրատական լայն իրավունքները և, դրա հետ միասին, ամրապնդեց ԽՍՀՄ-ն, որպես մի միասնական սոցիալիստական պետություն, որն ամբողջ աշխարհի ժողովուրդների յեղբայրական համագործակցության նախապատկերն է հանդիսանում:



Պատահական չէ և այն, որ Հոկտեմբերյան Հեղափոխության հաղթանակից հետո ընկ. Ստալինը դարձավ ազգությունների գործերի ժողովրդական կոմիսար: Համագործակցություն, իսկ այդ նշանակում է նաև վստահություն ստեղծել այն ժողովուրդների միջև, որոնց մեջ ռուսները դարերի ընթացքում յեղել էին տիրապետող ազգ, իսկ մնացած բոլոր ազգությունները գտնվել էին ճնշման մեջ, իսկ յերբեմն էլ ուղղակի գաղութների վիճակում,—հեշտ գործ չէր: Ընկ. Ստալինը փայլուն կերպով գլուխ բերեց իր խնդիրը,—գլուխ բերեց մեծապետական շովինիզմի մնացուկների դեմ աննկուն պայքար մղելով, և հին Ռուսաստանում ճնշված ազգությունների ներկայացուցիչների մեջ համառ աշխատանք կատարելով ԽՍՀՄ բոլոր ժողովուրդների միջև վըստահություն ու բարեկամական հարաբերություններ ստեղծելու ուղղությամբ:

Այդ հնարավոր դարձավ, որովհետև ընկ. Ստալինը և՛ այդ գործում, և՛ ազգային հարցի լուծման մեջ լենինյան ուղիով էր ընթանում: Հեղափոխությունից դեռ շատ առաջ նա, Լենինի հետ միասին, տեսականորեն մշակեց ազգային հարցի սկզբունքային հիմունքները մարքսիզմի տեսակետից: Նրա «Մարքսիզմը և ազգային հարցը» բրոշյուրը (1913 թ.) իրավամբ մարքսիստական թեորիայի հիմնական աշխատությունների թվին է պատկանում: Այդ աշխատությունից յերևում է, որ արդեն այն ժամանակ նրա հեղինակը կազմավորված էր որպես մարքսիզմի խոշորագույն տեսաբան: Ուստի հասկանալի յե, որ մեր քաղաքականությունն ազգային հարցի ասպարեզում արդեն վաղուց հայտնի յե որպես «լենինյան–ստալինյան ազգային քաղաքականություն»:

Սրանից հետո հասկանալի յե, որ ոչ միայն կուսակցությունը, այլև մեր ամբողջ յերկրի ժողովուրդները հանձին ընկ. Ստալինի տեսնում են իրենց առաջնորդին—ԽՍՀՄ-ի առաջնորդին:

Լենինի ղեկավարությամբ ընկ. Ստալինը Հոկտեմբերյան ապստամբության, խորհուրդների իշխանության սկիզբը դնող ապստամբության գլխավոր կազմակերպիչն էր: Հոկտեմբերի հաղթանակից հետո ընկ. Ստալինը Կարմիր բանակի հիմնական կառուցողն էր, այն բանակի, որը քաղաքացիական պատերազմի հիմնական ճակատներում նրա անմիջական ղեկավարությամբ Խորհրդային պետության գոյությունը պաշտպանեց իմպերիալիստական տերությունների կողմից կազմակերպված ինտերվենցիայից: Անցած բոլոր տարիների ընթացքում նա յեղել է Կարմիր

բանակի հզորությունը, ԽՍՀՄ պետական անկախության վճռական յերաշխիքը հանդիսացող հզորությունն ամրապնդելու ամբողջ աշխատանքի վոգեշնչողը: Այս ամենի շնորհիվ մեր պետությունը վերջնականապես ամրապնդվեց, և նրա համար սարսափելի չեն արտաքին վոչ մի տեսակի վտանգություններ:

Ընկ. Ստալինի ղեկավարությամբ կուսակցությունն արդեն հիմնականում կառուցել է սոցիալիստական հասարակակարգը, վոր դեռ չեր կարողացել իրականացնել Լենինը—ԽՍՀՄ-ի հիմնադիրը: Ստեղծված է հզոր, անշեղորեն աճող ինդուստրիա, զինված հարուստ ու առաջավոր տեխնիկայով, և աճել են տեխնիկային տիրապետած մարդկանց կադրեր, վորոնք առաջ այնքա՜ն քիչ եյին և վորոնք հանձին ստախանովականների ու ստախանովյան գործը շարունակողների այժմ կազմում են հսկայական մի ուժ և ցույց են տալիս սոցիալիստական-գիտակցական աշխատանքի նորանոր հրաշքներ: Նոր հիմունքներով վերակառուցված է գյուղը՝ մանր տնտեսությունների իր նախկին ովկիանոսով—ստեղծված է կոլտնտեսային տնտեսություն իր հսկայական հնարավորություններով և բացված է գյուղատնտեսության բոլոր ճյուղերի հուժկու վերելքի ուղին: Արմատապես բարելավվել են բանվորների, գյուղացիների և ինտելիգենցիայի լայն խավերի կյանքի նյութական ու կուլտուրական պայմանները: Ժողովուրդների կուլտուրան, գիտությունը, գրականությունը, արվեստը, վորոնք ազատագրվել են նյութական կապանքներից և հարուստների զզվելի հաճոյակատարությունից, համաշխարհային պատմության մեջ առաջին անգամ հնարավորություն ստացան իրենց ստեղծագործությամբ լրիվ չափով ծառայելու ժողովրդին, ծառայելու նրա ազատ, յերջանիկ կյանքի ծաղկմանը:

Ո՞վ չգիտե, թե այդ բոլորի մեջ ինչպիսի վոգեշնչող ու կազմակերպող դեր խաղացին «ստալինյան հնգամյակները» և ընկ. Ստալինի անձնական նախաձեռնությունը ինչպես տնտեսական ու կուլտուրական շինարարության խոշորագույն գործերում, այնպես էլ «ընթացիկ» ամենօրյա գործերի և մեր կազմակերպությունների, կլիս մինչև ամենափոքր կազմակերպությունների աշխատանքը բարելավելու հոգատարության մեջ: Ընկ. Ստալինի նախաձեռնության և ակտիվ մասնակցության հետ է կապված քիչ թե շատ եյական այն ամենը, ինչ այս տարիների ընթացքում կուսակցությունն ու կառավարությունը կառուցել և կառուցում են ԽՍՀՄ-ում, սոցիալիզմի առաջին յերկրում:



Ընկ. Ստալինը բացառիկ կերպով շատ բան է արել ԽՍՀՄ-ը, վորպես մի բազմազգ՝ ազգային կուլտուրաների իր ծաղկումով պետության, ժողովուրդների յեղբայրական համագործակցությամբ ու բարեկամությամբ ամուր պետության ստեղծման ու աճման գործում: Այդպիսի պետության գոյության փաստն իսկ, ինչպես տնտեսապես, կուլտուրապես ու քաղաքականապես անշեղորեն աճող Խորհրդային Միությունը,—այդ փաստն իսկ կանխորոշում է կապիտալիստական աշխարհի վո՛չ-յերկարատև բախտը՝ ազգային թշնամության հրահրման իր քաղաքականությամբ և շատ ժողովուրդների համար գաղութային անտանելի ճնշումով, իր իմպերիալիստական վոճրագործ պատերազմներով, վորոնք ժողովուրդներին հոշոտում են հանուն բուրժուազիայի կառավարող շրջանների ագահ շահերի:

Ընկ. Ստալինի ղեկավարությամբ մենք հաղթականորեն ջախջախեցինք ժողովրդի թշնամիներին, մաքրեցինք ու կմաքրենք պետական ապարատը թշնամական, լրտեսական ու վնասարարական տարրերից: Հայտնի յե, վոր այդ կարգի միջոցառումները մեծապես բարելավում են մեր որգանների աշխատանքը, ճանապարհ են մաքրում աշխատողների թարմ, ազնիվ ու գիտակից կադրերի առաջքաշման համար, ամրապնդում են մեր պետությունը: Բոլշևիկյան զգաստությունը թշնամիների նկատմամբ, վորը կիրառվում է վոչ թե խոսքով, այլ գործով, մենք մեր ուժերի, մեր կուսակցության ու պետության մարտունակության և հասունության լավագույն ցուցանիշն ենք համարում:

Ընկ. Ստալինի նախաձեռնության և ղեկավար մասնակցության հետ են կապված նաև մեր բոլոր վորոշումները ներքին ու արտաքին քաղաքականության բնագավառում, վորոնք Խորհրդային Միության ժողովուրդների համար ապահովեցին հանգիստը, յերկարատև խաղաղությունը և ԽՍՀՄ-ի միջազգային հեղինակությունը:

Խորհրդային Միության մեջ սքանչելի մտերմություն է հաստատվել կոմունիստների և «անկուսակցական բոլշևիկների» միջև, վորոնց թիվն արագորեն աճում է ինչպես բանվորների ու գյուղացիների, այնպես և ինտելիգենցիայի մեջ: Այս է մեր կուսակցության մեծագույն հաջողություններից մեկը վերջին տարիների ընթացքում:

Մեծ մերձեցում է կատարվել նաև ԽՍՀՄ-ի ժողովուրդների միջև: Չնայած նրանց պատմական զարգացման ու կենցաղի միջև յեղած ամբողջ տարբերությանը, սոցիալիզմի հաղթանակը և

ԽՍՀՄ-ում սոցիալիստական հասարակության հիմքերի ստեղծումը, հասարակություն, վորն ազատագրված է մարդու կողմից մարդու դարավոր շահագործումից և հնարավորություն է տալիս ճիշտ կերպով զուգակցելու ժողովուրդների շահերը նրանց տնտեսական ու կուլտուրական ընդհանուր վերելքի գործում,— ապահովում են բոլորի աչքի առաջ աճող յեղբայրական մերձեցումը խորհրդային ժողովուրդների միջև և անսահմանափակ հնարավորությունները ԽՍՀՄ-ի հետագա հաջողությունների համար:

Մեր հասարակության բարոյական-քաղաքական միասնությունը, հասարակություն, վորի մեջ յուրաքանչյուր ժողովուրդ ազատ է իր կյանքը կառուցելու գործում և բոլոր ժողովուրդները միասին ոգնում են միմյանց՝ անշեղորեն առաջ ընթանալու դեպի ԽՍՀՄ-ի ժողովուրդների յերջանիկ կյանքը,—այս է Լենին—Ստալինի կուսակցության ղեկավարությամբ մեր յերկրի աճման ու վերափոխման փառավոր արդյունքը: Ժողովուրդների այդ միասնության առաջնորդն ու դրոշը, ԽՍՀՄ-ի ժողովուրդների առաջնորդը, ինչպես այդ գիտեն ամբողջ աշխարհի աշխատավորները, Լենինի գործի մեծ շարունակողը—մեր Ստալինն է, վորի շուրջն են համախմբված մեր կուսակցությունը, խորհրդային ժողովուրդները և այն ամենը, ինչ լավագույն է համաշխարհային ազատագրական շարժման մեջ:

* *
*

Բոլշևիզմի առաջնորդի մեջ, ԽՍՀ Միության ժողովուրդների առաջնորդի մեջ բոլոր յերկրների բանվորները, բնականաբար, տեսնում են նաև համաշխարհային կոմունիզմի առաջնորդին: Այդ բանում ես ընկ. Ստալինը Լենինի արժանավոր շարունակողն է:

Խորհրդային Միությունը կենսագործեց կոմունիզմի ուսմունքը: ԽՍՀՄ-ն իր հենց գոյության փաստով, նոր հասարակակարգի լիակատար հաղթանակի համար իր մղած պայքարի հաջողություններով անսահման շատ բան է արել կոմունիզմի գործի համար: Այդ՝ բոլորից ավելի լավ հասկանում է ընկ. Ստալինը, վորը չգիտե հոգնածություն այնտեղ, վորտեղ խոսքը վերաբերում է ԽՍՀՄ-ի նորանոր հաջողություններն ապահովելուն:

Կոմունիստները հաճախ ստիպված են լինում հաղթահարելու մեծ դժվարություններ, վորպեսզի գտնեն լուծումը և բացատրեն մասսաներին այս կամ այն նոր շրջադարձը անցք ունեցող իրադարձությունների մեջ, քանի վոր կապիտալիստական հասարա-



կությունն իրեն է ծառայեցնում ամեն բան և բոլորին՝ թաքցնելու կամ համենայն դեպս խեղաթյուրելու համար իրեն «անհաճո» և հետզհետե աճող իրադարձությունների իմաստը: Մեծ դժվարությամբ, հակառակ անհամար դժվարությունների, կոմունիզմի ուսմունքը ուղի յե հարթում իր համար դեպի առաջ, դեպի լիակատար հաղթանակ:

Այդպես եր այնքան ժամանակ, մինչև վոր մեր ժողովուրդն իր համար յելք բացեց դեպի նոր կյանքը և մինչև վոր նա, վորպես առաջավոր ջոկատ ժամանակակից ժողովուրդների մեջ, կատարեց Հոկտեմբերյան հեղափոխությունը և կառուցեց սոցիալիստական հասարակակարգը ի փառս և հուրախություն ամբողջ աշխարհի աշխատավորների ու ճնշվածների: Այդ ժամանակից սկըսած դրությունն արմատապես փոխվեց: Այդ ժամանակից սկսած արագորեն աճում է կոմունիզմի ամբողջ գործի հուսալի բազան և, վոր գլխավորն է, բանվոր դասակարգի մեջ և աշխատավորների ու կապիտալի կողմից ճնշվածների ամբողջ մասսայի մեջ անշեղ հասունանում է իր մոտալուտ հաղթանակի հավատը:

Խորհրդային Միությունն իր ամբողջ զարգացումով, ուժերի աճումով և աշխատավորների համար լուսավոր կյանք կառուցելու իր անսահման հնարավորություններով ցույց է տալիս, թե ինչն է կոմունիզմի ուժը, վո՛րն է աշխատավորների լիակատար հաղթանակի ուղին: Խորհրդային Միությունն ակնառու կերպով ցույց է տալիս սոցիալիստական հասարակակարգը կազմակերպող ուժի—բոլշևիկյան կուսակցության մեծ նշանակությունը և նրա մեծ առաջնորդների—Վ. Ի. Լենինի և Ի. Վ. Ստալինի ստեղծագործական աշխատանքի նշանակությունը:

Լենինը բոլշևիկյան կուսակցության, սոցիալիստական հեղափոխության, Խորհրդային Միության առաջնորդն եր: Ընկ. Ստալինը Վ. Ի. Լենինի մեծ գործերի արժանավոր շարունակողն է: Ահա՛ թե ինչու յե ընկ. Ստալինը շրջապատված աշխատավորների այնպիսի վստահությամբ ու սիրով:

Կ. ՑԵ. ՎՈՐՈՇԻԼՈՎ.

# ՍՏԱԼԻՆԸ ՅԵՎ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Կարմիր բանակը, բոլշևիկների կուսակցության հետ միասին, Խորհրդային Միության բոլոր ժողովուրդների հետ միասին, այսոր տոնում է մեծ Ստալինի 60-ամյակը:

Ստալինը վոչ միայն բոլշևիզմի և խորհրդային իշխանության մարմնացումն է, այլ այդ—հաղթանակած սոցիալիզմի անունն է, վորը վոգեշնչում է մեր ժողովրդին հերոսության համար, ստեղծագործական աշխատանքի և խիզախության համար, այդ—ամբողջ աշխարհի աշխատավորների հույսերի, իղձերի և հեռանկարների անունն է: Ստալինը միջազգային անուն է, վորը մարդկության բարձր գաղափարների համար մղվող պայքարի դրոշ է դարձել:

Դրա հետ միասին, այդ—Կարմիր բանակի անունն է: Հաղթանակած սոցիալիզմի զինված պաշտպանությունը, Խորհրդային Միության Կարմիր բանակի շինարարությունը, նրա պատմությունը, նրա ուժը և հզորությունը, նրա համախմբված և պողպատե շարքերը, նրա տեխնիկան և հերոսական կադրերն անխզելիորեն կապված են Ստալինի անվան հետ:

Չի կարելի անջատել խորհրդային պետության զինված ուժերի պատմությունը և շինարարությունը Ստալինից: Չի կարելի խոսել և գրել Ստալինի մասին՝ առանց խոսելու և գրելու Կարմիր բանակի հերոսական պատմության և հերոսական մարտերի մասին ճիշտ այնպես, ինչպես չի կարելի խոսել և գրել Կարմիր բանակի մասին՝ առանց խոսելու և գրելու Ստալինի մասին, վորը սերտորեն համագործակցելով Լենինի հետ՝ կոփում եր Կարմիր բանակի հիմքերը դեռ նրա սաղմնավորման որորանի մոտ:

Ահա թե ինչու այսոր, յերբ մեր ամբողջ յերկիրը սիրո և յերախտագիտության միասնական թափով նշում է ընկեր Ստալինի ծննդյան հոբելյանական թվականը, բոլոր մարտիկները, հրամանատարները, կոմիսարները, քաղաշխատողները,—բոլոր մարդիկ, վորոնք կազմում են խորհրդային պետության զինված ուժերը,

մեծ յերախտագիտության զգացմունքով և բերկրանքով վողջունում են իրենց մեծ Ստալինին:

Ստալինի մասին՝ Կարմիր բանակի ստեղծողի, նրան վոգեշնչողի և հաղթանակները կազմակերպողի մասին, պրոլետարական հեղափոխության ստրատեգիայի և տակտիկայի որենքների հեղինակի մասին գրվելու յեն շատ հատորներ:

Մենք, նրա ժամանակակիցներս և զինակիցներս, կարող ենք տալ միայն մի քանի գծեր նրա հսկայական և բեղմնավոր ռազմական աշխատանքի մասին:

Ստալինը՝ վորպես մարքսիստ-լենինյան, դարձավ Անդրկովկասյան բոլշևիկյան կազմակերպությունների ղեկավարող դեմքը 1905 թվականի առաջին բուրժուական հեղափոխությունից բավական առաջ: Նա, վորպես իսկական մարքսիստ և բոլշևիկ, դեռ այն ժամանակ իսկական լենինյան ամբողջ կրքոտությամբ պայքարում եր բոլշևիկյան կուսակցության հիմնական սկզբունքներից մեկի՝ զինված ապստամբության իրականացման համար: Միմիայն իսկական բոլշևիկը, լենինյանը, պրոլետարական հեղափոխության հաղթանակների հեռատես կազմակերպողը և ստրատեգը, Ստալինը 1905 թվին, յերբ մենշևիկների կատաղի դիմադրության և հակազործողությունների պայմաններում դեռ նոր եր սկսված բանվորական դրուժինաների կազմակերպման աշխատանքը ցարիզմի դեմ զինված պայքարի համար, կարող եր ասել.

«Վո՞ր հեղափոխությունը կարող է հաղթանակել առանց զենքի և ո՞վ է այն հեղափոխականը, վորն ասում է՝ կորչի՛ զենքը: Այն հռետորը, վորն ասում է այդ, յերևի տոլստոյական է, և վոչ թե հեղափոխական, և ով էլ վոր լինի նա՝ հեղափոխության, ժողովրդի ազատության թշնամին է... Ի՞նչ է հարկավոր իսկապես հաղթանակելու համար: Դրա համար հարկավոր է յերեք բան,—առաջինը՝ մեզ հարկավոր է զինվել, յերկրորդը՝ զինվել, յերրորդը՝ նորից և նորից զինվել»:

(Միտինգ Թիֆլիսում 1905 թվականի մանիֆեստի հայտարարման որը):

1917 թվին, բուրժուական հեղափոխության պահից սկսած, Լենինը հանձին ընկեր Ստալինի՝ արդեն ուներ պրոլետարիատի և գյուղացիական աշխատավոր մասսաների մարտական ուժերի հիանալի կազմակերպող:

Լենինի հետ միասին Ստալինը բացառիկ պարզորոշությամբ,



հաստատուն ձեռքով նախապատրաստեց Հոկտեմբերյան զինված գրոհը և անմիջականորեն ղեկավարում եր մեծ հեղաշրջման բոլոր ոպերացիաները, ջոկատ ջոկատի հետևից ուղարկելով լենինյան պլանով նշված պայքարի կետերը, գուշակելով դասակարգային հակառակորդի մանյովրները, կործանիչ, մահացու հարվածներ հասցնելով նրան:

Քաղաքացիական պատերազմի տարիներին, սովի և աղքատության պայմաններում, դասակարգային պայքարը մինչև նրա կուլմինացիոն մակարդակը բարձրանալու և նյութական բազայի ու սպառազինության համարյա բացակայության պայմաններում, Ռուսաստանի բանվոր դասակարգի սարսափելի հոգնածության և համաշխարհային իմպերիալիստական բուրժուազիայի կողմից ներքին հակահեղափոխությանը լայն կերպով աջակցելու պայմաններում, ընկեր Ստալինը, Լենինի հետ միասին, հանդիսանալով նրա աջ ձեռքը, քայլ առ քայլ, ստալինյան մեթոդականությամբ դնում է սոցիալիզմի զինված պաշտպանության՝ Կարմիր բանակի հիմքը, ի մի յե հավաքում նրա մարտական շարքերը:

Մեր Ստալինի ծառայությունների մեծությունը պատմության այդ հերոսական եպոպում հենց նրանումն է կայանում, վոր բանակը, վորպես կազմակերպված մարտական ուժ, ստեղծվում եր նրա ամուր ձեռքով, հաղթանակի համար մղվող պայքարի բուն պրոցեսում: Պայքարը, վորը իր հաղթանակի համար դեռ պահանջում եր կազմակերպված ռազմական ուժեր, ինքն եր ոգտագործվում Ստալինի փորձառու ձեռքում՝ վորպես կազմակերպող, ստեղծարար գործոն:

Մեր հեղափոխության հերոսական պատմության եջերում, վոր նվիրված են քաղաքացիական պատերազմին, վոսկե տառերով գրվելու յե Ստալինի անունը՝ վորպես հաղթանակած սոցիալիզմի զինված ուժերի կազմակերպողի և ստեղծողի:

«Կամ մենք կստեղծենք իսկական բանվորա-գյուղացիական, առավելապես գյուղացիական, խիստ կարգապահ բանակ և կպաշտպանենք հանրապետությունը, կամ կկորչենք»,—

ասել է Ստալինը մեր կուսակցության VIII համագումարում:

Այս խոսքերն ասվել են 1919 թվի մարտին, այսինքն՝ այն ժամանակ, յերբ մոլեգնող հակահեղափոխությունը դեռ չեր հասել իր զենիթին, յերբ Կոլչակները, Դենիկինները, Յուդենիչները և

Միլլերները, վորոնք առատորեն ուժ եյին առել արտասահմանյան իմպերիալիստական բուրժուազիայի վոսկով, իրենց հրոսակախմբերով արևելքից և արևմուտքից, հարավից և հյուսիսից սողոսկում եյին դեպի պրոլետարական հեղափոխության կենտրոնը՝ դեպի նրա սիրտը՝ Մոսկվան:

Ստալինի բերանով տրվել է նաև այն ժամանակաշրջանի Կարմիր բանակի դրության գնահատականը և նշվել է իսկական կարգապահ Բանվորա-Գյուղացիական Կարմիր բանակի ստեղծման հեռանկարը, բանակ, վորը պետք է հաղթեր հակահեղափոխության՝ ցարական գեներալիտետի կողմից ղեկավարվող բոլոր բազմաթիվ զորքերին:

Այդպիսի բանակ մենք ստեղծեցինք, ստեղծեցինք շնորհիվ այն բանի, վոր Լենինը, Ստալինի հետ միասին, անձնապես ղեկավարեցին այն ժամանակվա համար այդ դժվարին գործը, ղեկավարեցին և տիտանական աշխատանքով մինչև վերջը հասցրին այն:

Քաղաքացիական պատերազմի տարիներին Ստալինի հզոր կամքը, պողպատի նման ամուր ստալինյան ձեռքը, բացառիկ սառնասրտությունը և անսասանությունը իրադրության բոլոր պայմաններում, պահանջկոտ վերաբերմունքը իր և շրջապատողների նկատմամբ, միաժամանակ մարդկանց վերաբերյալ բացառիկ հոգատարությունը—վոգեշնչում եյին մեր բանակի մարտիկներին, հրամանատարներին, կոմիսարներին և քաղաշխատողներին՝ հերոսության, սխրագործությունների և խիզախության համար, և նա հաղթանակում եր ու հաղթանակելով աճում, ամրապնդվում և կազմավորվում եր, դառնալով անխորտակելի ուժ, վորը պաշտպանեց խորհրդային յերկիրը նրա բոլոր թշնամիներից:

Վոմանք այդ հիման վրա Ստալինին համեմատում են պատմության մեջ մտած մեծ զորավարների հետ:

Այդպիսի համեմատությունը քննադատության չի դիմանում: Լենինին և Ստալինին չի կարելի համեմատել վոչ մի զորավարի հետ, թեև նրանք յերկուսն էլ հանդիսանում են պայքարող մարդկային հսկայական մասսաների, վորոնց թվում նաև դեղաչար զորական միավորումների մեջ կազմակերպված և պայքարի ժամանակակից միջոցներով զինված մասսաների մեծագույն առաջնորդները:

Ստալինը, պատերազմի հարցի մասին մարքսիստական ըմ–



բռնման հիման վրա՝ ձևակերպել է պրոլետարական ստրատեգիայի և տակտիկայի նոր թեորիայի սկզբունքները:

Ահա թե ինչպես է ձևակերպել նա պրոլետարական ստրատեգիայի հիմնական սկզբունքները.

«Ստրատեգիայի կարևորագույն խնդիրը հանդիսանում է այն հիմնական ուղղության վորոշումը, վորով պետք է ընթանա բանվոր դասակարգի շարժումը, և վորի վրա պրոլետարիատի համար ամենից ավելի նպաստավոր է հիմնական հարվածը հասցնել հակառակորդին՝ ծրագրով առաջադրված նպատակներին հասնելու համար: Ստրատեգիայի պլանը—այդ պլան է՝ վճռական հարվածի կազմակերպման համար այն ուղղությամբ, վորով հարվածն ավելի շուտ կարող է տալ առավելագույն արդյունքներ...»:

«Այլ կերպ ասած՝ վորոշել հիմնական հարվածի ուղղությունը—այդ նշանակում է կանխորոշել գործողությունների բնույթը պատերազմի ամբողջ ժամանակաշրջանի ընթացքում, այդ նշանակում է $^{9}/_{10}$-րդի չափով կանխորոշել ամբողջ պատերազմի բախտը: Դրանումն է ստրատեգիայի խնդիրը»:

(Ի. Ստալին, «Ռուսական կոմունիստների ստրատեգիայի և տակտիկայի հարցի շուրջը»):

Ստալինը յերջանիկ կերպով իր մեջ զուգակցում է պրոլետարական հեղափոխության մեծ ստրատեգին և փայլուն տակտիկին, վորը մարքսիստորեն, դիալեկտիկորեն կիրառում եր դասակարգային պայքարի ստրատեգիայի և տակտիկայի որենքները պատերազմական իրականության, հեղափոխության զինված ուժերի պայքարի նկատմամբ:

«Տակտիկան,—ասում է Ստալինը,—ստրատեգիայի մի մասն է, վորը յենթարկված է նրան, սպասարկում է նրան: Տակտիկան գործ ունի վոչ թե պատերազմի հետ ամբողջությամբ, այլ նրա առանձին եպիզոդների, մարտերի, ճակատամարտերի հետ: Յեթե ստրատեգիան աշխատում է շահել պատերազմը կամ մինչև վերջը հասցնել, ասենք, պայքարը ցարիզմի դեմ, ապա տակտիկան, ընդհակառակը՝ ձգտում է շահել այս կամ այն ճակատամարտը, այս կամ այն մարտը, հաջողությամբ մղել այս կամ այն կամպանիան, կազմակերպել այս կամ այն յելույթները, վո–

րանք քիչ թե շատ համապատասխանում են պայքարի կոնկրետ իրադրությանը՝ յուրաքանչյուր տվյալ մոմենտին:

Տակտիկայի կարևորագույն խնդիրն է հանդիսանում պայքարի այն ուղիների ու միջոցների, այն ձևերի ու յեղանակների վորոշումը, վորոնք ամենից ավելի յեն համապատասխանում կոնկրետ իրադրությանը տվյալ մոմենտին, և ամենից ավելի հաստատուն կերպով են նախապատրաստում ստրատեգիական հաջողությունը: Այդ պատճառով տակտիկայի գործողությունները, նրանց արդյունքները պետք է գնահատվեն վո՛չ թե իրենք իրենց, վո՛չ թե անմիջական եֆեկտի տեսակետից, այլ ստրատեգիայի խնդիրների և հնարավորությունների տեսակետից»: (Նույն տեղում):

Այն կարևորագույն ոպերացիաների ուսումնասիրությունը, վորոնք ընդհանրացնում են մեր հաջողությունը և հաղթանակը քաղաքացիական պատերազմում, ստալինյան մոտեցումների ուսումնասիրությունը և նրանց իրականացման մեթոդների ուսումնասիրությունը, պարզ կերպով բացահայտում են ստալինյան ստրատեգիայի և տակտիկայի առանձնահատկությունները:

Ահա մի քանի օրինակ քաղաքացիական պատերազմից, վորոնք լուսաբանում են այդ առանձնահատկությունները:

Հրաման տալով Դենիկինի դեմ Որյոլի և Վորոնեժի ուղղությամբ հարված կազմակերպելու մասին, ընկեր Ստալինը հրամանատարներից կատեգորիկ կերպով պահանջում եր՝

«Դրված խնդիրների կատարման ժամանակ վոչ թե առաջ խաղալ գծերով, այլ կենտրոնացած ուժերով թեվային հարվածներ հասցնել հակառակորդի գլխավոր ուժերին, ուժեր, վորոնք գործում են կարևորագույն ուղղություններով, նկատի ունենալով, վոր հաջողություն կարելի յե ձեռք բերել միայն մանյովրի միջոցով: Հատուկ ուշադրություն եմ հրավիրում հակառակորդի թևին ու թիկունքին հարվածներ հասցնելու համար հեծելազորի նպատակահարմար ոգտագործմանը, հեծելազորը կենտրոնացնելով թևերում յեղած խոշոր միավորումներում, այդպիսով միևնույն ժամանակ ապահովելով զորամասերի միացումները»:

(Դիրեկտիվ № 10726, 1919 թ. հոկտեմբերի 9):

Իսկ նրանից հետո, յերբ Որյոլը և Վորոնեժը մեր կողմից վերադարձված եյին, ընկեր Ստալինը հիշեցնում է.



«Պնդում եմ իմ ասածները բոլոր հրամանատարներին. Հիշելով Որյոլի և Վորոնեժի տակ մեր ձեռք բերած հաջողությունների պայմանները, չցրել ուժերը, այլ խփել ընտրած ուղղությամբ, կենտրոնացած կերպով, բռունցքով, նեղ ճակատով, չեչտակի և վճռականորեն: Շարունակ հաստատուն կապ պահպանել իր զորամասերի և հարևանների հետ»:

(Դիրեկտիվ № 11144, 1919 թ. հոկտեմբերի 20):

1919 թվի նոյեմբերի 24-ի հեռագրում, վոր ստորագրված է յեղել ընկեր Ստալինի կողմից, սահմանագատման գծերի առթիվ բանակի բոլոր հրամանատարներին տրվում է ոպերատիվ արվեստի տեսակետից կարևորագույն պարզաբանում.

«Միանգամայն համաձայն լինելով այն բանի հետ, վոր զորքերը պետք է վերացնեն արմունկային կապի վնասակար սովորությունը և սովորեն իրենց թևերն ապահովել սեփական միջոցներով, գտնում եմ, վոր այդ պետք է պատվաստվի զորքերի և գլխավորապես բարձր պետերի ուսուցմամբ և դաստիարակությամբ, և վոչ թե սահմանագատման գծերի անհրաժեշտության լիակատար բացառմամբ... Գլխավոր սովորությունը, վոր պետք է վերացնեն զորքերը— այդ իրենց թևերում յեղած բաց տարածություններից վախենալն է: Սերտ կապ պահպանելով հարևանների հետ, հարկավոր չէ ձգտել արմունկային կապի, գործելով հնարավորին չափ ավելի կենտրոնացած բռունցքներով՝ կարևորագույն ոպերացիոն ուղղությունների վրա: Իսկ սահմանագատման գծերն անհրաժեշտ են՝ զորամասերին ցույց տալու համար իրենց գլխավոր հիմնական ուղղությունը, ինչպես նաև թիկունքային հիմնարկությունների դասավորությունն ու շարժումը կարգավորելու համար...»:

(Հեռագիր № 678/ոպ):

Դենիկինի ջախջախման ստալինյան պլանը չի կապվում, որինակ, ամենակարճ ոպերատիվ ուղղությունների վորոշման թվաբանական հաշվումների հետ:

Գլխավոր հարվածը հարավային ճակատի կողմից բանվորական Խարկովի և շախտյորական Դոնբասի վրայով Ռոստովին հասցնելու ստալինյան պլանը, վորը հաշվի յե առնված Ուկրաինայի և Դոնբասի բանվոր դասակարգի կողմից Կարմիր բանակին

համակրանք և ուղղակի աջակցություն ցույց տալու հիման վրա, առաջին հերթին վկայում է այն մասին, որ Ստալինը հանդիսանում է ոչ միայն պարզապես զորավար, ստրատեգ՝ այդ բառի սովորական իմաստով, այլ նա հանդիսանում է պրոլետարական հեղափոխության զորավար և ստրատեգ, որի տրամադրության տակ կան ոչ միայն այն զինված ուժերը, որոնք նա ունի անմիջականորեն, այլ նաև մարդկային հսկայական պոտենցիալ ռեսուրսներ, որոնք զոհվում են գլխավոր ստրատեգիական ուղղության ճանապարհին: Ահա այս ռեզերվները, թեև ամենածանր պայմաններում, զարգացող պրոլետարական հեղափոխության այդ վիթխարի պոտենցիան լրիվին և անսխալ կերպով հաշվի յեր առնում Ստալինի ստրատեգիական հանճարն իր նշանավոր պլանում:

Դրա հետ միասին Ստալինը շարունակ իր պլաններում հաշվի յեր առնում հակառակորդի պոտենցիալ ռեզերվները: Ավելի լավ պատկերացնելու համար կբերեմ ընկեր Ստալինի կողմից 1920 թվի հունիսի 17-ին հեծյալ բանակի Ռազմա-Հեղափոխական Խորհրդին ուղղած նամակից քաղվածքներ.

«Բարեկամնե՛րս:

Ընդունեցեք ի գիտություն հետևյալ հանգամանքները.

Լեհական զորամասերին կից սովորաբար լինում են յեվրոպական պետությունների... զինվորական միսսիաներ: Միսսիաների անդամները հանդիսանում են լեհական զորամասերի փաստական ղեկավարները, այդ պատճառով հարկավոր է նրանց (հնարավորության դեպքում)—անպայման ձերբակալել և հուսալի պահակախմբով ուղարկել ճակատի Ռազմա-Հեղափոխական Խորհուրդը:

Լեհերի կողմից գրավված քաղաքներում սովորաբար լինում են ամեն տեսակ կարմիր խաչեր... Այս հիմնարկությունները հանդիսանում են լեհական լրտեսության ոջախներ: Նրանց նույնպես հարկավոր է ձերբակալել և ուղարկել նույն տեղը:

Լեհերը հեռանալիս՝ զենքեր են թողնում կուլակներին՝ հետագայում մեր զորքերի թիկունքում բանդիտիզմը զարգացնելու նպատակով: Այդ պատճառով անհրաժեշտ է, որ մեր զորամասերն իրենց առաջխաղացման ժամանակ բնակչությունից հավաքեն զենքերը, անպայման զինաթափ անեն նրան:



Ներշնչեցեք հրամանատարներին, կոմիսարներին, ինչպես նաև առանց բացառության բոլոր մարտիկներին, որ մենք առաջ ենք գնում չարքաշ գյուղացուն լեհական պանից ազատագրելու համար, որ մեր պատերազմն ազատագրական պատերազմ է...

Խնամքով վերաբերվեցեք դեպի Գալիցիայից բերված ռազմական գերի-ուկրաինացիները (ռուսները), ո՛չ միայն դեպի գյուղացիները, այլև դեպի ինտելիգենտները, ներշնչեցեք նրանց, որ յեթե Լեհաստանի կողմից ճնշվող գալիցիական ուկրաինացիները պաշտպանեն մեզ, մենք կգնանք դեպի Լվով, որպեսզի ազատագրենք այն և տանք գալիցիական ուկրաինացիներին, դուրս վռնդենք այնտեղից լեհերին և ոգնենք ճնշված գալիցիական ուկրաինացիներին ստեղծելու համար նրանց անկախ պետությունը, թեկուզ նույնիսկ ոչ խորհրդային, սակայն ՌՍՖՍՀ-ի նկատմամբ բարենպաստ (բարյացակամ, բարեկամական) պետություն...»:

Արևելյան ճակատում Պերմի մոտ ստեղծված ճեղքվածքը ծածկելու, յերրորդ բանակի ուժերի կոնսոլիդացիայի և նրա՝ Կոլչակի դեմ հարձակման անցնելու ստալինյան պլանը,—մի պլան, վորը կառուցված է բացառապես ուրալյան իրադրությունը և թիկունքի նշանակությունը հաշվի առնելու վրա, նույնպես ասում է Ստալինի՝ վորպես նոր տիպի ստրատեգի մասին, ստրատեգ, վորը քաղաքական և պատերազմական ամենաբարդ իրադրության մեջ կարողանում է գտնել կարևորագույն ողակը, վորպեսզի իր ձեռքում պահի հարկ յեղած ուղղությամբ ծավալվող իրադարձությունների ամբողջ շղթան և լրիվին հասնի դրված նպատակին: Ստալինի «պերմյան» նկատառումները, ըստ գործի էության, նոր գիտություն է թիկունքի ծառայության մասին:

Ստալինի ռազմական ստրատեգիայի և տակտիկայի սկզբունքները սերտ կերպով, և հետևաբար փայլուն կերպով ձևակերպված են նրա կողմից «Համկ(բ)Կ պատմության համառոտ դասընթացի» մեջ՝ թե ինչո՞ւ հաղթեց Կարմիր բանակը հարցի պատասխանում:

Ընդամենը յերեք եջի վրա տեղավորված է հաղթանակած սոցիալիստական հեղափոխության ստրատեգիայի և տակտիկայի ամբողջ փիլիսոփայությունը:

Միմիայն նա, Ստալինը, Լենինի մերձավորագույն զինակիցը

և պրոլետարական հեղափոխության ու նրա զինված ուժերի ան-
միջական կազմակերպողն ու առաջնորդը կարող է այդպես փայ-
լուն կերպով և այդպիսի առավելագույն պարզությամբ ձևակեր-
պել մեր ռազմա-ստրատեգիական և տակտիկական հաղթանակնե-
րի պատճառները:

Ստալինի ռազմական ստրատեգիան և տակտիկան բոլոր ար-
մատներով գնում է դեպի Մարքսի—Էնգելսի—Լենինի քաղաքա-
կան, դասակարգային ստրատեգիան և տակտիկան:

Եվ ինչպես կարելի յե այդ դեպքում համեմատել Ստալինին
հայտնի, թեկուզ և ականավոր զորավարների հետ, վորոնք մտել
են ռազմական արվեստի պատմության մեջ:

Ստալինը տվեց պետության մասին նոր ուսմունքը կապիտա-
լիստական շրջապատման իրադրության մեջ, հիմնավորելով պետու-
թյան և նրա հիմնական որգանի՝ մշտական բանակի պահպանման
անհրաժեշտությունը կոմունիզմի ժամանակ, յեթե մեր յերկի-
րը շրջապատված լինի կապիտալիստական պետություններով:

Բացահայտելով սոցիալիստական պետության ձևերի և
ֆունկցիաների փոփոխությունները կապիտալիստական շրջապատ-
ման ժամանակ, Ստալինը միաժամանակ տալիս է մեր յերկրում
հաղթանակած սոցիալիզմի պետության զինված ուժերի զարգաց-
ման նոր հեռանկարները:

Մինչև այժմ, որինակ, մարքսիստները հաղթանակած սո-
ցիալիզմի բանակի կոմպլեկտավորման միլիցիոն-տերիտորիալ
սկզբունքը շարունակ համարել են առավել ճիշտ կազմակերպա-
կան սկզբունքը: Էնգելսը, որինակ, 1845 թվի փետրվարին
գրել է.

«Կոմունիստական հասարակության մեջ վոչ վոքի մըտ-
քով չի անցնի մտածել մշտական բանակի մասին: Յեվ ինչ
կարիք կա: Յերկրի ներքին խաղաղության պահպանմա՞ն
համար: Սակայն մենք տեսանք, վոր վոչ վոքի մտքով ան-
դամ չի անցնի խախտել այդ ներքին խաղաղությունը: Հե-
ղափոխությունից վախենալը չէ՞ վոր շահերի հակադրու-
թյան արդյունք է միայն. այնտեղ, վորտեղ բոլորի շահե-
րը համընկնում են միմյանց հետ, այնտեղ խոսք անգամ չի
կարող լինել նման յերկյուղների մասին»:

(Մարքս և Էնգելս: Յերկեր, հատ. III, եջ 277—278):

Էնգելսը յելնում եր այն բանից, վոր սոցիալիզմի հաղթա-



նակը կառաջանա բոլոր քաղաքակրթված յերկրներում միաժամա-
նակ, այն դրությունը, վորի մեջ ընկել է մեր՝ աշխարհում մի-
ակ սոցիալիստական պետությունը, Էնգելսը չի կանխատեսել:

Սոցիալիզմի ժամանակ բանակի նկատմամբ Էնգելսի ունեցած
տեսակետի վրա յե կանգնած յեղել իր ժամանակ նաև մեր կու-
սակցությունը: Կուսակցության ծրագրի և կուսակցության մի
շարք համագումարների վորոշումների մեջ ընդգծվել է մշտական
բանակը համաժողովրդական սոցիալիստական միլիցիայի վերա-
ծելու հենց այդ հարցադրումը: Այդպիսի հարցադրումն իր ժա-
մանակ թեորիապես ճիշտ է յեղել: Խորհրդային պետության
կյանքի առաջին ժամանակներում մենք չեյինք կարող հաշվի առ-
նել նրա զարգացման շատ պայմանները, և հատկապես՝ կապի-
տալիստական յերկրների շրջապատման մեջ գոյություն ունենա-
լու պայմանները:

Միմիայն Ստալինը, վորը տվել է սոցիալիստական պետու-
թյան խնդիրների և վիճակի սպառիչ բնութագրությունը, միա-
ժամանակ տվել է նաև զինված ուժերի, այդ թվում նաև կապի-
տալիստական շրջապատման ժամանակ մեր յերկրում կոմունիս-
տական հասարակության զինված ուժերի, զարգացման պարզորոշ
հեռանկարը:

Վորքանով վոր խորհրդային պետության դեռ ծայրն ուղղ-
ված է կապիտալիստական շրջապատումից ինքնապաշտպանվելու
կողմը, այնքանով ել ավելի կաճի պետության զինված ուժերի
դերը: Ըստվորում՝ ժամանակակից տեխնիկայի բացառիկ հզո-
րությունը, այդ տեխնիկային տիրապետելու դժվարությունը,
ռազմական ուսուցման ամբողջ սիստեմի բարդացումն այն պայ-
մաններում, յերբ պատերազմները ներկայումս չեն հայտարար-
վում, այլ հանկարծակի սկսվում են,—տվյալ եապում կարմիր
բանակի կոմպլեկտավորման տերիտորիալ-միլիցիոն սիստեմն ան-
համապատասխան են դարձնում մեր պաշտպանության շահերին և
խնդիրներին: Այստեղից՝ նախկին դրույթների հնացած լինելը,
կոմպլեկտավորման կադրային սիստեմի անցման անհրաժեշտու-
թյունը, հաշվի առնելով յերկրի տնտեսական և քաղաքական զար-
գացման բոլոր առանձնահատկությունները:

Այդ նոր խնդիրներից և պայմաններից է յելնում ընդհանուր
զինվորական պարտականության նոր որենքը, մի որենք, վորի
ստեղծման վրա այնքան շատ է աշխատել ընկեր Ստալինը:

Խորհրդային պետության զինված ուժերի շինարարության

հանգուցային հարցերը, սկսած նրանց ծնունդ առնելու պահից, հանդիսացել են կադրերի, բանակի տեխնիկական հագեցվածության և կազմակերպական հարցերը:

Հրամանատարական-քաղաքական կադրերը, ինչպես սովորեցնում է ընկեր Ստալինը, բանակի ողնաշարն են, հիմքն են, նրանք են վճռում բանակի մարտունակությունը:

Կարմիր բանակի և նավատորմի գոյության ավելի քան 20 տարվա ընթացքում Կարմիր բանակի հրամանատարական-քաղաքական կադրերի պրոբլեմի լուծմանը բացառիկ ուշադրություն է նվիրել և նվիրում է Ստալինը: Նրա հոգատարությունը կուլտուրական, կամքի տեր և սոցիալիզմի գործին նվիրված սեփական հրամանատարի, կոմիսարի և քաղաշխատողի ստեղծման նկատմամբ, վորոնք ընդունակ են ղեկավարելու ժամանակակից տեխնիկայով առատորեն հագեցված զորքերը, վորոնք կարողանում են ճիշտ կերպով դաստիարակել նրանց, բխում է ընդհանրապես կադրերի հարցի նրա խոր դրույթից:

«Կադրերն են վորոշում ամեն ինչ» իր նշանավոր լոզունգը Ստալինը ձևակերպեց 1935 թվին, զինվորական ակադեմիաների ունկնդիրների թողարկման ժամանակ:

«... Յեթե մեր բանակը,—ասաց նա այն ժամանակ,—բավականաչափ քանակով իսկական կոփված կադրեր ունենա, նա անպարտելի կլինի»:

Բանակի համար «բավականաչափ քանակով կոփված կադրեր» ստեղծելու պրոբլեմի լուծման ուղիներում իր ժամանակին հաճախ վիճակվել է Ստալինին հաղթահարել վոչ-քիչ դժվարություններ:

Տրոցկիզմը և նրա հետադեմ կամակատարները, վորոնք համեմատաբար յերկար ժամանակ նստած եյին կուսակցության և կառավարության ղեկավարող պոստերում, բավականաչափ աշխատեցին, վորպեսզի թուլացնեն բանակային կադրերը, քայքայեն և քաղաքական զենք դարձնեն նրանց՝ իրենց դավադիր հակահեղափոխական աշխատանքի մեջ, և դրանով իսկ կազմալուծեն մեր Կարմիր բանակի շարքերը:

Ստալինի անմիջական ղեկավարությամբ տրոցկիստական-բուխարինյան այդ ամբողջ բանդան լիկվիդացիայի յենթարկվեց՝ նրա սև աշխատանքի հետևանքների հետ միասին:

Կարմիր բանակը ներկայումս ռազմա-քաղաքական կադրեր է պատրաստում 14 զինվորական ակադեմիաներում և 6 մասնագի-



տական զինվորական ֆակուլտետներում—այդ մեր խոշորագույն նվաճումներից մեկն է, այդ զինվորական կադրերի նկատմամբ մեր Ստալինի անդադրում հոգատարության արդյունքն է: Մեր զինվորական ակադեմիաները Կարմիր բանակի և յերկրի պարծանքն են:

Խորհրդային Միության ժողովուրդը, ամբողջ Կարմիր բանակը և նավատորմը Ստալինին անվանում են իրենց հայրը և բարեկամը: Այդ բանի մեջ հսկայական իմաստ կա: Ստալինն իրոք, վորպես իսկական բարեկամ, վորպես հայր հոգում է մարդկանց մասին ընդհանրապես և զինվորական մարդկանց մասին՝ մասնավորապես և հատկապես:

Ստալինը համարձակ կերպով ժողովրդի խորքից բարձրացնում է բնածին տաղանդներին, հետևում է նրանց աճմանը, ճանաչում է նրանց անձնապես, հոգում է նրանց մասին:

Ստալինը բազմիցս ասում է ոդաչուների մասին, թե նրանց կյանքը հարկավոր է ամեն կերպ պահպանել, վոր «ոդաչուի կյանքը մեզ համար ավելի թանկ է ամեն մի մեքենայից»: Քիչ հոգատարություն չի ցուցաբերել Ստալինը Կարմիր բանակի հրետանային կադրերի նկատմամբ: Ստալինը սիրում է ավիացիան և նրա թևավոր մարդկանց, բարձր է գնահատում տանկային զորքերին և տանկիստներին, սակայն նա ավելի լավ, քան վորևէ մեկը՝ գիտե, թե առաջվա նման ինչպիսի՛ հսկայական դեր է խաղում պատերազմի մեջ հրետանին: Այդ պատճառով վորակյալ հրետանային կադրերի հարցը շարունակ յեղել է և վերջին տարիներս հատկապես հանդիսանում է այն հարցը, վորով Ստալինը զբաղվել է ստալինաբար, ընդհուպ:

Կարմիր բանակի և Ռազմա-Ծովային նավատորմի տեխնիկական սարքավորումը, ինչպես և յերկրի բուն ինդուստրացումը կապված են Ստալինի անվան հետ և իրենց լուծումն ստացել են բացառապես Ստալինի տիտանային աշխատանքի շնորհիվ: Միայն նա յեր ի վիճակի գլխավորել կուսակցությունը և պետության լավագույն մարդկանց՝ պայքարելու համար հանուն յերկրի ինդուստրացման և դրա հիման վրա վերազինել ամբողջ ժողովրդական տնտեսությունը: Միմիայն այդ բանի շնորհիվ է, վոր մեր բանակը տեխնիկապես ավելի լավ է զինված, քան աշխարհի վորևէ այլ բանակ:

Ամուր ձեռքով կատարելով Լենինի տնտեսական նախագծումները, Ստալինը վստահ կերպով բոլշևիկների կուսակցությունը,

ամբողջ խորհրդային ժողովրդին տալով դեպի յերկրի արդյունաբերական, կուլտուրական և գյուղատնտեսական հետամնացության վերացումը: Անողոքաբար մերկացնելով և ջախջախելով տրոցկիստների և նրանց կամակատարների կուլակային-ձախ շաղակրատությունը ստալինյան հնգամյակների կորստաբերության մասին, կուսակցությունը Ստալինի գլխավորությամբ և առաջնորդությամբ յերկիրը միջնադարի, խավարի, աղքատության և անկուլտուրականության ռելսերից փոխադրեց ժամանակակից ինդուստրիայի և մեքենայացված ու կոլեկտիվացված տնտեսության ռելսերի վրա: Մեր հայրենիքը վերածվեց մեծ ինդուստրիալ պետության, և դրանով իսկ ապահովված յեղավ տեխնիկական և կուլտուրական հետամնացության պատճառով իմպերիալիստական տերությունների խաղի առարկան դառնալու վտանգից:

Բացառապես, և նախ և առաջ, Ստալինի խորաթափանցության ու հեռատեսության շնորհիվ մեր Խորհրդային Միությունը

«Թույլ և պաշտպանության համար անպատրաստ յերկրից — վերածվեց հզոր յերկրի՝ պաշտպանունակության իմաստով, մի յերկրի, վորը պատրաստ է ամեն տեսակ պատահականությունների հանդեպ, մի յերկրի, վորն ընդունակ է մասսայական մասշտաբով արտադրելու պաշտպանության բոլոր արդիական գործիքները և մատակարարելու դրանք իր բանակին՝ դրսից կատարվող հարձակման դեպքում»:

(Ստալին, «Լենինիզմի հարցերը», եջ 720, հայ. հրատ.):

Այդ ասվել է առաջին հնգամյակի վերջում: Ներկայումս, յերկրորդ հնգամյակի և յերրորդի կեսի անցնելուց հետո, մեր պաշտպանունակությունը շատ անգամ բարձրացել է, աճել է, հասնելով այնպիսի մակարդակի, վորն ամբողջովին ապահովում է սոցիալիստական պետության սահմանների անձեռնմխելիությունը:

Ստալինը շարունակ անձնապես և անմիջականորեն մասնակցում և ղեկավարում է այն հարցերը, վորոնք կապված են Խորհրդային Միության զինված ուժերի տեխնիկական վերակառուցման հետ: Նա խորհրդային զենքի զարգացման և անընդհատ կատարելագործման բնագավառում խոշորագույն կազմակերպական և տեխնիկական միջոցառումների նախաձեռնողն է հանդիսանում, նա մեծ ուշադրություն և հոգատարություն է ցուցաբերում ռազմական գյուտերի և գյուտարարների նկատմամբ, ոգնելով նրանց



իրենց աշխատանքում: Նա հոգատարությամբ աճեցնում է սպառազինման բոլոր տեսակների յերիտասարդ խորհրդային կոնստրուկտորներին, անձնապես թափանցում է յուրաքանչյուր նմուշի մեջ: Նրա ղեկավարությամբ են լուծվում սպառազինման այս կամ այն նոր կոնստրուկցիայի ընդունման և այլ հարցերը:

Կարմիր բանակը, ինչպես և ամբողջ խորհրդային պետությունը, անընդհատ աճում և զարգանում է: Յերկրի նյութական և կուլտուրական նվաճումներին համապատասխան, ինչպես նաև արագությամբ փոփոխվող միջազգային իրադրության հետևանքով, Կարմիր բանակը և Ռազմա-Ծովային նավատորմն արմատական փոփոխությունների յենթարկվեցին իրենց ստրուկտուրայի, սպառազինման և քանակի գծով: Զինված ուժերի կատարելագործման գծով վերակառուցման հսկայական աշխատանքը կատարվել է Ստալինի անմիջական ղեկավարությամբ:

Ստալինը քիչ ուշադրություն չի նվիրում բանակի քաղապարատին, այդ հատուկ «զենքի տեսակին», վորպիսին մեր հասկացողությամբ՝ վոչ մի բանակ չունի աշխարհում, և հանդիսանում է, թերևս, ամենահզոր գործոնը Կարմիր բանակի սիստեմում, գործոն, վորը քիչ չափով չի վորոշում նրա մարտական ուժը և բարոյական դեմքը:

«Առանց զինկոմի մենք չեյինք ունենա Կարմիր բանակ»,— ասել է Լենինը քաղաքացիական պատերազմի տարիներին: Ստալինը միշտ նույնպիսի բացառիկ նշանակություն է տալիս Կարմիր բանակի կոմիսարների ինստիտուտին: Քաղապարատը, սովորեցնում է Ստալինը, պետք է վոչ միայն ամրապնդի Կարմիր բանակի բոլոր ողակները և նրա ամբողջ անձնական կազմը՝ իր քաղաքական, բոլշևիկյան ազդեցության ցեմենտով, այլ և նա պետք է ամբողջովին, հրամանատարի հետ միասին՝ ապահովի զորքերի մարտական ունակությունը բոլոր պայմաններում: Քաղապարատը, և առաջին հերթին զինվորական կոմիսարը, պատասխանատու յէ զորամասի քաղաքական և բարոյական դրության համար, նա յէ պատասխանատու մարտիկների նյութական ապահովության և նրանց մարտական ու քաղաքական պատրաստականության համար:

«Գնդի կոմիսարը հանդիսանում է իր գնդի քաղաքական և բարոյական ղեկավարը, նրա նյութական և հոգևոր շահերի առաջին պաշտպանը: Յեթե գնդի հրամանատարը հանդիսանում է գնդի ղեկավարը, ապա կոմիսարը

պետք է լինի իր զնդի հայրը և հոգին»,—գրել է ընկեր Ստալինը դեռ 1919 թվին:

Ստալինն ինքը բանակի լավագույն կոմիսարն էր քաղաքացիական պատերազմի տարիներին: Նրանից, Ստալինից մենք պետք է սովորենք զորքերի քաղաքական ղեկավարման մեծ արվեստը:

Ստալինի անունը մեր յերկրի զինված ուժերի բարոյական-քաղաքական միասնության, մարտունակության և անպարտելիության սիմվոլն է հանդիսանում:

Ստալինի անունը շրթներին՝ մարտիկները, հրամանատարներն ու քաղաշխատողները մարտի եյին գնում հանուն հայրենիքի, հանուն կոմունիզմի—Խասան լճի շրջանում, Խալխին-Գոլի դաշտերում և Արևմտյան Ուկրաինայում ու Արևմտյան Բելոռուսիայում՝ Կարմիր բանակի ազատագրական արշավում: Ստալինի անունով Լենինգրադի օկրուգի զորամասերը մարտեր են մղում, պաշտպանելով Լենինգրադի մատույցները և ազատագրելով ֆինլանդական ժողովրդին նրան ստրկացնողներից:

Մեր զինված ուժերի լիակատար հաղթանակն ամեն մի թշնամու դեմ մղվող պայքարում՝ ապահովված է, վորովհետև մեզ հետ է Ստալինը, վորովհետև յուրաքանչյուր մարտիկ, հրամանատար և քաղաշխատող լավ գիտե ստալինյան ամենօրյա հոգատարությունն իր սոցիալիստական հայրենիքի և Կարմիր բանակի նկատմամբ: Յուրաքանչյուր մարտիկ, հրամանատար և քաղաշխատող մտքերով ու հոգով միշտ Ստալինի հետ է: Նրա կոչով յուրաքանչյուրը պատրաստ է առանց տատանվելու՝ տալու իր բոլոր ուժերը, և յեթե հարկավոր է՝ նաև իր կյանքը—հանուն հայրենիքի փառքի և հզորության, հանուն կոմունիզմի:

Մարքսի մեծ զինակից Ենգելսը դեռ 1845 թվին ասել է.

«Հիշեցե՛ք, թե ինչպիսի հրաշքներ կատարեց հեղափոխական բանակների խանդավառությունը 1792-ից մինչև 1799 թվականները, բանակներ, վորոնք պայքարում եյին միմիայն պատրանքի, միմիայն կարծեցյալ հայրենիքի համար, և դուք պետք է հասկանաք, թե վորքա՛ն ուժեղ պետք է լինի այն բանակը, վորը պայքարում է վոչ թե պատրանքի, այլ ռեալ իրականության համար»...

Խոսելով կոմունիստական հասարակության պաշտպանության մասին, նա հայտարարել է՝

«... Այդպիսի հասարակության անդամը պատերազմի դեպքում ... պետք է պաշտպանի իսկական հայրենիքը, իսկական օջախը... Հետևաբար, նա պետք է պայքարի վոգևորությամբ, տոկունությամբ, խիզախությամբ, վորոնց հանդեպ ծղոտի նման ցիրուցան պետք է լինի ժամանակակից բանակի մեխանիկական ուսուցումը»:

(Մարքս—Ենգելս, Յերկ., հատ. III, եջ 278):



Մարքսիզմի հիմնադիրների այդ մարգարեյությունը կատարվում է: Հեղափոխական մտքի այդ հսկաների կանխատեսումն իրագործված է մեր յերկրում շնորհիվ այն բանի, վոր կոմունիզմի դրոշը մեծ Մարքսի և մեծ Ենգելսի ձեռքերից անցել է մեծ Լենինի և մեծ Ստալինի նույնքան հզոր ձեռքերը:

Կարմիր բանակն այդ ապացուցեց քաղաքացիական պատերազմի ժամանակաշրջանում: Նա մեկ անգամ չէ, վոր այդ ցուցադրել է վերջին տարիների ընթացքում: Յեվ իր այդ հաջողություններով նա պարտական է, նախ և առաջ, Լենինի—Ստալինի Մեծ Կոմունիստական կուսակցությանը, սոցիալիստական պետության զինված ուժերի կազմակերպողին, բարեկամին և առաջնորդին՝ մեծ Ստալինին:

Թող ապրի՛ մեր Ստալինը յերկար և յերկար տարիներ՝ հուրախություն Խորհրդային Միության ժողովուրդների և ամբողջ առաջավոր մարդկության:

Լ. Մ. ԿԱԳԱՆՈՎԻՉ

# ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԼՈԿՈՄՈՏԻՎԻ ՄԵԾ ՄԵՔԵՆԱՎԱՐԸ

Այսոր մեր յերկրի յուրաքանչյուր աշխատավոր ուզում է վորքան կարելի յե ուժգնորեն ու փայլուն կերպով խոսել մարդկության հանճարի վեհության մասին և վորքան կարելի յե խոր կերպով արտահայտել իր զգացումները հարազատ, մեծ Ստալինի նկատմամբ: Սա առանձնապես վերաբերում է մեզ՝ նրա մոտիկ, անմիջական աշակերտներիս, վոր այնքան շատ պարտական ենք նրան: Ուզում ես ընկեր Ստալինի մասին ասած խոսքերի մեջ դնել քո ամբողջ հոգին, քո ամբողջ սերը, քո ամբողջ նվիրվածությունը կուսակցությանն ու բանվոր դասակարգին: Բայց ցանկությունը դեռևս հնարավորություն չէ: Այն զգացմունքները, վորոնցով լի յեն աշխատավորների սրտերն այսոր, այն մտքերն ընկեր Ստալինի մասին, վորոնցով լի յեն բոլոր առաջավոր մարդկանց գլուխները, ավելի հարուստ են, քան այն հիանալի խոսքերը, վոր այսոր կգրվեն կապիտալիզմի շրջապատման մեջ սոցիալիզմի մեծ կառուցողի մասին:

Ստալինին իբրև առաջնորդ առաջ է քաշել այն նոր դասակարգը, վորն առաջ է տանում պատմությունը, վորը կոչված է վոչնչացնելու կապիտալիզմը և կառուցելու կոմունիզմը:

Գրել Ստալինի մասին—այդ նշանակում է գրել պրոլետարիատի հեղափոխական պայքարի թեորիայի, ստրատեգիայի ու տակտիկայի և սոցիալիզմի հաղթանակի մասին, բոլշևիկների կուսակցության մասին, սկսած նրա սաղմնավորվելուց մինչև մեր որերը, մարքսիզմի և լենինիզմի մեծ ուսմունքի մասին:

Գրել Ստալինի մասին—այդ նշանակում է գրել մեր մեծ ժողովրդի մասին, խորհրդային մեծ պետության մասին, վորի կառուցողը Լենինի հետ միասին և Լենինից հետո հանդիսանում է Ստալինը—հաղթական քաղաքացիական պատերազմի մասին, վորի մեջ Ստալինը, իբրև Կարմիր բանակի կազմակերպիչ, վճռողական դեր խաղաց, և մեր Կարմիր բանակի՝ խորհրդային պետության հզոր հենարանի հետագա վերասպառազինման մասին,

մեր ոդաչու-բազեների մասին, տանկիստների մասին, պանծալի հրետավորների մասին:

Գրել Ստալինի մասին—այդ նշանակում է գրել մեր յերեք հնգամյակների մասին, վորոնք իրենց նմանը չունեն մարդկության պատմության մեջ, հետամնաց սոխայավոր Ռուսաստանի մեծ վերակառուցման և աշխարհի ամենաառաջավոր յերկիրը դարձնելու մասին, մեծ բեկման՝ կոլտնտեսային կարգի հաղթանակի մասին, մեր նախկին հետամնաց յերկրի ինդուստրացման մասին, մեր յերկաթուղային տրանսպորտի վերելքի մասին, առաջավոր մարդկանց՝ ստախանովականների մասին, վորոնց աճեցրել է մեծ Ստալինը, պրոլետարիատի թշնամիներին կուսակցության ներսում, յերկրի ներսում արմատախիլ անելու մասին, մեր արտաքին քաղաքականության հաղթանակների մասին, համաշխարհային բանվորական շարժման մասին:

Գրել Ստալինի մասին—այդ նշանակում է գրել ժողովրդի, մանավանդ յերբեմնի հետամնաց, ստրկացված ազգերի կուլտուրայի աճման մասին, մեծ Ստալինի բարձրացրած ու աճեցրած մեր ինտելիգենցիայի մասին, լայն մասսաների ունևոր կյանքի մասին, դեպի աշխատավոր մարդը և մանավանդ դեպի յերեխաները տածած ստալինյան հոգատարության ու սիրո մասին, անձնվեր ընկերոջ ու բարեկամի մասին, վորն անողոք է դեպի ժողովրդի թշնամիները և փափկասիրտ՝ դեպի ժողովրդի գործին և նրա խորհրդային պետությանը նվիրված մարդիկ:

Ժողովուրդը սիրում է ընկեր Ստալինին այն պատճառով, վոր նա մի առաջնորդ է, վորն արտահայտում է ժողովրդի կամքը, մարմնացնում է նրա ուժն ու հզորությունը և իր ժողովրդին վերադարձնում իր մեջ կուտակված՝ ժողովրդի ուժն ու եներգիան: Ժողովուրդը գիտե, վոր նա մի առաջնորդ է, վորը դուրս գալով ժողովրդի ծոցից, մշտապես մասսաների հետ է, մշտապես ժողովրդի հետ՝ ապահովելով նրան մեծ հաղթանակներ:

Ստալինի վեհությունը—դա դարաշրջանի վեհությունն է, կուսակցության վեհությունը, ժողովուրդների վեհությունը, վորոնց առաջնորդն է նա:

* * *

Լենինը 1918 թ. իր «Հրապարակախոսի որագրում» մեջբերելով Մարքսի մեծ խոսքերը, թե «Հեղափոխությունները պատմության լոկոմոտիվներն են», ավելացնում է. «Քշել լոկոմոտիվը և պահել ռելսերի վրա»:



Պատմության սոցիալիստական լոկոմոտիվը քշելու և նրան ռելսերի վրա պահելու համար հարկավոր է ունենալ այնպիսի մեքենավար, վորի հատկանիշները համապատասխանեն մարդկության առաջավոր ջոկատի պատմական մեծ խնդիրներին: Այդպիսի մեծ մեքենավար եր Լենինը, վորն իր զուգերթային բրիգադում ուներ Ստալինին, այդպիսի մեծ մեքենավար է այժմ մեր Ստալինը:

Սպառազինված լոկոմոտիվը ղեկավարելու փորձով Լենինի զուգերթային բրիգադում թե՛ այն ժամանակ, յերբ Լենինը պատրաստում եր լոկոմոտիվը մինչև հեղափոխությունը, թե՛ Հոկտեմբերյան որերին, յերբ լոկոմոտիվը վազք վերցրեց, և թե՛ քաղաքացիական պատերազմի տարիներին, Ստալինը, համարձակ կերպով, զարգացնելով պատմության լոկոմոտիվի լենինյան վազքը, պահեց նրան սոցիալիստական ռելսերի վրա: Սրանում է ընկեր Ստալինի վճռողական, հիմնական, պատմական ծառայությունը, վորի համար մեր ժողովուրդն իր ամբողջ եյությամբ պարգևում է ընկեր Ստալինին մեծ, անսպառ ժողովրդական սիրով ու նվիրվածությամբ:

Այս գործի՝ պատմության լոկոմոտիվը քշելու և նրան ռելսերի վրա պահելու պատմական մեծ նշանակությունը պարզ կլինի, յեթե հիշենք Լենինի և Ստալինի բազմիցս արած ցուցումներն այն մասին, վոր բավական չե նվաճել իշխանությունը, բավական չե նույնիսկ պաշտպանել այդ քաղաքական իշխանությունը զինված պայքարում: Հոկտեմբերյան հաղթանակի ամրապնդման համար անհրաժեշտ է ստեղծել սոցիալիստական ինդուստրիա, գյուղացիությունը փոխադրել սոցիալիզմի ռելսերի վրա, դրանով իսկ ստեղծել սոցիալիզմի տնտեսական պատվանդանը, բարձրացնել յերկրի կուլտուրան և ավարտել սոցիալիզմի կառուցումը, սոցիալիզմի, վորը զինված է, ընդունակ է իր գոյության համար պայքարելու կապիտալիստական շրջապատման դեմ:

1928 թվին Կենտկոմի պլենումում ընկեր Ստալինն ասաց.

«Մենք հասանք և առաջ անցանք առաջավոր կապիտալիստական յերկրներից նոր քաղաքական կարգ, խորհրդային կարգ հիմնելու իմաստով: Սա լավ է: Բայց սա քիչ է: Վորպեսզի հասնենք սոցիալիզմի վերջնական հաղթանակին, հարկավոր է դեռևս այդ յերկրներին հասնել և առաջ անցնել նմանապես և տեխնիկա-տնտեսական տեսակետից: Կամ սրան մենք կհասնենք, կամ մեզ կճզմեն... Անկարելի յե

պաշտպանել մեր յերկրի անկախությունը, չունենալով բավականաչափ արդյունաբերական բազա պաշտպանության համար... Հարկավոր է աստիճանաբար, բայց սիստեմատիկ ու համառ կերպով գյուղատնտեսությունը փոխադրել նոր տեխնիկական բազայի, խոշոր արտադրության բազայի վրա, ձգելով և հասցնելով նրան սոցիալիստական արդյունաբերությանը: Կամ մենք այս խնդիրը կլուծենք,— և այն ժամանակ վերջնական հաղթանակն ապահովված է, կամ մենք նրանից կհեռանանք, այս խնդիրը չենք լուծի,— և այն ժամանակ վերադարձը դեպի կապիտալիզմ կարող է դառնալ անխուսափելի յերևույթ»:

Այսպիսով, հարց եր դրված՝ կամ լոկոմոտիվը պահել սոցիալիստական ռելսերի վրա, կամ վերադառնալ կապիտալիզմին, այսինքն՝ վերադառնալ այն բանին, վորի դեմ մղված պայքարում բանվորներն ու գյուղացիներն այնքան արյուն թափեցին, այնքան զոհեր տվին:

Ինչպես հայտնի յե, լոկոմոտիվը մնաց սոցիալիստական ուղու վրա: Այս խնդիրը հարկ յեղավ լուծելու սոցիալիզմի բացահայտ ու քողարկված տրոցկիստական և բուխարինյան դավաճանների դեմ մղված պայքարում: Պատմության լոկոմոտիվի դեմ գրոհելիս այս դավաճաններն իրենց թունավոր սլաքներն ուղղում եյին ամենից առաջ լոկոմոտիվի մեքենավարի դեմ: Բայց լոկոմոտիվի մեքենավար ընկեր Ստալինը հենց նրանով է աչքի ընկնում, վոր վորքան կատաղի յե թշնամիների գրոհը, այնքան ավելի կործանիչ է հակահարվածը: Սոցիալիզմի թշնամիները ջախջախվեցին:

Ստալինը պատմության լոկոմոտիվը տարավ սուր դարիվայրերով ու դժվարին վերելքներով, դարձերով ու կեռմաններով, լոկոմոտիվի հնոցում նա պահում եր այն արժեքավորը միայն, վոր շարժիչ եներգիա յե տալիս, իսկ մրուրը նա մաքրում եր ժամանակին, ընդմին չաղտոտելով ուղին: Նա ճշգրիտ կերպով, թեորիապես և գործնականորեն հաշվել եր արգելակային ուղին, վորպեսզի գնացքի կտրում տեղի չունենա, վորի մեջ կային զանազան կոնստրուկցիայի վագոններ—տարբեր տնտեսական կացույթներ:

Հակահարված տալով տրոցկիստական պրովոկատորներին, ընկեր Ստալինը հետևողականորեն, համբերատար կերպով, սկսած դեռևս 1923—1924 թվականներից, գյուղացիական մասսաներին բերում եր դեպի կոլտնտեսությունները նեպի հիման վրա, հեղափոխության գնացքը ցեմենտելով բանվորների ու գյուղացի-



ների անխախտ դաշինքով: Պատմության լոկոմոտիվի վազքի համար ոգտագործելով նրա ամբողջ հզորությունը, ընկեր Ստալինը ճիշտ եր ընտրում շարժումն արագացնելու մոմենտները, ժամանակին եր փոխադրում լոկոմոտիվի ռելսերը՝ յերբ հարկավոր եր արագացնել այդ շարժումը դեպի սոցիալիզմ:

Ճշգրիտ ընտրելով շարժումն արագացնելու մոմենտը, ընկեր Ստալինն ապահովեց սոցիալիստական եկոնոմիկայի ամուր հիմքի ստեղծումն ու սոցիալիզմի հաղթանակը:

Սոցիալիզմի հաղթանակը ձեռք է բերվել ամենից առաջ այն պատճառով, վոր Ստալինը թեորիապես հենակետ տվեց բոլոր հեղափոխական ուժերին մոբիլիզացիայի յենթարկելու՝ հանուն սոցիալիզմի պայքարելու համար:

Ստալինի կողմից թեորիապես մշակված՝ մի յերկրում սոցիալիզմի հաղթանակի հնարավորության լենինյան սկզբունքը—բոլոր քաղաքական վեճերի արմատը—դարձավ այն հեսանը, վորի վրա բոլշևիկյան կուսակցությունն իր զենքը սրեց՝ անարգ, հետագայում վերջնականապես մերկացված տրոցկիստական լրտեսների դեպի կապիտալիզմը վերադառնալու դավաճանական թեորիաների դեմ մղված պայքարում, ձախ և աջ ոպորտունիզմի՝ սոցիալիզմի նույնպիսի թշնամիների՝ բոլոր արտահայտությունների դեմ մղված պայքարում:

Բացի մի յերկրում սոցիալիզմի կառուցման հարցից, Ստալինին իբրև պատմության լոկոմոտիվի մեքենավար հարկ յեղավ թեորիապես վորոշելու նաև տրասսը և ռելսեր գցելու լոկոմոտիվի յերթևեկության համար նաև մյուս ուղղություններով, վորոնցով թեորիական ռելսեր գցված չեյին և նույնիսկ տրասսն ընդհանուր առմամբ եր միայն վորոշված: Սրանք այն հարցերն են, ինչպես գյուղատնտեսության հանրայնացման ուղիները, պետության հարցերը և այլն: Սրանումն է մեր շարժման մեծ ուժը—մարքսիստական-լենինյան թեորիան կանգ չառավ, Ստալինը զարգացրեց այն, խորացրեց և լրացրեց:

Բոլորի հիշողության մեջ է ընկեր Ստալինի պատմական, թեորիական յելույթը մարքսիստ-ագրարականների կոնֆերենցիայում, վորտեղ նա ջախջախեց հավասարակշռության բուրժուական թեորիան, ինքնահոսի թեորիան սոցիալիստական շինարարության մեջ, մանր-գյուղացիական տնտեսության «կայունության» թեորիան, վորտեղ նա նոր ձևով դրեց քաղաքի ու գյուղի հարաբերության հարցը, կոլտնտեսությունների նշանակության և կուլակության, իբրև դասակարգի, վերացման հարցը:

Մենք, ընկեր Ստալինի մերձավոր աշակերտներս, կարող ենք առանց չափազանցության ասել, վոր սոցիալիստական շինարարության ոչ մի բնագավառի մեջ ընկեր Ստալինը չի դրել այնքան եներգիա, աշխատանք ու հոգս, վորքան կոլտնտեսային շինարարության մեջ, սկսած ՄՏԿ քաղբաժինների կազմակերպումից, գյուղատնտեսական մեքենաշինության գործարանների կառուցումից մինչև Գյուղատնտ. արտելի կանոնադրությունը։ Բոլորը գիտեն, թե կոլտնտեսականների վորքան խորհրդակցություններ է անցկացրել ընկեր Ստալինը գյուղատնտեսության բոլոր ճյուղերի վերաբերյալ, իսկ բացի սրանից շատ ու շատ անգամ ընկեր Ստալինը խորհրդակցում եր տեղական աշխատողների հետ, կոլտնտեսականների հետ կոլտնտեսային կյանքի և կոլտնտեսությունների կազմակերպման բոլոր հարցերի շուրջը։

Ընկեր Ստալինն անդադրում աշխատում եր և աշխատում է խորհրդային պետության, նրա հիմքերի և կառավարման օրգանների ամրապնդման վրա։ Նա կռվում եր բոլոր բացահայտ և ծպտյալ ոպորտունիստական տարրերի դեմ, վորոնք ձգտում եյին թուլացնել պետությունը։

Բոլորի հիշողության մեջ դեռ թարմ է, թե քաղաքական պայքարի ինչպիսի պայմաններում եր ընթանում յերկրի ինդուստրացումն ու գյուղատնտեսության կոլեկտիվացումը։ Կապիտալիզմի բոլոր գազանային մնացորդները, բոլոր այն մութն ու ստորը, վոր մնացել է հին հասարակակարգից, ոտարերկրյա իմպերիալիստների ոգնությամբ ու պաշտպանությամբ մոբիլիզացիայի յենթարկվեցին յերկրի սոցիալիստական վերակառուցման դեմ պայքարելու համար։ Նրանք զգում եյին և գիտեյին, վոր կուլակության լիկվիդացիան, կոլեկտիվացման ու ինդուստրացման հաղթանակը նշանակում են սոցիալիզմի հաղթանակ։ Չկար այնպիսի վոճրագործություն, վորի առջև կանգ առնեյին մարդկության այդ վիժվածքները. լավագույն մարդկանց տեռոր, սպանություն, պայթյուններ, խորտակումներ, հրկիզումներ, անասունների թունավորում—այս բոլոր միջոցները գործի եյին դրված։

Այս թշնամիներին ջարդելու համար, սոցիալիզմն ամրացնելու համար, նրա համար, վորպեսզի պատմության լոկոմոտիվը հաղթահարեր իր ճանապարհի բոլոր խոչընդոտները, հարկավոր եր ամրացնել պետությունը, մերկացնելով նրանց, ովքեր բթացնում եյին դասակարգային զգոնությունը, մոբիլիզացիայի յենթարկել կուսակցության և ժողովրդի լավագույն ուժերը, վորպեսզի սոցիալիզմը, հենվելով հզոր պետության վրա, նրա ոգնությամբ կարողանար վերջնականապես ամրացնել իր դիրքերը։

Յեվ ընկեր Ստալինը քայլ առ քայլ, որ որի վրա ամրացնում եր մեր պետության ուժն ու հզորությունը, ջախջախելով թշնամիներին և բազմացնելով թարմ, կենդանի ուժերը պետական ապարատում, ամբողջ պետական մեխանիզմի մեջ։ Պետության համար մղված ստալինյան պայքարի պրակտիկան պսակվեց Ստալինյան Սահմանադրությամբ և ընկեր Ստալինի կողմից պետության հարցի թեորիական նոր մշակումով մեր կուսակցության XVIII համագումարում։

* * *

Մեր պետությունն ուժեղ և ամուր է հենց այն պատճառով, վոր ստալինյան հնգամյակների հետևանքով մենք ունենք հազարավոր մետալուրգիական, մեքենաշինական, նավթային, ածխային, քիմիական, ելեկտրոտեխնիկական, տեքստիլ, տրիկոտաժային, կոշկեղենի, սննդի ձեռնարկություններ առաջավոր տեխնիկայով, աշխարհի ամենախոշոր գյուղատնտեսական հարյուրհազարավոր կազմակերպություններ՝ կոլտնտեսություններ ու խորհտնտեսություններ, հազարավոր մեքենատրակտորային կայաններ լավագույն, առաջավոր տրակտորներով ու կոմբայններով, որինակելի ոդանավեր, շոգեքարշեր, ելեկտրաքարշեր և այլն և այլն։

Կուսակցությունը, նրա Կենտկոմը և ամենից առաջ ընկեր Ստալինն անդադրում կերպով գործնականապես ղեկավարում եյին տնտեսության բոլոր ճյուղերի, ամբողջ ինդուստրիայի, մանավանդ ծանր ինդուստրիայի և յերկաթուղային տրանսպորտի շինարարությունն ու ամրապնդումը։

Մենք որինակներ գիտենք, թե ինչպես ընկեր Ստալինն անձամբ հոգ եր տանում, ձգտում եր մեծապես ապահովել, որինակ, այնպիսի գործարաններ, ինչպես են տրակտորային, ավտոմոբիլային գործարանները, իսկ պաշտպանական արդյունաբերության, մանավանդ ավիացիոն և նավաշինական արդյունաբերության ձեռնարկություններին հատկացված ուշադրության մասին արդեն ասելու հարկ չկա—դրանցով ընկեր Ստալինը բառացիորեն զբաղվում է ամեն որ, բազմիցս խորհրդակցության է հրավիրում ղեկավարներին, ինժեներներին, կոնստրուկտորներին, յերբեմն ել ցեխերի պետերին։ Նավերի, ոդանավերի և պաշտպանական ար-

դյունաբերության մյուս տեսակի արտադրանքների նախագծերն ու տիպերը հանդիսանում են ընկեր Ստալինի մոտ հրավիրվող այդ խորհրդակցությունների հատուկ քննության առարկան և այդ հարցերի հետ միասին քննվում ու վճռվում են գործարանների աշխատանքի գործնական հարցեր, ծրագրի կատարման ընթացքը և աշխատանքի բարելավման միջոցները:

1931 թվին տնտեսավարների խորհրդակցությանն ընկեր Ստալինի արտասանած ճառը դարձավ մեր ինդուստրիայի բոլոր լավագույն մարդկանց աշխատանքի հիմքը՝ արդյունաբերության ամրացման համար նրանց մղած պայքարում: Այս ճառը բանվոր դասակարգի մեջ հայտնի յե ընկեր Ստալինի «վեց պայմաններ» անունով: Առանց չափազանցության կարելի յե ասել, վոր ընկեր Ստալինի հենց այս վեց պայմանները վճռողական նախապատրաստություն հանդիսացան ստախանովյան շարժման զարգացման համար:

Բոլորը գիտեն, թե ինչպիսի ուշադրություն, ինչպիսի հոգատարություն եր ցուցաբերում և ցուցաբերում է ընկեր Ստալինը դեպի ստախանովականները՝ մեր ինդուստրիայի առաջավոր մարդիկ: Պատահական չէ, վոր արդյունաբերության, տրանսպորտի և գյուղատնտեսության լավագույն առաջավոր մարդկանց լուսանկարները տեղ են գտել ընկեր Ստալինի կաբինետում:

Պակաս ուշադրություն և հոգատարություն չի ցուցաբերում ընկեր Ստալինը յերկաթուղային տրանսպորտի վերաբերմամբ: Տրանսպորտում ձեռք բերած իրենց հաջողությունների համար յերկաթուղայինները պարտական են ընկեր Ստալինին: Նա յեր. անմիջականորեն առաջադրանք տալիս և ստուգում նրա կատարումը՝ տրանսպորտին արդյունաբերության կողմից տարեկան 80 հազար վագոն, կատարելագործված տիպի հազարավոր նոր շոգեքարշեր մատակարարելու մասին: Յերբ հարց դրվեց նոր առաջավոր կոնդենսացիոն շոգեքարշի մասին, ընկեր Ստալինը պահանջեց արագորեն յուրացնել այդ շոգեքարշը: Ավելի հզոր, չորս առանցքանի վագոնների, ավելի հզոր, միագանի ռելսերի անցնելու հարցը, յերկրորդ ուղիների կառուցումը, նոր յերկաթուղիների կառուցումը ընկեր Ստալինի հատուկ հոգատարության առարկան եյին:

Յերկաթուղայիններն իրենց գործնական աշխատանքում կենդանի արձագանք և ղեկավար ցուցումներ եյին ստանում ընկեր Ստալինից:

Յերկաթուղայինները գիտեն, վոր իրենց նյութական բարե-



կեցության բարձրացումը, ինչպես և կոլտնտեսականների ունևորության, արդյունաբերության բանվորների բարեկեցության վերելքն արդյունք է մեր մեծ կուսակցության և նրա առաջնորդ ընկեր Ստալինի հոգատարության:

Անհրաժեշտ է նշել, վոր յերկաթուղային մեքենավարները գիտեն ընկեր Ստալինի հատուկ հոգատար վերաբերմունքն իրենց հանդեպ: Նրանք գիտեն, որինակ, վոր յերբ պարգևատրում եյին յերկաթուղայիններին, ընկեր Ստալինը հատուկ ուշադրություն եր դարձնում մեքենավարների պարգևատրմանը: Նրանք հպարտանում են ընկեր Ստալինին՝ լոկոմոտիվի մեքենավարի հետ բուն իսկ համեմատելով, ճիշտ է՝ ուրիշ, մի քիչ ավելի մեծ լոկոմոտիվի, քան յերկաթուղային տրանսպորտում գոյություն ունեցող ամենահզոր ֆիզիկական լոկոմոտիվն է:

Յերկաթուղային տրանսպորտի պատմության մեջ առաջին անգամ տրանսպորտի հարցերը հասցված են թեորիական սկզբունքային մեծ բարձրության: Մեծ դեր խաղաց 1935 թ. յերկաթուղայինների ընդունելությունն ընկեր Ստալինի կողմից:

Ընկեր Ստալինն իր ճառում նշեց յերկաթուղային տրանսպորտի պետական մեծ նշանակությունը մեր յերկրի համար:

Ընկեր Ստալինը խոսեց այն մասին, վոր յերկաթուղայինների համար պատիվ է աշխատել յերկաթուղային տրանսպորտում և կատարել իր պարտավորությունները պետության հանդեպ: Ընկեր Ստալինի այս խոսքերն ու հետագա պրակտիկ ղեկավարությունն է, վոր ապահովեցին յերկաթուղային տրանսպորտի ունեցած հաջողությունները:

Յերկաթուղայինները հիշում են ընկեր Ստալինի խոսքերը ինքնաքննադատության մասին: Նրանք գիտեն, վոր յերկաթուղային տրանսպորտում քիչ թերություններ չկան, վոր աճում են փոխադրությունների տնտեսության առաջադրած պահանջները, և այսոր ավելի, քան յերբևիցե, յերկաթուղայինները խոսք կըտան պատմության լոկոմոտիվի իրենց սիրելի մեծ մեքենավար ընկեր Ստալինին, վոր ամեն ջանք գործ կդնեն մինչև վերջ արդարացնելու այն հոգատարությունը, այն ուշադրությունն ու աջակցությունը, վոր ընկեր Ստալինը ցույց է տվել և ցույց է տալիս մեր յերկրի յերկաթուղայիններին:

* * *

Ընկեր Ստալինն իր մեջ զուգորդում է պրոլետարական հեղափոխության առաջնորդի թեորետիկական հզորությունը և կու-

սակցության ու պետության՝ պատմության մեջ մեծագույն կազմակերպչի կազմակերպական ուժը:

Կուսակցության XVII համագումարում շարադրելով կուսակցության գլխավոր գծի հաղթանակի կազմակերպման պայմանները, ընկեր Ստալինն ասաց. «Հաղթանակը յերբեք ինքն իրեն չի գալիս,—նրան սովորաբար ուժով են բերում»:

Իբրև հաղթանակի այդ՝ ուժով բերելու կարևորագույն պայման ընկեր Ստալինը դրեց և դնում է կադրերի հարցը: Ընկեր Ստալինը մեկ անգամ չէ, վոր ասել է, վոր պատմության մեջ վոչ մի դասակարգ իշխանության հասնելով, հաղթանակներ չի տարել առանց իր սպայական և յենթասպայական կազմը պատրաստելու:

Իր, դրա հետ և կուլտուրական, իր դասակարգին հավատարիմ ինտելիգենցիայի, պատմական տվյալ ժամանակաշրջանի պահանջների ու խնդիրների բարձրության վրա կանգնելու ընդունակ ինտելիգենցիայի պատրաստում—այս է հաղթանակի ամրապնդման կարևորագույն պայմանը:

Ընկեր Ստալինը բոլոր ղեկավարներից պահանջում է ուշադրություն դեպի կադրերը: 1937 թ. մարտին կայացած Կենտկոմի պլենումում նա ասաց. «Մենք տասնյակ-հազարավոր ընդունակ մարդիկ, տաղանդավոր մարդիկ ունենք: Հարկավոր է միայն նրանց ճանաչել և ժամանակին առաջ քաշել, վորպեսզի նրանք չճանան հին տեղում և չսկսեն նեխել: Վորոնեցե՛ք և կգտնեք»:

Բավական չէ հասկանալ այս, անհրաժեշտ է ամեն որ իրագործել, չմոռանալով այս ճշմարտությունը: Սա վերաբերում է բոլորին, այդ թվում նաև մեզ՝ Ստալինի մոտիկ աշակերտներին, վորոնք հնարավորություն ունեն ամեն որ տեսնելու մարդկանց ընտրության որինակը մեր Կենտրոնական Կոմիտեյի և ընկեր Ստալինի կողմից:

Ընկեր Ստալինն, իբրև այգեպան, խնամքով, համբերատար կերպով աճեցնում է կադրերը, համարձակ ու վճռականապես մասսայորեն առաջ քաշելով կադրերը վոչ թե մոբիլիզացիայի, այլ անհատական ընտրության միջոցով: Վերջին մի յերկու տարում կուսակցությունը, ընկեր Ստալինի հաստատակամ ղեկավարությամբ, ղեկավար պոստերի առաջ քաշեց հարյուր-հազարավոր մարդկանց:

Ընկեր Ստալինը հայրական բացառիկ հոգատարությամբ ու



սիրով է վերաբերվում կադրերին: Կուսակցության XVIII համագումարում ընկեր Ստալինն ասաց, վոր անհրաժեշտ է «գնահատել կադրերը, իբրև կուսակցության և պետության վոսկե ֆոնդ, բարձր գնահատել նրանց, հարգանք ունենալ նրանց վերաբերմամբ», վոր անհրաժեշտ է ճանաչել կադրերը, իմանալ, թե ինչ պոստում դնել աշխատողին, վորպեսզի նա ծավալի իր ընդունակությունները, վոր չի կարելի գրասենյակային վերաբերմունք ցույց տալ կադրերին, վոր անհրաժեշտ է «ժամանակ չխնայել համբերատար կերպով «զբաղվելու» այդպիսի աշխատողների հետ և արագացնել նրանց աճումը»:

Միևնույն ժամանակ ընկեր Ստալինը պահանջում է կադրեր դաստիարակել վոչ միայն դպրոցում, այլև ինքնաքննադատությամբ: Սխալների կոծկումը, ասում է ընկեր Ստալինը, կարող է կործանել աշխատողին:

Բոլշևիզմի վոգով դաստիարակությունը պահանջում է ինքնաքննադատություն: Բյուրոկրատիզմը, գործամոլությունը կարող են փչացնել նաև լավ աշխատողներին, ուստի ընկեր Ստալինը մշտապես ընդգծում է, վոր հարկավոր է նրանց քննադատել, չնայելով աստիճանին, և պահանջել նրանցից՝ կապվել մասսաների հետ:

Ընկեր Ստալինին մշտապես վոգեշնչել է և վոգեշնչում է իր ունեցած հավատը բանվոր դասակարգի ստեղծարար ուժերի, մասսաների ստեղծարար ընդունակությունների, ժողովրդի ստեղծարար ուժի նկատմամբ, վորը նրան հնարավորություն է տվել ճիշտ ուղղություն տալու պատմության լոկոմոտիվի շարժմանը: Ընկեր Ստալինի հավատը դեպի մասսաները մշտապես միանում է նրա մեծ սիրուն դեպի ժողովուրդը, դեպի նոր կյանք կերտողները և մեծագույն համեստությունը, վոր նրան ուշագրավ է դարձնում իբրև ժողովրդական մասսաների մեծագույն առաջնորդի պատմության մեջ:

Յուրաքանչյուր ղեկավար իր ամբողջ գործունեյության ընթացքում պետք է սովորի, սովորի ու սովորի ընկեր Ստալինից:

* * *

Ընկեր Ստալինի բնորոշ գծերից մեկն է հանդիսանում նրա տաղանդը՝ արտաքին, աչքի չընկնող յերևույթի հետևը տեսնելու իրերի եյությունը, նրանց արմատը և սրա հիման վրա տեսնելու տասնամյակներ առաջ: Ընկեր Ստալինը կարողանում է փոքրի մեջ գտնել մեծը և առաջին հայացքից փոքրիկ հարցից

ծավալել արմատական ընդհանուր հարցեր: Այս գիծը նրա աշխատանքի մեթոդների կարևորագույն բաղկացուցիչ մասերից մեկն է:

Սա յերևում է թեկուզ Մոսկվա քաղաքի վերակառուցման օրինակով:

Սկսվեց այն բանից, վոր բնակչության վառելիքի և ջրի մատակարարման վորոշ խանգարումների կապակցությամբ ընկեր Ստալինը Քաղբյուրոյում հարց դրեց բնակչությանը վառելանյութով, ջրով ապահովելու մասին, բնակարանային տնտեսության և Արբատի հրապարակի սալահատակի վատ դրության մասին: Այս հարցերի քննության զուգընթաց ընկեր Ստալինն ավելի ու ավելի ընդարձակեց քննության շրջանակները մինչև Մոսկվա քաղաքի վերակառուցման գլխավոր պլանի հարցը:

Մոսկվայի քաղաքային տնտեսության հարցի քննության համար ստեղծվեց Կենտկոմի հատուկ հանձնաժողով ընկեր Ստալինի մասնակցությամբ: Հանձնաժողովը կանոնավոր կերպով նիստեր գումարեց բազմիցս, ընկեր Ստալինը ճշտապահորեն հաճախում էր հանձնաժողովի ամեն մի նիստին: Ընկեր Ստալինն առաջարկեց նիստերին հրավիրել մասնագետների, վորոնք ծանոթ են քաղաքային տնտեսությանը, և ժամերով լսում ու քննում էր ջրի հարցը, սալահատակների, փողոցների ու հրապարակները հարթելու, բնակարանային շինարարության հարցերը: Յեվ ջրի ու վառելիքի խանգարումների վերացման հարցից աճեցին Մոսկվա-Վոլգա ջրանցքի հարցը, ջրմուղային կայաններ կառուցելու, Յաուզա գետը ջրով լցնելու, նոր կամուրջներ կառուցելու, մետրո կառուցելու, Կիտայգորոդի պատը քանդելու, նախկին Օբժորնի, Լոսկուտնի և Ոխոտնի րյադի հին ու քայքայված տները քանդելու հարցերը և իբրև այս բոլորի ավարտում՝ Մոսկվայի վերակառուցման ստալինյան գլխավոր պլանը, վորի իրականացման հետևանքով հին Մոսկվան դարձավ ստալինյան Մոսկվա:

Կարելի յեր դարձյալ տասնյակներով օրինակներ բերել կուլտուրայի, արխիտեկտուրայի, գիտության և դպրոցների, արդյունաբերության և գյուղատնտեսության բնագավառից, վորոնք ցույց տային, թե ինչպիսի հիմնավորությամբ է ընկեր Ստալինը թափանցում սոցիալիստական շինարարության այս բոլոր հարցերի մեջ, վորի ցայտուն օրինակն են հանդիսանում Մոսկվա քաղաքի վերակառուցման իմ մեջ բերած փաստերը:

Մենք՝ ընկեր Ստալինի օգնականներս ու աշակերտներս



բախտ ունենք դիտելու, թե ինչպես ստեղծագործ մեծ միտքը դրսևորվում է վոչ միայն հրապարակված ճառերում ու գրքերում, այլև ամեն ժամ փայլատակում է շինարարության թեորիայի ու պրակտիկայի մեծ ու մանր հարցերը վճռելիս ինչպես ներքին, այնպես էլ արտաքին գործերում:

* * *

Ստալինի համար ամենասրբազան, ամենակարևոր բանը կուսակցությունն է, վորին ծառայելով նա տալիս է իր ամբողջ կյանքը, կուսակցությունը, վորի հիմքը նա դրել է Լենինի հետ միասին, կուսակցությունը, վորի հետ է նա անցել կուսակցության պայքարի և մարդկության պատմության մեջ մեծագույն հաղթանակների մարտական ուղին:

Այս սերը դեպի կուսակցությունը, հավատը նրա հզորության վերաբերմամբ ընկեր Ստալինը բացառիկ փայլով և ուժով ցույց է տվել ստալինյան հանճարեղ ստեղծագործության՝ Համ. Կ(բ)Կ պատմության մեջ:

Ստալինը մեծ է վոչ միայն այսօր, յերբ նա կանգնած է աշխարհի մեծագույն պետության գլուխ, ԽՍՀՄ ժողովուրդների գլուխ, այլև այն ժամանակ, յերբ նա Լենինի հետ միասին ընդհատակում համախմբում էր մի բուռ բոլշևիկների, յերբ բոլշևիկների փոքրիկ անլեգալ կուսակցությունը կոում էր իր զենքը հանուն պրոլետարիատի հաղթանակի պայքարելու համար:

Ստալինը կուսակցությանը համախմբեց լենինյան դրոշի շուրջը: Լենինի—Ստալինի կուսակցությունն այժմ միասնական է, համախմբված իր ստալինյան Կենտկոմի շուրջը, ինչպես յերբեք:

Ստալինը Լենինի հետ միասին կոում էր կուսակցության հզորությունը: Այս հզորությունն է հենց, վոր հնարավորություն տվեց մեր յերկրի բանվոր դասակարգին բարձրանալու մինչև դերիշխող դասակարգի մակարդակը, ապահովելու պատմության լոկոմոտիվի վագքը և պահպանելու նրան ռելսերի վրա: Միայն այնպիսի կուսակցության առկայությունը, ինչպիսին մերն է, հնարավորություն տվեց մեր պետությունը, մեր յերկիրը բարձրացնելու մինչև իր ներկայիս մակարդակը:

Գաղափարապես—թեորիապես զինված, կազմակերպորեն—գործնականորեն ամրացած կուսակցությունը Ստալինի ղեկավարությամբ աշխատավորներին կտանի դեպի կոմունիզմի նոր հաղթանակներ:

* * *

Դարերով կեղեքված, հարստահարված, անկուլտուրական, տակավառագրագետ մեր յերկիրը ընկեր Ստալինի ղեկավարությամբ հասավ մեծագույն հաջողությունների:

Բոլոր խաչփողոցների չարանենգները, կաղետները, մենշևիկները, եսերները, բոլոր յերանգի բուրժուական գրողները ճչում եյին, թե բոլշևիկները խորտակում են պետությունը, խորտակում են Ռուսաստանը, իսկ այժմ ամբողջ աշխարհը տեսնում է, թե ինչպես այդ յերբեմնի հետամնաց Ռուսաստանը, ճորտության ու սարկության, գործադուլների, մուրացկանների, անգրագետների Ռուսաստանը, ժողովուրդների բանտ Ռուսաստանը դարձել է ծաղկող, կուլտուրական, գրագետ սոցիալիստական յերկիր: Այս ամենը Լենինի—Ստալինի կուսակցության ձեռքի գործն է և մեր հարազատ ու սիրելի Ստալինի հանճարեղ ղեկավարության գործը:

Ստալինի քաղաքականությունը մեր բոլշևիկյան կուսակցության քաղաքականությունն է: Այսօր ժողովուրդը հպարտությամբ է ասում իր մեծ մեքենավարին. Դու պատմության լոկոմոտիվը վոչ միայն պահեցիր ռելսերի վրա, դու արագացրիր նրա առաջընթացը հակառակ բոլոր խոչընդոտներին ու թշնամիների դավաճանություններին, դու հեղափոխության մեծ գնացքը հասցրիր մինչև Սոցիալիզմ կայարանը, իսկ այժմ քեզ ցանկանում ենք առողջություն ու կայտառություն, վորպեսզի հաղթականորեն մեզ հասցնես մինչև Կոմունիզմի կայարանը:

Այսօր խորհրդային միութենական հանրապետությունների ժողովուրդները, մեր մեծ կուսակցությունը, յուրաքանչյուր կոմունիստ առանձին, մեր Խորհրդային Միության աշխարհի բոլոր յերկրների բարեկամները հպարտ կլինեն ստալինյան մեծ հոբելյանով:

Այսօր յուրաքանչյուր վոք դրա լիակատար իմաստով ու նշանակությամբ կասի. «Կեցցե՛ մեր հարազատ, ամբողջ հոգով սիրելի Ստալինը»:



Ա. Ի. ՄԻԿՈՅԱՆ

# ՍՏԱԼԻՆԸ—ԱՅԴ ԼԵՆԻՆՆ Է ԱՅՍՕՐ

Այսօր լրանում է 60 տարին ընկեր Ստալինի ծննդյան օրից:

Մինչև յեզրը հեղափոխական անհաշտ պայքարով լի բոլշևիկյան յեռուն, անդուլ գործունեյության ավելի քան 40 տարիներ, դրանից 28 տարվա ղեկավար աշխատանք շտաբում—Լենինյան կուսակցության Կենտրոնական Կոմիտեյում:

Ընկեր Ստալինի ամբողջ կյանքն այնպես է միահյուսված մեր կուսակցության կյանքի հետ, վոր ինչպես չի կարելի գրել Համ. Կ(բ)Կ պատմությունը՝ առանց ընկեր Ստալինի կյանքի նկարագրության, այնպես էլ չի կարելի գրել ընկեր Ստալինի մասին, առանց բոլշևիկյան կուսակցության պատմության մասին գրելու:

Այն բանից հետո, յերբ լույս տեսավ ՀամԿ(բ)Կ պատմության համառոտ դասընթացը, վերացված է կուսակցության գաղափարական–դաստիարակչական աշխատանքի մեջ յեղած լուրջ բացը:

Պետք է հույս ունենալ, վոր ընկեր Ստալինի նշվող 60–ամյակը, վերջապես, կվերացնի մեր կուսակցության գաղափարական–դաստիարակչական աշխատանքի մեջ յեղած մյուս բացը, կօգնի մեզ՝ ստեղծելու ընկեր Ստալինի գիտական կենսագրությունը:

Այսօր մեր ամբողջ յերկիրը և աշխարհի ամբողջ աշխատավոր մարդկությունը մեծարում է իր առաջնորդին, հորը և բարեկամին—ընկեր Ստալինին: Ցեվ այս համաժողովրդական զգացմունքը դեպի Ստալինը. միանգամայն հասկանալի յե: Ցարական ինքնակալության օրով, ընդհատակի պայմաններում ընկեր Ստալինը, Լենինի ղեկավարությամբ, նրա հետ ուս–ուսի, ստեղծում ու դաստիարակում եր բոլշևիկյան կուսակցությունը, ցարիզմի դեմ և բանվոր դասակարգի ներսում բուրժուազիայի գործակալության ամեն տեսակի այլաձևությունների դեմ մղվող պայքարում: Ընկեր Ստալինը, Լենինի հետ միասին, նախապատրաստում եր Հոկտեմբերյան հեղաշրջման հաջողությունը և ապահովեց բանվոր դասակարգի հաղթանակը 1917 թվի հոկտեմբերին: Ընկեր Ստալինը, Լենինի հետ միասին, ստեղծեց և ամրապնդեց խորհրդային պետությունը, ռուսական պրոլետարիատի չուրջը

համախմբելով բոլոր ազգերի աշխատավորներին: Ընկեր Ստալինը քաղաքացիական պատերազմի ռազմաճակատի ամենածանր տեղամասերում զորավար էր—հակահեղափոխության նկատմամբ տարած հաղթանակների կազմակերպողը: Ընկեր Ստալինը Լենինի գործի արժանավոր շարունակողն է, մեր կուսակցության առաջնորդը, Խորհրդային Միության ժողովուրդների և ամբողջ աշխարհի ճնշված մարդկության առաջնորդը:

Ստալինը վոչ միայն հանրաճանաչ առաջնորդ է, այլև մարքսիզմ-լենինիզմի մեծ տեսաբան: Ստալինը պաշտպանել և պաշտպանում է մարքսիստական-լենինյան ուսմունքն ամեն գույնի օպորտունիստների վոտնձգություններից, լենինիզմը խեղաթյուրելու և աղճատելու ուղղությամբ նրանց կատարած անհամար փորձերից: Ստալինը պաշտպանել և պաշտպանում է մեր կուսակցության սկզբունքների բյուրեղյա մաքրությունը: Ստալինը վո՛չ միայն պաշտպանեց Մարքսի, Ենգելսի, Լենինի ամբողջ գիտական ժառանգությունը,—նա հանճարեղ կերպով գործադրեց այն, նա հարստացրեց այն, զարգացրեց այն նոր պայմաններում և նոր շատ բան մտցրեց մարքսիստական գիտության գանձարանը:

Ընկեր Ստալինը բանվոր դասակարգի վոխերիմ թշնամիների դեմ մղված մարտերում զարգացրեց ու մշակեց լենինյան թեորիան մեկ յերկրում սոցիալիզմի կառուցման հնարավորության մասին, զինելով այդ թեորիայով մեր կուսակցությանը, գաղափարապես վոգեշնչելով նրան դեպի մեծ պայքար՝ հանուն կոմունիզմի հաղթանակի:

Ընկեր Ստալինը հարստացրեց ու զարգացրեց մարքսիզմի տնտեսագիտական թեորիան՝ հետամնաց գյուղացիական յերկիրը հաղթանակած բանվոր դասակարգի ուժերով ինդուստրիալիզացիայի յենթարկելու իր պլանով:

Լենինի գաղափարը կոոպերացիայի մասին ընկեր Ստալինը մշակեց գյուղատնտեսության կոլեկտիվացման և կուլակությունը վորպես դասակարգ վերացնելու թեորիայի մեջ: Նա մշակեց կոլտնտեսային մասսաների հանրային կյանքի հիմքը—Գյուղատնտեսական արտելի կանոնադրությունը, կոլտնտեսային կարգի այդ սահմանադրությունը, վորի մեջ հանճարեղ կերպով զուգակցվում է հանրայինը՝ անձնականի հետ, վերջինս յենթարկելով առաջինին:

Մինչ այդ մարքսիզմը չգիտեր, թե բազմամիլիոն մանր գյուղացիական տնտեսություններն ինչպիսի ուղիներով կարող են և



պետք է անհատական գոյության ուղիներից անցնեն հանրային տնտեսության ուղիների վրա: Այժմ համաշխարհային պրոլետարիատը ունի բոլշևիզմի տեսականորեն հիմնավորված և գործնականորեն ստուգված ուսմունքը գյուղատնտեսության կոլեկտիվացման մասին:

Ընկեր Ստալինն է ստեղծել սոցիալիստական հասարակակարգի կառուցման ուսմունքը, վորը շարադրված է Խորհրդային Միության Սահմանադրության մեջ:

Ընկեր Ստալինը մեր տեսական գիտությունը հարստացրեց կազմակերպական հարցի վերաբերյալ ուսմունքով, ուսմունքով այն մասին, թե ինչպես պետք է հավաքել մասսաներին, ինչպես պետք է կազմակերպել նրանց ղեկավարումը, ինչպես պետք է պատրաստել ու վերադաստիարակել կադրերը, ինչպես պետք է կազմակերպորեն ապահովել կուսակցության քաղաքական գծի կիրառումը, ինչպես պետք է ստեղծել ներգործուն, կենտրոնացված, մասսաների հետ ամուր կապված, բարձր-սկզբունքայնությամբ կոմունիստական կուսակցություն:

Վերջապես, ընկեր Ստալինը վերացրեց մարքսիզմ-լենինիզմի տեսական գիտության մեջ յեղած լուրջ բացը: Հենց նա՛ ստեղծեց մարքսիզմ-լենինիզմի ուսմունքը սոցիալիստական հասարակության մեջ և կոմունիզմի օրոք պետության դերի ու նշանակության մասին, ինչպես նաև սոցիալիստական ինտելիգենցիայի դերի ու նշանակության մասին: Մինչև վերջին ժամանակներս տեսական մտքի այդ բնագավառը մնում էր թերամշակուն, իսկ մարքսիստների միջավայրում շարունակում եյին գործածության մեջ գտնվել այդ հարցի վերաբերյալ տեսական սխալ պատկերացումներ, վորոնք ցրվեցին XVIII կուսհամագումարում ընկեր Ստալինի տված զեկուցումով:

Ընկեր Ստալինը կուսակցության VI համագումարում ասաց.

«Գոյություն ունի դոգմատիկ մարքսիզմ և ստեղծագործական մարքսիզմ: Յես կանգնած եմ վերջինիս հողի վրա»:

Ընկեր Ստալինը, վորպես Լենինի ուղղափառ աշակերտը, վոչ միայն ապացուցեց, վոր ինքն իր բոլոր մտքերով ու գործողություններով կանգնած է ստեղծագործական մարքսիզմի հողի վրա, այլ նա հարստացրեց ու չտեսնված բարձրության հասցրեց մարքսիզմ-լենինիզմի տեսական գիտությունը:

Այնպես, ինչպես վոր Լենինը հարստացրեց մարքսիզմը, այնպես էլ Ստալինը հարստացրեց մարքսիզմ-լենինիզմը, սրելով այն

վորպես հեղափոխության սուր, չժանգոտող զենք, վորը կանգնած է ժամանակակից առաջավոր սոցիալական գիտության բարձրության վրա։ Ահա՛ թե ինչու այժմ կոմունիզմի ուսմունքն իրավամբ համարվում է Մարքսի—Էնգելսի—Լենինի—Ստալինի ուսմունք։

Ընկեր Ստալինի յուրաքանչյուր յելույթը նոր, հզոր ուժ է ներլցնում հեղափոխության մեջ, վորովհետև թեորիան Ստալինի մոտ զուգանում է հեղափոխական պրակտիկայի հետ անխզելիորեն կապված։

Վորպես թեորետիկ, Ստալինը թեորիայի ճառագայթներով լուսավորում է պայքարի պրակտիկ ուղին, դրանով իսկ հեշտացնելով հաղթության հասնելը, և վորպես կուսակցության ու ժողովրդի առաջնորդ, ղեկավարելով նրա ամբողջ պրակտիկ գործունեությունը, հարստացնում է թեորիան, ընդհանրացնելով նոր փաստերը, հեղափոխության նոր փորձը։ Այստեղից եվ՝ կուսակցության տեսական մտքի թարմությունը, այստեղից եվ՝ թեորիայի անխզելի կապը պրակտիկայի հետ, այստեղից եվ՝ գաղափարականությունն ու սկզբունքայնությունը կուսակցության պրակտիկ աշխատանքի մեջ։

Մեծագույն տեսաբաններ Մարքսին և Էնգելսին վիճակված չէր կենսագործել իրենց գաղափարները, վիճակված չէր տեսնել դրանց իրականացման պտուղները։

Միայն նրանց հանճարեղ շարունակողներին—Լենինին և Ստալինին վիճակվեց լինել միաժամանակ իրենց գաղափարների իրագործման պրակտիկ ղեկավարները, նրանց վիճակվեց իրենց ձեռքով կենսագործել առաջավոր մարդկության՝ իրենց իսկ առաջադրած՝ մեծագույն գաղափարները և տեսնել իրենց տեսական մտքի կենսագործման պտուղները։

Լենինը, հաղթականորեն ավարտելով քաղաքացիական պատերազմը, կարողացավ միայն, կասեցնելով նահանջը, ազդարարել հարձակումը կապիտալիզմի վրա։ Այդ հաղթական հարձակման ամբողջ ծանրությունը, հարձակում, վորն այսօր հասցրել է սոցիալիզմի հաղթանակին յերկրագնդի մեկ վեցերորդ մասում, ընկավ ընկեր Ստալինի լայն ուսերի վրա։

Ստալինի տեսական ու կազմակերպչական հանճարին ենք պարտական մենք այն բանի համար, վոր կուսակցությունը նչեց ու կիրառեց յերբեմնի հետամնաց մեր յերկրի ինդուստրիալիզացիայի չտեսնված բարձր տեմպեր, վորի հետևանքով ԽՍՀՄ-ն, բացառիկ կարճ ժամանակամիջոցում, զարգացման տեմպերի տե-



սակետից առաջ անցավ կապիտալիզմի յերկրներից։ Ընկեր Ստալինին ենք մենք պարտական այն բանի համար, վոր պատմականորեն ամենակարճ ժամկետում մեր յերկիրը հետամնաց ագրարային յերկրից դարձավ առաջավոր ինդուստրիալ յերկիր, տեխնիկական տեսակետից հասավ ու առաջ անցավ կապիտալիզմի առաջավոր յերկրներից, իսկ այժմ նպատակ է դրել մեկ ուրիշ—ավարտական խնդիր, տնտեսական տեսակետից, բնակչության յուրաքանչյուր շնչին ընկնող արտադրանքի թողարկման տեսակետից ևս, ամենակարճ ժամկետում, կապիտալիզմի առավել հարուստ յերկրներին հասնելու և անցնելու խնդիրը։ Հենց Ստալինին ենք մենք պարտական այն բանի համար, վոր պրակտիկ կերպով լուծում ենք ամենակարճ ժամկետում սպառման բոլոր ու ամեն տեսակ առարկաների առատություն ստեղծելու խնդիրը—լիակատար կոմունիզմի բազան։

Հենց Ստալինը հասավ այն բանին, վոր վոտքի հանեց ու կազմակերպեց չքավորությանը, ամրապնդեց դաշինքը միջակի հետ, կուլակի սահմանափակման քաղաքականության պայմաններում, գյուղատնտեսությունը դուրս բերեց հետպատերազմյան փլուզումից և կառուցեց ինդուստրիան, հաջորդ էտապում կուլակության սահմանափակման քաղաքականությունից համատարած կոլեկտիվացման բազայի վրա նրա լիկվիդացիային անցնելու համար, և դասակարգային թշնամու դեմ մղած անողոք պայքարի միջոցով բազմամիլիոն գյուղացիությանը դուրս բերեց կոլտնտեսային ունևոր կյանքի սոցիալիստական մագիստրալային ճանապարհը։

Հենց Ստալինին ենք մենք պարտական այն բանի համար, վոր կուսակցությանը հաջողվեց, ինչպես յերբեք, ամրապնդել խորհրդային իշխանությունը, արմատախիլ անել կապիտալիզմի մնացորդները, բոլոր աշխատավորներին համախմբել խորհրդային իշխանության շուրջը, մեր անծայրածիր յերկրի բոլոր ժողովուրդներին միավորելով սոցիալիստական անխախտ դաշինքի մեջ։

Այն մեծ հաղթանակները, վոր կուսակցությունը ձեռք է բերել Ստալինի գլխավորությամբ, հնարավոր դարձան կուսակցության շուրջը, Ստալինի շուրջը ժողովրդական լայն մասսաների սերտ համախմբման շնորհիվ։ Մասսաների հետ, ժողովրդի հետ անխզելի կապերով կապվելու, նրա հետ միաձուլվելու և նրան իր հետևից տանելու հմուտ կարողությունը Ստալինի, վորպես

առաջնորդի, գլխավոր գիծն է։ Այդ գիծը կապված է, ի միջի այլոց, նաև այն բանի հետ, վոր ինքնակալության դեմ մղված պայքարի ժամանակաշրջանում, անվերջ հետապնդվելով ժանդարմերիայի կողմից, Ստալինն անընդհատ հեղափոխական պայքար էր մղում հիմնական բանվորական կենտրոններում, գլխավորելով կուսակցությունը յերկրի ներսում և ապահովելով բանվոր դասակարգի հեղափոխական պայքարի լենինյան ղեկավարությունը։

Բոլորին հայտնի յե ժողովրդական մասսաների խոր, անսահման վստահությունը Ստալինի նկատմամբ։ Միայն դրանով կարելի յե բացատրել, վոր քաղաքականության մեջ կատարվող կըտրուկ շրջադարձերը, վորոնց ժամանակ այլ պայմաններում անխուսափելի կլինեյին տատանումներն ու շփոթությունն առանձին շարքերում, իրենց ղեկավարության նկատմամբ մասսաների ունեցած անսահման վստահության, քաղաքականության մեջ կտրուկ շրջադարձեր կատարելու ստալինյան վարպետության շնորհիվ—դրանք բոլորը կատարվում են լիակատար հանգստության և դեպի գործի հաջողության անսասան հավատի պայմաններում։ Կուսակցության, ժողովրդի մեջ ստեղծվել է չտեսնված վստահություն դեպի Ստալինը, անսասան հավատ դեպի կուսակցության գլխավոր գծի անսխալականությունը և դեպի կուսակցության քաղաքականության մեջ կատարվող ամեն մի շրջադարձի հաջողությունը, վորովհետև յուրաքանչյուրը գիտե, վոր ղեկի մոտ կանգնած է Ստալինը, իսկ այդ նշանակում է, վոր ինչ էլ կատարվի—կարելի յե հանգիստ լինել, նշանակում է՝ հաղթանակն ապահովված է։

Այս համաժողովրդական հավատը դեպի Ստալինը, վորպես առաջնորդ—խորհրդային յերկրի անխորտակելի ուժը—նոր մեծ հաղթանակների յերաշխիքն է։

Մենք չեյինք ունենա այսօրվա հաջողությունները, յեթե չլիներ բոլշևիկյան կուսակցության միաձույլ միասնությունը։

Առանց չափազանցության կարելի յե ասել, վոր մեր կուսակցության պատմության մեջ յերբեք չի յեղել կուսակցության գաղափարական ու կազմակերպական այնպիսի միասնություն, վորին նա հասել է այժմ, Ստալինի օրով։ Այդ միասնությունը ստեղծվել է բանվոր դասակարգի մեջ բուրժուական գործակալության դեմ մղված անհաշտ պայքարում, տրոցկիստական-բուխարինական դավաճանների դեմ մղված պայքարում։

Ընկեր Ստալինից միշտ վախեցել են կուսակցության մեջ յեղած բոլոր օպորտունիստները, բոլոր բուրժուական գործակալները, և վոչ միայն այն ժամանակ, յերբ կուսակցությունը կանգնած էր իշխանության գլուխ, այլև այն ժամանակ, յերբ նա ընդհատակում էր։

Պատմում են, վոր հեղափոխությունից առաջ Բաքվում մենշևիկները հօգուտ բուրժուազիայի շահերի պառակտելով կուսակցության շարքերը, հաճախ համաձայնվում եյին միանալ բոլոր բոլշևիկների հետ, այն մշտական պայմանով, վոր դա լիներ առանց Ստալինի ու նրա մերձավոր ընկերների, ստահոդ կերպով մեղադրելով նրանց պառակտողականության մեջ։

Տրոցկիստական-բուխարինական թշնամիները կուսակցության մեջ, դիմակավորվելով կուսակցության միասնության մասին կեղծավոր ֆրազներով, թուլացնում եյին նրա շարքերն օպորտունիզմի թույնով, ստեղծում եյին իրենց ֆրակցիաները, պառակտելով կուսակցությունը, գրոհում եյին լենինիզմի վրա և պատրաստում եյին հեղափոխության ուղղակի դավաճանելու գործը, բավարարում աղեկուլացիա կատարելով կուսակցական միասնության հասնելու և պառակտման վտանգը կանխելու ուղիների մասին այն ժամանակ տարածված վորոշ հայացքներով։ Տրոցկիստական-բուխարինական թշնամական բանակից յեկող բոլոր գրոհները կենտրոնանում եյին ընկեր Ստալինի անձնավորության դեմ։ Թշնամիները գիտեյին, թե ում են խփում, և վոչ մի տեսակ միջոցի առաջ կանգ չեյին առնում։ Փորձելով պառակտել ու քայքայել բոլշևիկյան կուսակցությունը, նրանք ընկեր Ստալինին ստահոդ կերպով մեղադրում եյին պառակտողականության մեջ։

Ընկեր Ստալինն անդուլ կերպով պայքարելով իսկական հեղափոխականների միասնության համար, միշտ դեմ էր օպորտունիստների և բուրժուական պոլիտիկանների հետ միասնության, վորոնք խցկվել եյին պրոլետարիատի շարքերը։ Նա ձըգտում էր նրանց վռնդմանը կուսակցության շարքերից, պաշտպանելով կուսակցության շարքերն ամեն տեսակ խորթ ու թշնամական տարրերի ներթափանցումից։

Ընկեր Ստալինը կարողացավ գաղափարապես մերկացնել կուսակցության թշնամիներին, վորոնք խցկվել եյին նրա շարքերը, կազմակերպորեն ջախջախել նրանց և հասնել այն բանին, վոր ճիվաղները դուրս շպրտվեցին հեղափոխությունից, իսկ կուսակցությունը համախմբվեց Լենինի դրոշի ներքո և դարձավ միասնական, ինչպես յերբեք։

Անհաշտությունն օպորտունիզմի ամեն տեսակ այլանդակությունների և լենինիզմից կատարվող բոլոր շեղումների նկատմամբ, սկզբունքային անողոքությունն ու քաղաքականության տոկունությունը,—ստալինյան ղեկավարման այս հիմնական գծերն ապահովեցին մեր կուսակցության միաձույլ միասնությունը և նրա հաղթանակը:

Մեզ դաստիարակում, մեզ կազմակերպում, մեզ ոգևորում են Լենինի կերպարը և Ստալինի կերպարը:

Չի կարող չզարմացնել Ստալինի վերաբերմունքը դեպի Լենինը: Ստալինն անսահմանորեն սիրում և սրբությամբ մեծարում է Լենինին: Ոչ մի հայր այնպիսի սեր չի վայելել իր որդու կողմից, ոչ մի ուսուցիչ՝ իր աշակերտի կողմից, ինչպես Լենինը՝ Ստալինի կողմից:

Ընկեր Ստալինն ափսոսանքով ասում է.—Ա՜խ, շա՜տ ափսոս, որ այժմ կենդանի չէ Լենինը: Ծանր ժամանակ ապրեց ու աշխատեց նա: Մի տեսներ նա այժմ, թե ինչպիսի՜ ուղի ենք մենք անցել, ինչի՜ ենք մենք հասել: Գո՜հ կլիներ Իլյիչը:

Լենինի ինչպիսի՜ մեծասքանչ կերպար է տվել ընկեր Ստալինը 1924 թվին Լենինի մասին արտասանած իր ճառի մեջ: Մեծ մարդու ինչպիսի՜ սեր, հարգանք ու խոնարհում իր մեծ ուսուցչի առջև:

Ընկեր Ստալինը Լենինի մասին ասել է.

«Ոչ թե պարզապես ղեկավարներից մեկն է, այլ բարձրագույն տիպի մի ղեկավար, **լեռնային արծիվ**, որը պայքարի մեջ երկյուղ ասած բանը չի ճանաչում և կուսակցությունը համարձակորեն առաջ է տանում ռուսական հեղափոխական շարժման անծանոթ ուղիներով...

**Լենինի պարզությունն ու համեստությունը**, աննկատելի մնալու կամ, համենայն դեպս, աչքի չընկնելու և իր բարձր դիրքը չշեշտելու այդ ձգտումը...

**Համոզելու արտասովոր ուժը**, փաստարկման պարզությունն ու հստակությունը, կարճ ու ամենքին հասկանալի ֆրազները, ցուցամոլության բացակայությունը, գլխապտույտ ժեստերի և տպավորություն գործելու ձգտող էֆեկտավոր ֆրազների բացակայությունը...

«**Չնվնվալ պարտության առթիվ**»—այդ՝ Լենինի գործունեության մեջ հենց այն առանձնահատկությունն է, որը նրան օգնում էր իր շուրջը մինչև վերջն անձնվեր և իր ուժերին հավատացող բանակ համախմբելու:



«**Հաղթանակով չպարծենալ**»—այդ՝ Լենինի բնավորության մեջ հենց այն առանձնահատկությունն է, որը նրան օգնում էր զգաստորեն կշռելու հակառակորդի ուժերը և կուսակցությունն ապահովագրելու հնարավոր անակընկալներից:

«**Սկզբունքային քաղաքականությունը միակ ճիշտ քաղաքականությունն է**»—սա նույն այն ֆորմուլան է, որի օգնությամբ Լենինը գրոհով վերցնում էր նոր «անառիկ» դիրքեր, հեղափոխական մարքսիզմի կողմը գրավելով պրոլետարիատի լավագույն տարրերին:

**Հավատ մասսաների ստեղծագործական ուժերին**—սա Լենինի գործունեության մեջ հենց այն առանձնահատկությունն է, որը նրան հնարավորություն էր տալիս իմաստավորելու տարերքը և նրա շարժումն ուղղելու պրոլետարական հեղափոխության հունով:

**Հանճարեղ կանխատեսություն**, վերահաս դեպքերի ներքին իմաստն արագորեն ըմբռնելու և գուշակելու ընդունակություն...»:

Ստալինը նկարագրել է Լենինի ամենալիակատար, ամենաճշմարտացի և ամենահմայիչ կերպարը, մարդկության մեծագույն հանճարի կերպարը:

Երբ փորձում ես ուրվագծել Ստալինի՝ Լենինի աշակերտի,—այսօրվա Լենինի կերպարը, ապա չես գտնում այլ բառեր, այլ արտահայտություններ Ստալինի ճշմարտացի բնութագրման համար, քան այն, որոնցով նա նկարագրել է Լենինի կերպարը:

Գեղարվեստական խոսքի մեծ վարպետ Հանրի Բարբյուսն արտահայտելով ամբողջ մարդկության աշխատավորների մտքերն ու զգացմունքները Ստալինի մասին, գրել է.

«Ահա նա—մեր ժամանակակիցներից մեծագույնն ու նշանավորագույնը...

Իր ամբողջ հասակով նա խոյանում է Եվրոպայի վրա և Ասիայի վրա, անցածի վրա և գալիքի վրա: Այդ ամենահռչակավոր և միևնույն ժամանակ համարյա ամենաանհայտ մարդն է աշխարհում...

Գիտնականի գլխով, բանվորի դեմքով, հասարակ զինվորի հագուստով մի մարդ...

Այդ—երկաթե մարդ է: Ազգանունը մեզ տալիս է նրա կերպարը: Ստալի՛ն—պողպա՛տ: Նա անընկճելի է և

ձկուն, ինչպես պողպատը: Նրա ուժը—այդ՝ նրա անդուլդական ու առողջ միտքն է, նրա իմացության լայնությունը, ներքին զարմանալի հավաքվածությունը, կիրքը՝ պարզության նկատմամբ, վճռի անողոք հետևողականությունը, արագությունը, հաստատությունն ու ուժը, մշտական հոգատարությունը մարդկանց ընտրության նկատմամբ:

Լենինն ապրում է ամենուրեք, վորտեղ կան հեղափոխականներ: Բայց կարելի յե ասել, վոր վոչ մի մարդու մեջ այնպես մարմնավորված չեն Լենինի միտքն ու խոսքը, ինչպես Ստալինի մեջ: Ստալինը—Լենինն է այսօր»:

Այո, Ստալինը—Լենինն է այսօր:

Ստալինն ունի նուրբ հոգացողություն ընկերների մասին, բարեկամների մասին, ժողովրդի մասին: Նա, ինչպես վոր Լենինը, մարմնավորում է ամենախոր սերը դեպի մարդը և անձնազոհ պայքարը նրա լիակատար ազատագրման համար, նրա յերջանկության համար: Ստալինի համար խորթ են ամեն տեսակ թուլամորթությունն ու հանդուրժողությունը դեպի ժողովրդի թշնամիները: Ստալինն զգույշ է և հաշվենկատ, յերբ հարկավոր է վճիռ ընդունել: Ստալինը համարձակ է, քաջարի ու անողոք, յերբ հարցը վճռված է և հարկավոր է գործել: Յերբ նպատակը դրված է և պայքարը հանուն նրա սկսված է—վոչ մի շեղում՝ այս ու այն կողմ, ուժերի և ուշադրության վոչ մի ցրում, քանի դեռ գլխավոր նպատակը ձեռք չի բերված, քանի դեռ հաղթանակը չի ապահովված: Ստալինն ունի յերկաթյա տրամաբանություն: Անհողդողդ հետևողականությամբ մեկ դրույթը բըղխում է մյուսից, մեկը՝ հիմնավորում է մյուսին, մտքերի և գործողությունների մեջ վոչ մի ցրվածություն, ամբողջապես զոտեպնդված, ամբողջապես կենտրոնացած, ամբողջապես սևեռված մի նպատակի վրա, պատրաստ՝ ամեն ինչ մաքրելու ճանապարհից, փշրելու ամեն տեսակ խոչընդոտներ՝ հանուն մարդկության ազատագրման մեծ նպատակի:

Դեպի բոլշևիզմի շատ փայլուն հաղթանակները տանող ուղին ընկած է ժամանակավոր պարտությունների վրայով: Այդպիսի վայրկյաններին Ստալինի, վորպես մարդու ու հեղափոխականի, բոլոր անձնական հատկությունները զարմանք են պատճառում շրջապատողներին: Նա անվեհեր է ու համարձակ, նա անսասան է, նա սառնարյուն է ու հաշվենկատ, նա չի հանդուրժում տատանվողներին, նվնվացողներին ու թնդթնդացողներին: Յեվ հաղթությունից հետո նույնպես, նա պահպանում է հանդարտությունը, հրապուրվողներին զսպում է, չի նիրհում դափնիների վրա, նա ձեռք բերված հաղթանակը պատվանդան է դարձնում նոր հաղթության հասնելու համար:

Հարցի քննարկման ընթացքում, յերբ նոր է հասունանում վճիռը, նա հարցուփորձ է անում բոլորին, յերբեմն կարծես թե նույնիսկ տատանվում է, դրանով ստուգում է շրջապատողներին, ստուգում է իր միտքը, թեև այն նրա մոտ արդեն մտածված է, վորոշված: Նա ուշի-ուշով կշռադատում է յուրաքանչյուր շանսը, ուշի-ուշով պատրաստում է ամեն մի վճիռ, վորպեսզի չհանդիպի անակնկալների, վորպեսզի այն ընդունելուց հետո, գործի առանց տատանման և ժողովրդին իր հետևից առաջ տանի հաջողության նկատմամբ անհողդողդ հավատով:

Ստալինը—մեծագույն անվեհերության, պայքարի նկատմամբ անհողդողդ կամքի և կոմունիզմի հաղթանակի նկատմամբ հավատի մարմնացումն է:

Այստե՛ղ է ստալինյան ղեկավարման հաջողությունների ըմբռնման բանալին, այստեղ է կուսակցության և պետության Ստալինյան ղեկավարման նկատմամբ համաժողովրդական հավատի բանալին:

Ամբողջ հասակով մեկ կանգնած է Ստալինը՝ Լենինի կողքին: Լենինի—Ստալինի մեծ կերպարն ուղեցույց աստղ է մարդկության միլիոնավոր աշխատավորների համար՝ հանուն իրենց ազատագրման մղվող պայքարում:

Պանծալի 60-ամյակի օրը մենք կարող ենք հայտարարել, վոր մեր բոլոր ուժերով կձգտենք այն բանին, վոր նմանվենք Լենինին ու Ստալինին ամեն բանում, վոր լինենք Լենինյան—Ստալինյան տիպի քաղաքական գործիչներ, լինենք մեր խնդիրների բարձրության վրա, չիջնենք մինչև քաղաքական ոբիվատելների մակարդակը, մեր մտքերի ու մեր գործողությունների մեջ լինենք պարզ և վորոշակի, մարտում լինենք անվախ և ժողովրդի թշնամիների նկատմամբ անողոք, ազատ լինենք ամեն տեսակ խուճապից, բարդ հարցերի լուծման ժամանակ լինենք իմաստուն ու չշտապող, լինենք ճշմարտացի ու ազնիվ, ինչպես Լենինը և Ստալինը, սիրենք մեր ժողովրդին, ինչպես սիրում էր նրան Լենինը և սիրում է նրան Ստալինը:

Թող ապրի ընկեր Ստալինը շատ, յերկար տարիներ նույնպիսի թարմ, յերիտասարդ ու առույգ, ուժերով լի, ինչպես վոր միշտ:

Մ. Ի. ԿԱԼԻՆԻՆ

# ԸՆԿԵՐ ՍՏԱԼԻՆԻ ԾՆՆԴՅԱՆ ՎԱԹՍՈՒՆԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

Այսօր լրացավ ընկեր Ստալինի ծննդյան 60 տարին:

Խորհրդային Միության ժողովուրդները ջերմորեն ողջունում են իրենց մեծ առաջնորդին: Կապիտալիստական յերկրների մարտնչող պրոլետարիատն ու համայն աշխարհի կեղեքվածները մեծ հպարտությամբ են նայում ընկեր Ստալինին, նրա հետ կապելով իրենց լավագույն հույսերն ու իղձերը:

Ամբողջ աշխատավորությունը, ամբողջ պրոգրեսիվ մարդկությունը հրճվանքով է նշում այնքան նշանավոր հոբելյանական տարեթիվը: Յեվ ինչպե՛ս չհրճվել, յերբ մտաբերում ես ընկեր Ստալինի՝ բոլոր կեղեքվածների ու շահագործվածների շահերի համար մղած պայքարի յերկար փշոտ ճանապարհը, մինչև վոր նրա ղեկավարությամբ մի հսկայական յերկիր՝ աշխարհի մեկ վեցերորդ մասը, հասավ սոցիալիզմին:

Հսկայական են ընկեր Ստալինի ծառայություններն ամբողջ աշխարհի աշխատավորության առջև, Խորհրդային Միության ժողովուրդների, և առանձնապես ռուս ժողովրդի առջև: Նրա հասարակական-քաղաքական գործունեությունը պետք է դառնա ամենալայն մասսաների սեփականություն, վորովհետև մարդու խորապես գաղափարական կյանքի օրինակ է ծառայում:

Ընկեր Ստալինի արտաքին, բոլորի համար տեսանելի, պրակտիկ գործունեության փաստերի նույնիսկ պարզ խրոնոլոգիական շարադրանքը վկայում է այն հսկայական աշխատանքի մասին, վոր նա կատարել է Ռուսաստանի, հետևաբար նաև ամբողջ աշխարհի, հեղափոխական շարժման զարգացման համար: Յեվ նույնիսկ փաստերի այդպիսի շարադրանքը չի կարող ծածկել ընկեր Ստալինի լարուն զոհունակությունը, նրա հերոսությունը, նպատակասլացությունը, հասարակության զարգացման օբյեկտիվ օրենքների խոր ըմբռնումը:

Տասնյոթամյա պատանին իրեն կյանքի խնդիր դրեց կեղեքվածներին ազատել կապիտալիզմի շղթաներից, ամեն տեսակ կե-

ղեքումից։ Յեվ այս գաղափարին նա նվիրվեց ամբողջովին։ Նրա ամբողջ հետագա կյանքը յենթարկված եր այս գաղափարին, և միմիայն դրան։

Փառասեր մարդիկ յերբեմն նվաստացնում են հասարակ աշխատանքը, ասելով, թե այդ հասարակ, առանձնապես տեխնիկական, աշխատանքը խանգարում է իրենց, արգելակում է իրենց աճումը, նեղացնում նրանց տեսադաշտը։ Ընկեր Ստալինի հասարակական գործունեյությունը վառ ցուցադրումն է այն բանի, վոր գաղափարայնությունն ամենահասարակ աշխատանքը դարձնում է քաղաքական մեծ գործ։

Թողնելով սեմինարիան, կապերը խզելով ամբողջ լեղալ շրջապատի հետ, ընտանիքի հետ, անցնելով ընդհատակ, մի՞թե ընկեր Ստալինը վորևէ անձնական նպատակ եր հետապնդում, մի՞թե նա ձգտում եր այնպիսի աշխատանքով զբաղվելու, վորը նպաստեր միայն սեփական տեսադաշտի զարգացման (այսպիսի «հեղափոխականները» շատ եյին հեռանում ընդհատակից, սա նրանց չեր բավարարում իր «սև» աշխատանքով)։ Վոչ, ընկեր Ստալինի խնդիրն եր առավելագույն ուժով տալ հեղափոխական բանվորական շարժմանը։

Ամեն մի աշխատանք, վոր ոգնում եր այս շարժման, նրա համար արժեքավոր եր և գրավում իսկ նաև բարձր-գաղափարական։ Այս պատճառով եվ ընկեր Ստալինին մենք տեսնում ենք ամեն տեսակի ու ձևի հեղափոխական աշխատանքներում։ Ընկեր Ստալինը ընդհատակյա խմբակների կազմակերպիչ է, վորն արթնացնում է բանվորների հեղափոխական եներգիան և այն ուղղում ընդհանուր հեղափոխական պայքարի հունով։ Նա թռուցիկների հեղինակ է, վոր ինքն է տպագրում ու բաժանում։ Նա ղեկավարում է բանվորների գործադուլները, գնում է ցույցերի գլուխ անցած, իբրև ղեկավար յենթարկվելով առավելագույն վտանգի։ Նա առաջնորդող հոդվածներ է գրում՝ կոչ անելով կառուցելու հեղափոխական բանվորական կուսակցություն, հոդվածներ, վորոնք մերկացնում, մտրակում են ոպորտունիզմին իր բոլոր տեսակների ու արտահայտությունների մեջ։

Յեվ այսպես, իր ամբողջ կյանքում թափառելով բանտից բանտ և աքսորից աքսոր, կուսակցության կամքով փոխադրվելով մի քաղաքից մյուսը, այնտեղ, վորտեղ կուսակցությունն առանձնապես կարիք ուներ անձնվեր աշխատողների, ընկեր Ստալինը Լենինի հետ միասին ստեղծեց, կառուցեց ու աճեցրեց մեր կուսակցությունը։ Լենինի հետ միասին նա ղեկավարում եր կուսակցությունը, հեղափոխական շարժումն ու զինված ապստամբությունը հոկտեմբերյան օրերին։



Ընկեր Ստալինն անսահման սիրում է Լենինին։ Այս սերը օրգանական է, այն բխում է նրանց նպատակների ու ձգտումների ընդհանրությունից։ Լենինի հեղինակությունը նրա համար առարկելի չէ։

Յեթե դիմելու լինենք պատմական անալոգիաներին, ապա ընկեր Ստալինի վերաբերմունքը դեպի Լենինը հիշեցնում է Լենինի վերաբերմունքը դեպի Մարքսը, միայն այն ուղղումով, վոր ընկեր Ստալինն անմիջականորեն շատ տարիներ աշխատել է Լենինի հետ։ Սրանով յես ուզում եմ ասել, վոր նրա վերաբերմունքը դեպի Լենինն ավելի մոտիկ է, ավելի ինտիմ։

Ընկեր Ստալինը հիանալի կերպով ուսումնասիրել է Լենինին, նա կատարելությամբ գիտե վոչ միայն նրա բոլոր յերկերը, այլև նրանցից յուրաքանչյուրի հանդես գալու պատճառները։ Կասկածի յենթակա չէ, վոր Ստալինը քիչ ազդեցություն չի ունեցել Լենինի վրա։

Լենինի մահվանից հետո անողոք պայքար մղելով կուսակցության և լենինիզմի թշնամիների դեմ, ընկեր Ստալինը պաշտպանեց կուսակցության ամբողջականությունն ու ամրապես ցեմենտեց նրա շարքերը մարքսիզմ-լենինիզմի գաղափարներով։ Նա վեր բարձրացրեց Լենինի դրոշը, վորն իրավացի կերպով անվանում են Լենինի—Ստալինի դրոշ։ Այս դրոշի տակ խորհրդային ժողովուրդը կառուցում է կոմունիզմ։

Ակամայից մտաբերում ես Գերցենի խոսքերը դեկտեմբերի 14-ի մարդկանց մասին, վոր դա հերոսների ֆալանգա յեր, «ինչ-վոր դյուցազուններ՝ վոտից մինչև գլուխ կոփված զուտ պողպատից, սխրակից մարտիկներ...» Այդպիսի մարդկանց թվին է պատկանում նաև ընկեր Ստալինը։

Բայց նա աճել և քաղաքականապես կոփվել է բանվոր դասակարգի հեղափոխական ավանգարդի շարքերում։ Այդ դասակարգի շահերն ու նրա գաղափարները, այսինքն՝ գիտական սոցիալիզմի գաղափարներն է պաշտպանում նա։ Միջազգային պրոլետարիատի գործին նա տալիս է իր արյունը կաթիլ առ կաթիլ։ Իսկ այս ամենը հնարավոր ու մատչելի յէ միայն այն մարդուն, վորն ոժտված է մարքսիզմ-լենինիզմի վողջ իմաստությամբ։

Ընկեր Ստալինի թեորիական աշխատությունները հսկայական

ավանդ են մարքսիզմ-լենինիզմի գանձարանի մեջ, վորոնց ուսումնասիրությունը լայն հեռանկարներ է բացում: Բավական է հիշեցնել ընկեր Ստալինի դասախոսությունները «Լենինիզմի հիմունքների մասին»: Մարքսիզմ-լենինիզմի ըմբռնման սեղմությամբ, պարզությամբ, ամբողջականությամբ ու խորությամբ սա միակ յերկն է մարքսիստական-լենինյան գրականության մեջ: Իզուր չէ, վոր սա միլիոնավոր մարդկանց սեղանի գիրքն է:

Մարքսիստական-լենինյան թեորիան շատ առաջ մղեց ընկեր Ստալինի ուսմունքը, վոր վերաբերում է պրոլետարական դիկտատուրայի պետությանը, նրա դերին իբրև մի հզոր գործիքի բանվոր դասակարգի ձեռքին կոմունիստական հասարակության կառուցման գործում:

Պրոլետարիատի դիկտատուրայի և սոցիալիստական հեղափոխության մարքսիստական-լենինյան թեորիայի մի չափազանց կարևոր մասն է հանդիսանում ազգային հարցը: Ազգային հարցի վերաբերյալ բոլշևիկյան շկոլան Լենինն ու Ստալինը ստեղծել են Հոկտեմբերից շատ առաջ: 1913 թվի հունվարին ընկեր Ստալինը գրեց «Մարքսիզմը և ազգային հարցը» հռչակավոր բրոշյուրը, վորտեղ կլասիկ կերպով հիմնավորվեց ազգային հարցի բոլշևիկյան թեորիան և բոլշևիկյան լոզունգն ազգերի ինքնորոշման իրավունքի մասին: Այս դրույթները մինչև այժմ էլ հանդիսանում են մեր կուսակցության ազգային քաղաքականության ղեկավար սկզբունքները:

Ամենավերջերս ընկեր Ստալինի նախաձեռնությամբ և ամենաանմիջական մասնակցությամբ ստեղծվեց «ՀամԿ(բ)Կ պատմության համառոտ դասընթացը»: Թեորիական այս աշխատության արժեքը մարքսիստական մտքի զարգացման համար ակներև է բոլոր նրանց համար, ովքեր ձգտում են ըմբռնել և յուրացնել մարքսիզմ-լենինիզմը:

Ընկեր Ստալինը կատարելությամբ տիրապետում է մարքսիզմ-լենինիզմի մեթոդին, վորը նա պաշտպանեց և հիմնավորեց բազմաթիվ թշնամիների դեմ մղած պայքարում, վորը նա կոնկրետացրեց և ավելի զարգացրեց կապիտալիստական շրջապատման մեջ, կոմունիզմին անցնելու համար մղվող պայքարում սոցիալիզմ կառուցելու հարստագույն փորձով:

Ավելի, քան քառասուն տարի ընկեր Ստալինը հանդիսանում է պրոլետարիատի գործի անընկճելի մարտիկ: Լենինի հետ միասին նա ճեղքեց կապիտալիստական ֆրոնտը և ստեղծեց պրոլե-



տարիատի դիկտատուրայի պետություն: Սկսած 1924 թվից նա կանգնած է կոմունիստական կուսակցության և խորհրդային ժողովրդի գլուխ: Նա՝ միլիոնավոր աշխատավոր մարդկության հույսն է ու փարոսը: «Լենին—Ստալին» ժողովրդական հանդիսավոր բացականչության մեջ մենք լսում ենք նրանց մեծ մտքերի միասնությունը:

Մարդկությունն իր պատմության մեջ մեծ, հանճարեղ մարդիկ քիչ չունի, բայց Լենինն—Ստալինը միակն են իրենց տեսակի մեջ: Նրանք վոչ միայն ինքնին մեծ մարդիկ են: Նրանց արմատները խորանում են մասսաների մեջ, նրանց հետ հարազատորեն են կապված աշխարհի աշխատավոր մասսաների լավագույն իդեալներն ու ձգտումները: Մասսաներն ուզում են, վոր նրանք մեծ լինեն, նրանց մեծության մեջ մասսաները տեսնում են իրենց մեծությունը: Ահա թե ինչու ամբողջ Խորհրդային ժողովուրդը, կապիտալիստական յերկրների աշխատավոր մասսաներն ու ամբողջ առաջադեմ մարդկությունը հպարտությամբ են արտասանում. «Մե՛ծ Լենին», «Մե՛ծ Ստալին», «Կեցցե՛ ու յերկա՛ր տարիներ ապրի հարազատ ու մեծ ընկեր Ստալինը»:

Ա. Ա. ԱՆԴՐԵՅԵՎ

# ՍՏԱԼԻՆԸ ՅԵՎ ԿՈԼՏՆՏԵՍԱՅԻՆ ՄԵԾ ՇԱՐԺՈՒՄԸ

Այսօր Խորհրդային Միության ժողովուրդները նշելու յեն ընկեր Ստալինի վաթսունամյակը: Արտասովոր ու բազմակողմանի յե ընկեր Ստալինի կյանքն ու գործունեյությունը: Ընկեր Ստալինը խորագույն թեորետիկ ե, վորը հարստացնում ե մարքսիզմ-լենինիզմը նոր բովանդակությամբ, և միաժամանակ նա այնպիսի պրակտիկ ե, վորը կուսակցության ամենորյա կյանքին, տնտեսությանը և պետական աշխատանքի կազմակերպմանը վերաբերող վոչ մի հարցի կողքով չի անցնում:

Ընկեր Ստալինը քաղաքական ղեկավար ե և միևնույն ժամանակ տնտեսության, կուլտուրայի, պաշտպանության կազմակերպող: Ընկեր Ստալինը մեծ Խորհրդային Սահմանադրության—կոմունիզմի այդ իսկական մանիֆեստի հեղինակն ե, սակայն նրան կարելի յե տեսնել նաև վորպես դպրոցական դասագրքերը խմբագրողի, Մոսկվայի աշխատողներին խորհուրդներ տվողի, թե ինչպես ավելի լավ կլինի կառուցել տներն ու փողոցները, նա նախաձեռնող ե և ակտիվ մասնակից կոլտնտեսային շինարարության պրակտիկ հարցերին, առանձին ֆաբրիկաների և գործարանների աշխատանքի մշակմանը:

Ընկեր Ստալինի այդ ամբողջ բազմակողմանի գործունեյությունն անհնար ե ընդգրկել ինչ-վոր մեկ հոդվածով կամ զեկուցումով, այդ պատճառով յես ուզում եմ կանգ առնել ընկեր Ստալինի գործունեյության միայն մեկ կողմի վրա—կոլտնտեսային մեծ շարժման կազմակերպման և ղեկավարման գործում նրա ունեցած դերի վրա:

Այսօր մեր անծայրածիր յերկրի յուրաքանչյուր կոլտնտեսական և կոլտնտեսուհի, ամեն մի գյուղ, շեն և կոլտնտեսություն նշելու յեն ընկեր Ստալինի վաթսունամյակի նշանակելի տարեթիվը, և դրա հետ միասին տալու յեն անցած ուղու հանրագումարները: Իհարկե, այլ կերպ ել չի կարող լինել, վորովհետև Ստալինի անվան հետ ե կապված մի ամբողջ արմատական հեղա-

շրջում, վոր տեղի յեն ունեցել միլիոնավոր գյուղացիների կյանքի մեջ:

Բոլշևիկների կուսակցության ղեկավարությամբ, Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ Հեղափոխության կազմակերպիչներ Լենինի և Ստալինի ղեկավարությամբ, 1917 թվին կատարվել է գյուղացիների իսկական ազատագրումը կալվածատերերից և սակավահողությունից: Սակայն այդ յեղել է միայն սկիզբը, նախապատրաստությունն այն բանի, վորպեսզի հետո, մի փոքր ավելի ուշ, կատարվի իսկական սոցիալիստական հեղաշրջումը գյուղում:

1917 թվի Հոկտեմբերյան հեղափոխությունը մի հարվածով ջնջեց կալվածատերերին ու կապիտալիստներին, ջախջախեց բոլոր դարավոր հողային հարաբերությունները գյուղում, կալվածատերերի, վանքերի և պետական ֆեոդալների հողերը հանձնելով գյուղացիներին: Բայց Հոկտեմբերյան հեղափոխությունը այդ պահին դեռ չէր կարող վճռել սոցիալիստական հեղափոխության ամենաարմատական և ամենադժվարին հարցը—մանր, բաժան-բաժան գյուղացիական տնտեսությունները հանրային տնտեսության նոր սոցիալիստական ուղին փոխադրելը:

Թե վորքան դժվար և բարդ էր այդ խնդիրը, յերևում է արդեն նրանից, վոր մեր կուսակցությանը պետք յեղավ հսկայական նախապատրաստության 12 տարի, վորպեսզի, վերջապես, մոտենա նրա վերջնական լուծմանը:

Ընկեր Ստալինի մեծագույն իմաստությունն ամենից ավելի ցայտուն կերպով արտահայտվեց տնտեսապես անջատված, քաղաքականապես դեռ հետամնաց միլիոնավոր գյուղացիական մասսաների ղեկավարման ստրատեգիայի մեջ, նրանց դաստիարակման և պատրաստման մեջ, այն ամենը կանխատեսելու մեջ, ինչ վոր անհրաժեշտ է գյուղի սոցիալիստական հեղաշրջման համար, այն հետևողականության և վճռականության մեջ, վորով ընկեր Ստալինը կուսակցությանը տարավ դեպի սոցիալիստական հեղափոխության այդ ամենադժվարին խնդրի լուծումը:

Յեթե հետևենք ըստ առանձին էտապների, ապա կտեսնենք, թե առաջնորդի ինչպիսի՜ խորաթափանցությամբ և պարզությամբ ընկեր Ստալինը յուրաքանչյուր էտապում վորոշում է բոլշևիկների կուսակցության խնդիրները գյուղացիության վերաբերմամբ:

Ահա 1924—1926 թվականները: Լենինն արդեն չկա: Բոլշևիկ-



ների կուսակցությունն ու ամբողջ ժողովուրդը համախմբվում են ընկեր Ստալինի շուրջը, նրա մեջ տեսնելով մեծ Լենինի գործի հավատարիմ շարունակողին: Գործողության մեջ է նոր տնտեսական քաղաքականությունը: Կուսակցության ղեկավարությամբ վիթխարի աշխատանք է կատարվում արդյունաբերության և գյուղատնտեսության վերականգնման գծով: Գյուղում տեղի յե ունենում կատաղի դասակարգային պայքար, կուլակությունը փորձում է վոչ միայն պահպանել իր ազդեցությունը, խցկվելով խորհուրդների մեջ, այլ և փորձում է վերադարձնել կորցրած դիրքերը: Կուսակցությունը, ղեկավարվելով լենինյան լոզունգով, հենվելով չքավորության վրա, դաշն կնքելով միջակի հետ, հակահարված է տալիս այդ կուլակային փորձերին:

Այն ժամանակ, յերբ մեր կուսակցությունը, դադարեցնելով նահանջը, ՆԵՊ-ն ուղղում է դեպի սոցիալիզմի դիրքերի հետագա ամրապնդումն ու կապիտալիստական տարրերի սահմանափակումը, կուսակցության և սոցիալիզմի գործի թշնամիները—արգահատելի բուխարինները, կամենևները և տրոցկիստները ՆԵՊ-ին մոտենում են այլ ձևով, փորձելով այն մեկնաբանել հետագա նահանջի և քաղաքում ու գյուղում յեղած կապիտալիստական տարրերին զիջումներ անելու համար, այսինքն՝ կապիտալիզմին ազատ ասպարեզ (развязывание) տալու համար: Կուսակցությունն այդ ժամանակաշրջանում ստիպված է լինում իր աշխատանքը կատարել չափազանց պատասխանատու և բարդ իրադրության մեջ: Ընկեր Ստալինը կուսակցությանը պարզ կերպով մատնանշում է առաջ գնալու ճանապարհը, նա ասում է, թե յերկրի սոցիալիստական ինդուստրացումն այն հիմնական օղակն է, վորից պետք է սկսել ժողովրդական տնտեսության սոցիալիստական շինարարության ծավալումը:

Մերկացնելով և գլխովին ջախջախելով կապիտուլյանտությունն ու պարտվողականությունն աջից և ձախից, ընկեր Ստալինը XIV համագումարում կուսակցության առջև խնդիր դրեց. «Մեր յերկիրը ագրարայինից վերածել ինդուստրիալ յերկրի, վորն ընդունակ լինի իր սեփական ուժերով արտադրելու անհրաժեշտ սարքավորումը,—ահա թե վորն է մեր գլխավոր գծի էությունը, հիմքը»:

Այդ խնդրի լուծումն էլ հենց բանալի դարձավ միլիոնավոր բաժան-բաժան գյուղացիական տնտեսությունները սոցիալիստական ռելսերի վրա փոխադրելու խնդրի լուծման համար: Յեվ

կուսակցությունն իր XIV համագումարից հետո ձեռնամուխ յեղավ այդ վիթխարի աշխատանքին: Ընկեր Ստալինն այդ ժամանակաշրջանում բազմիցս ընդգծում եր, թե կուսակցության կարևորագույն խնդիրը գյուղում՝ հաստատուն դաշինքն է միջակի հետ: Ի պատասխան սոցիալիզմի թշնամիների պնդմանը, թե մեր գյուղացիությունը սոցիալիստականացող (социалистично) չէ, ընկեր Ստալինը հետևողականորեն կիրառում և լրացնում է Լենինի կոոպերատիվ պլանը գյուղացիական տնտեսության նկատմամբ: Ահա թե ինչպես եր նա բնորոշում գյուղատնտեսության զարգացումը. «Կոոպերացիայի վերաբերյալ հոդվածներում Լենինը ճիշտ է մատնանշել, վոր գյուղատնտեսության զարգացումը մեզ մոտ պետք է ընթանա նոր ուղիով, գյուղացիների մեծամասնությունը կոոպերացիայի միջոցով սոցիալիստական շինարարության մեջ ներգրավելու ուղիով, գյուղատնտեսության մեջ կոլեկտիվիզմի սկզբունքներն աստիճանաբար արմատացնելու ուղիով՝ սկզբում գյուղատնտեսության արտադրանքների վաճառահանման բնագավառում, ապա և նրանց արտադրության բնագավառում»: (Ի. Ստալին, «Լենինիզմի հիմունքների մասին», Լենինիզմի հարցերը, հայ. հրատ., եջ 61):

1926—1929 թվականներն են: Վերականգնման ժամանակաշրջանը տնտեսության մեջ ավարտված է: Բոլշևիկների կուսակցությունը հաջողությամբ ղեկավարում է նոր, սոցիալիստական արդյունաբերություն ստեղծելու աշխատանքը: Մեկը մյուսի հետևից յերևան են գալիս նոր գործարաններ, ֆաբրիկաներ, յերկաթուղիներ, ելեկտրոկայաններ և նոր, սոցիալիստական ինդուստրիայի այլ ձեռնարկություններ: Միևնույն ժամանակ գյուղատնտեսությունը, թեպետ և նա արդեն առաջ եր անցել նախապատերազմյան մակարդակից, լրջորեն հետ է մնում արդյունաբերության աճից, շարունակվում է գյուղացիական տնտեսությունների հետագա անխուսափելի մանրատումը, գյուղատնտեսության ցածր ապրանքայնությունը՝ նրա ցածր արտադրողականության հետևանքով: Զգացվում է հացի և արդյունաբերության համար գյուղատնտեսական հումքի լուրջ պակաս: Կուլակային տնտեսությունները կրճատում են իրենց ցանքերը, իսկ արտադրվող հացահատիկը պահում են և նույնիսկ փտեցնում, բայց չեն ուզում հանձնել խորհրդային իշխանությանը: Իր ամբողջ հասակով ծառանում է մի հարց,—ո՞ւր է յելքը: Այն մատնանշում է ընկեր Ստալինը բոլշևիկների կուսակցության XV հա-



մագումարում իր տված՝ Կենտկոմի հաշվետվության մեջ. «Յելքը,—պատասխանել է ընկեր Ստալինը,—մանր և բաժան-բաժան գյուղացիական տնտեսությունների անցումն է դեպի խոշոր և միավորված տնտեսությունները՝ հողի հանրային մշակման հիման վրա, հողի կոլեկտիվ մշակման անցնելն է՝ նոր, բարձրագույն տեխնիկայի բազայի վրա: Յելքն այն է, վոր մանր և մանրագույն գյուղացիական տնտեսություններն աստիճանաբար, բայց անշեղորեն, վոչ թե ճնշման կարգով, այլ ցույց տալու և համոզելու կարգով, միավորենք խոշոր տնտեսությունների մեջ՝ հողի հանրային, ընկերական, կոլեկտիվ մշակման հիման վրա, կիրառելով գյուղատնտեսական մեքենաներ և տրակտորներ, կիրառելով հողագործության ինտենսիֆիկացիայի գիտական պրիոմներ: Ուրիշ յելք չկա»:

Ընկեր Ստալինը մատնանշել է, վոր գյուղատնտեսության համար կա միայն յերկու ուղի—կամ գյուղատնտեսության՝ դեպի խոշոր կապիտալիստական արտադրությունն անցնելու ուղին, վորը կհանգեր գյուղացիական մասսաների քայքայմանը, բանվորների և գյուղացիների դաշինքի խորտակմանը, կուլակության ուժեղացմանը և սոցիալիզմի պարտությանը, կամ մանր գյուղացիական տնտեսությունները կոլտնտեսությունների մեջ միավորելու ուղին: Տրոցկիստների-զինովյևականների և բուխարինականների բլոկը փաստորեն պաշտպանում եր գյուղի կապիտալիստական զարգացման ուղին: Կուսակցության XV համագումարն ընկեր Ստալինի առաջարկությամբ միահամուռ կերպով վորոշում ընդունեց գյուղատնտեսության կոլեկտիվացումն ամեն կերպ ծավալելու մասին: Հաստատուն կերպով վորոշելով իր համար այդ ուղին, մեր կուսակցությունն սկսեց գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման գործի լուրջ նախապատրաստությունը: Այդ նախապատրաստությունն, ընկեր Ստալինի ղեկավարությամբ, ծավալվեց հետևյալ ուղղություններով.

Առաջին՝ արդեն յեղած կոլտնտեսությունների ամրապնդումն ու նրանց փորձի ծավալումը գյուղացիության մեջ: Յերկրորդ՝ խորհտնտեսությունների և մեքենատրակտորային կայանների՝ խոշոր սոցիալիստական հողագործության կազմակերպման այդ հենակետային բազաների ստեղծումը: Յերրորդ՝ գյուղատնտեսական մեքենաների արտադրության ուժեղ ծավալումը՝ գյուղատնտեսության տեխնիկական վերազինման նպատակներով—տրակտորների և գյուղատնտեսական մեքենաների նոր գոր-

ծառանների կառուցում: Չորրորդ՝ վաճառահանման և արտադրական կոոպերացիայի, վարձակալական կետերի և հողի համատեղ մշակման ընկերությունների զարգացումը, վորպեսզի կոոպերացիայի այդ ձևերով գյուղացիները հնարավորություն ունենան յուրացնելու՝ տնտեսությունը վարելու հանրային բնույթը: Հինգերորդ՝ գյուղատնտեսական մթերքների մասսայական կոնտրակտացիայի կիրառումը, այսինքն՝ պետական կազմակերպությունների և գյուղացիների նոր պայմանագրային հարաբերությունների հաստատումը՝ գյուղատնտեսական մթերքների արտադրության և վաճառքի գծով: Վեցերորդ՝ կուլակի վրա հետագա հարձակման ծավալումը, գյուղի միջակ-չքավորական խավերի համախմբումը և նրանց ամեն տեսակ ոգնություն ցույց տալը:

Հիմնականում ա՛յս եր գյուղացիական տնտեսությունների կոլեկտիվացման նախապատրաստման պլանը, վորը զանազան կողմերից գյուղատնտեսությունը տանում եր դեպի մի նպատակ,—փոխադրել այն սոցիալիստական զարգացման ռելսերի վրա:

1929 թվականն արդեն մի այնպիսի տարի յեր, յերբ այդ պլանի կիրառումը գյուղին նախապատրաստել եր կամավոր կերպով, մասսայորեն կոլեկտիվացման անցնելու: Այդ ժամանակ մեր սոցիալիստական արդյունաբերությունն արդեն կարողացել եր զգալի քանակությամբ նոր գյուղատնտեսական մեքենաներ մտցնել գյուղատնտեսության մեջ, դաշտերում յերևան յեկան տրակտորներ, արդեն կազմակերպված են հազարավոր նոր խորհտնտեսություններ, այսինքն՝ արդեն լուրջ բազա յե ստեղծված կոլեկտիվացման համար, և այն սկսվեց: Շարժումն սկսում են հարավային հացահատիկային շրջանները, այն կատարվում ե դեռևս անհաստատ, անկազմակերպ ձևով, սակայն ընկեր Ստալինը գիտե, վոր այդ հենց այն բանն ե, ինչի համար բոլշևիկների կուսակցությունը 12 տարի պատրաստում եր գյուղը:

Սկսված կոլտնտեսային շարժման համար հարկավոր եր վորոշել նրա խնդիրները, անհրաժեշտ թափ տալ նրան, վերացնել նրա ճանապարհին յեղած խոչընդոտները: Բոլշևիկների կուսակցությունը կանգնում ե տասնյակ-միլիոնավոր չքավոր ու միջակ գյուղացիներին դեպի նոր կյանք տանող այդ համաշխարհային-պատմական շարժման գլուխ: «Մեծ բեկման տարին» վերնագրով իր հոդվածում ընկեր Ստալինն այսպես ե գնահատում այդ շարժումը.



«Նորն ու վճռողականն այժմյան կոլտնտեսային շարժման մեջ այն ե, վոր գյուղացիները կոլտնտեսություններն են մտնում վո՛չ թե առանձին խմբերով, ինչպես այդ տեղի յեր ունենում առաջ, այլ ամբողջ գյուղերով, գավառակներով, շրջաններով, մինչև իսկ ոկրուգներով: Իսկ ի՞նչ ե նշանակում այդ: Այդ նշանակում ե, վոր կոլտնտեսությունների մեջ ե մտել միջակը: Այս ե գյուղատնտեսության զարգացման մեջ կատարված այն արմատական բեկման հիմքը, վորը կազմում ե Խորհրդային իշխանության կարևորագույն նվաճումը...»:

ՀամԿ(բ)Կ Կենտկոմը 1930 թվի հունվարի 5-ին, ընկեր Ստալինի առաջարկությամբ, ընդունում ե պատմական վորոշում՝ «Կոլեկտիվացման տեմպի և պետության կողմից կոլտնտեսային շինարարությանը ցույց տրվելիք ոգնության միջոցառումների մասին»:

Խորհրդային իշխանությունն անցավ կուլակության, վորպես դասակարգի, լիկվիդացիայի և վոչնչացման քաղաքականությանը, վերացվեցին հողի վարձակալության և վարձու աշխատանքի որենքները, վերացվեց ապակուլակացման արգելքը: Գյուղացիներին թույլ տրվեց կուլակներից բռնագրավել անասուններ, մեքենաներ և այլ ինվենտար՝ կոլտնտեսության ոգտին:

Կառավարության և կուսակցության այդ վորոշումների կապակցությամբ՝ համատարած կոլեկտիվացումը նոր ուժ ե ստանում: Նա միաժամանակ ջնջում ե շահագործողների վերջին դասակարգը—կուլակներին, ընդմիշտ ազատագրելով գյուղացիներին կուլակային ստրկությունից:

Այդ՝ խոր սոցիալիստական հեղափոխություն եր գյուղում, հեղափոխություն, վորին մասնակցում եր ամբողջ գյուղացիությունը, վորը կազմակերպված եր խորհրդային իշխանության և կուսակցության կողմից՝ վերևից:

Բոլոր գույնի թշնամիները հասկացան, վոր այդ վերջին և վճռական մարտն ե, զգացին, վոր կորցնում են վոտքի տակի վերջին հողը, վոր կորցնում են իրենց վերջին դիրքերը և կապիտալիզմի ռեստավրացիայի ամենափոքր հնարավորությունները: Ահա թե ինչու կուսակցության դեմ, վորը գյուղի կոլեկտիվացումը տանում եր դեպի հաղթանակ, կոլտնտեսությունների դեմ միավորվում ե այն ամենը, ինչ թշնամական ե, ոպոզիցիոն ե: Բուխարինականները դեն են նետում իրենց վրայից վերջին դիմակը, բացահայտորեն կանգնում են թշնամիների բանակում,

տացվում է սոցիալիզմի թշնամիների համատարած ճակատ՝ սկսած իմպերիալիստական կլիկներից, սպիտակ-գվարդիականությունից, ֆաբրիկանտներից, կալվածատերերից, կուլակներից, մենշևիկներից, էսէռներից, տրոցկիստներից, բուխարինականներից և այլ աղտեղություններից: Նրանք բոլորը դաղաղեցին կոլտնտեսությունների դեմ: Նրանք բոլորը միահյուսվում են ժողովրդի դեմ տարվող արյունալի-կեղտոտ դավադրության մեջ, ժողովուրդ, որը ջարդուփշուր է անում դեպի նոր կյանքը տանող ճանապարհին ընկած վերջին խոչընդոտները և արգելքները:

Սակայն ինչպե՞ս կարող էին նրանք պայքարել Լենինի—Ստալինի հզոր կուսակցության դեմ, միլիոնավոր գյուղացիների դեմ, որոնք չեն ուզում այսուհետև ապրել հին ձևով և հասկացել են իրենց ուժը՝ նոր կյանքի շինարարության համար: Այս պատճառով էլ ամեն տեսակ թշնամական յելույթները կոլտնտեսությունների դեմ՝ բավական խղճուկ տեսք ունեին և ջնջվեցին, ոչ մի բան չկարողացավ կասեցնել գյուղի համատարած կոլեկտիվացման հաղթական ծավալումը:

Գյուղի հին կարգը փոխարինվեց նորով, սակայն այդ մեծ սոցիալիստական վերակառուցման ընթացքում տեղ-տեղ սկսեցին երևան գալ վտանգավոր թերություններ կոլեկտիվացման ղեկավարության մեջ: Տեղական կուսակցական և խորհրդային շատ աշխատողներ հրապուրվեցին կոլեկտիվացման տոկոսներով, գյուղացիական տնտեսությունների կոլեկտիվացման համոզելու մեթոդները սկսեցին նենգափոխել յուրահատուկ բյուրոկրատական դեկրետացումով: Փոխանակ այն բանի, որ կոլտնտեսության հիմնական ձևն արտելը դարձնեն, ինչպես մատնանշել է կուսակցության Կենտրոնական Կոմիտեն իր որոշումներում, գլուխը կորցրած այդպիսի աշխատողները գործը տարան անմիջապես կոմունա կազմակերպելու ուղղությամբ, այսինքն՝ անմիջապես ցատկելով դեպի կոլտնտեսային կարգի բարձրագույն ձևը, հակառակ գյուղացիների կամքի հանրայնացնելով արտադրության գործիքները, բանող անասունների հետ միասին նաև բոլոր մանր անասունները, թռչունները, տնային գույքը: Կոլեկտիվացման մեջ թույլ տրված այդ լուրջ սխալները մի շարք շրջաններում չէին կարող դժգոհություն չառաջացնել գյուղացիների մեջ: Կոլտնտեսությունների թշնամիները ճարպիկ կերպով օգտագործեցին մեր աշխատողների այդ վտանգավոր թերությունները, հաճախ իրենք պրովոկացիոն նպատակով հանդես գալով՝ որպես այդպիսի շեղումների նախամարտիկներ:



Ընկեր Ստալինը, կուսակցության Կենտկոմի հանձնարարությամբ, հանդես է գալիս սկզբում «Գլխապտույտ՝ հաջողություններից» հոդվածով, իսկ հետո՝ «Պատասխան ընկեր կոլտնտեսականներին» հոդվածով: Այդ հոդվածների մեջ նա ամբողջ կրքոտությամբ հարձակվում է շեղվողների վրա: Նա ասում է. «Ի՞նչ ընդհանուր բան կարող է լինել ունտեր Պրիշիբեյեվի այդ «քաղաքականության» ու կուսակցության քաղաքականության միջև, որը կոլտնտեսային շինարարության գործում հենվում է կամավորության ու տեղական առանձնահատկությունների հաշվառման վրա: Պարզ է, որ դրանց միջև ոչ մի ընդհանուր բան չկա և չի կարող լինել:

Ո՞ւմ են պետք կոլտնտեսային շարժման այդ ծռումները, այդ չինովնիկական դեկրետագրումը, այդ անարժան սպառնալիքները գյուղացիների նկատմամբ: Ո՛չ ոքի, բացի մեր թշնամիներից:

Ինչի՞ կարող են հանգեցնել դրանք, այդ ծռումները: Մեր թշնամիների ուժեղացմանն ու կոլտնտեսային շարժման իդեաների պսակազերծմանը:

Մի՞թե պարզ չէ, որ այդ ծռումների հեղինակները, որոնք իրենց «ձախ» են երևակայում, իրականում ջուր են լցնում աջ օպորտունիզմի ջրաղացին»:

Յեվ այնուհետև, «Պատասխան ընկեր կոլտնտեսականներին» հոդվածում նա ասում է. «Վտանգն այստեղ այն է, որ դրանք, այդ սխալները, մեզ ուղիղ հաղորդակցությամբ տանում են դեպի կոլտնտեսային շարժման պսակազերծում, դեպի դժգոհություն միջակի հետ, դեպի չքավորության կազմալուծում, դեպի մեր շարքերի իրարանցում, դեպի մեր ամբողջ սոցիալիստական շինարարության թուլացում, դեպի կուլակության վերականգնում: Կարճ ասած՝ այդ սխալները միտում ունեն դուրս գցելու մեզ գյուղացիության հիմնական մասսաների հետ դաշինքն ամրացնելու ճանապարհից, պրոլետարական դիկտատուրայի ամրացման ճանապարհից դեպի այն մասսաներից խզվելու ճանապարհը, պրոլետարական դիկտատուրայի խախտման ճանապարհը»:

Հենց այդ ժամանակ էլ նա տալիս է կոլտնտեսային շինարարության մեջ մեր խնդիրների պարզ բնորոշումը. «Կոլտնտեսային շարժման հիմնական օղակը, նրա գերակշռող ձևը տվյալ պահին, որից հարկավոր է այժմ բռնել, հանդիսանում է գյուղատնտեսական արտելը»:

«Այդ նշանակում է, վոր ներկայումս մենք պետք է ուղղությունը վերցնենք վոչ թե դեպի կոմունան, այլ դեպի գյուղատնտեսական արտելը՝ վորպես կոլտնտեսային շինարարության գլխավոր ձևը, վոր չի կարելի ցատկումներ թույլ տալ գյուղատնտեսական արտելի վրայով դեպի կոմունա, վոր չի կարելի գյուղացիների մասսայական շարժումը դեպի կոլտնտեսությունները՝ նենգափոխել կոլտնտեսությունների «դեկրետավորումով», «կոլտնտեսություն խաղալով»:

Ընկեր Ստալինի այդ մեծագույն քաղաքական կարևորություն ունեցող ելույթները վճռական նշանակություն ունեցան տեղերում կոլեկտիվացման ղեկավարման գործում յեղած վտանգավոր թերությունների և գյուղացիական հարցում թույլ տրված խոշոր սխալների ուղղման մեջ, սխալներ, վորոնք հանդեցրին վոչ ճիշտ մոտեցման դեպի միջակը և կոլտնտեսությունների կազմակերպման ժամանակ կամավորության լենինյան սկզբունքի խախտմանը:

Ընկեր Ստալինի մատնանշված ելույթներից և կուսակցության Կենտկոմի վորոշումներից հետո կուսակցական կազմակերպություններն արագ կերպով ուղղեցին կոլտնտեսային շինարարության մեջ թույլ տրված՝ կուսակցության քաղաքականությունից կատարված շեղումներն ու աղավաղումները, իսկ կոլտնտեսային շարժումը դնաց առաջ, լեռն ի վեր, ամրապնդվելով ու հավաքելով նոր տեմպեր և ուժեր:

1932—1934 թվականներն են: Կոլտնտեսությունները վերջնականապես հաղթանակեցին: Կոլտնտեսային կարգը գյուղում փաստ դարձավ, դասակարգային պայքարը գյուղում այլ, ե՛լ ավելի սուր ձևեր է ընդունում: Կոլտնտեսությունների թշնամիներն արմատապես փոխում են իրենց տակտիկան: Ջախջախված լինելով և զգալով կոլտնտեսությունների դեմ այսուհետև բացահայտ պայքար մղելու անհնարինությունը, նրանք, դիմակավորվելով վորպես կոլտնտեսությունների կողմնակիցներ, անցնում են քողարկված քայքայիչ աշխատանքի: Մահացու ատելություն ունենալով կոլտնտեսային կարգի հանդեպ, նրանք չեն զարշում վնասարարական աշխատանքի ամենավայրենի յեղանակներ կիրառելուց, միայն թե քայքայեն կոլտնտեսությունները: Նրանք վարակում են կոլտնտեսային անասունները, փտեցնում են կոլտնտեսային հացահատիկը և կերը, անկյունից սպանում են ակտիվ կոլտնտեսականներին: Մի խոսքով, չկա այնպիսի միջոց, վոր



կոլտնտեսությունների դեմ մղվող պայքարում չկիրառեյին կոլեկտիվացման թշնամիները, վորոնք սողոսկել եյին կոլտնտեսությունների, հողային օրգանների, գիտական ինստիտուտների և այլ կազմակերպությունների մեջ:

Ավելի ուշ՝ աջ-տրոցկիստական դավադրական լրտեսական կենտրոնների և նրանց ստոր աշխատանքի մերկացման կապակցությամբ միանգամայն պարզ դարձավ, վոր վնասարարական աշխատանքը կոլտնտեսություններում ամենևին տեղական բնույթ չի կրել, այլ հանդիսացել է ժողովրդի թշնամիների մեծ պլանի հետևանքը,—ինչ գնով էլ լինի՝ վիժեցնել կոլտնտեսային շինարարությունը, գյուղատնտեսության մեջ վնասարարություն կազմակերպելու միջոցով սով առաջացնել յերկրում և գյուղացիության մեջ դժգոհություն հրահրել: Սակայն այդ բոլոր վաճառված լրտեսական թափթփուկները խորապես սխալվեցին. այնքան էլ հեշտ չեր արդեն ամրապնդված կոլտնտեսությունները քայքայելը, և ժողովուրդը նրանց դեն շպրտեց իր ճանապարհից:

Մյուս կողմից, կոլտնտեսությունների լիակատար հաղթանակի կապակցությամբ, կուսակցական և խորհրդային աշխատողների մի մասի մեջ սկսեց գերակշռել հանդստացուցիչ տրամադրություն, թշնամական աշխատանքի վերաբերմամբ զգաստությունը կորցնելը, դափնիների վրա նիրհելու ձգտումը: Սկսեցին յերևալ ինքնահոսի վտանգավոր տարրեր կոլտնտեսությունների ղեկավարման վերաբերմամբ:

Ընկեր Ստալինը վճռականորեն հանդես յեկավ նման տրամադրությունների դատապարտումով, վորպես վոչ-բոլշևիկյան տրամադրություններ: Ահա թե նա ինչպես եր բնորոշում այդ շրջանում կոլտնտեսությունների ղեկավարման հարցերը 1933 թվին առաջին հնգամյակի հանրագումարների մասին կուսակցության Կենտկոմի պլենումում արտասանած իր ճառի մեջ. «Հիմա հարցը կոլեկտիվացման արագացրած տեմպերի մասին չէ արդեն և ավելի ևս այն մասին չէ՝ լինե՞ն արդյոք կոլտնտեսությունները, թե չլինեն. այդ հարցն արդեն լուծված է դրական իմաստով: Կոլտնտեսություններն ամրապնդված են, և ուղին դեպի հին, անհատական տնտեսությունը փակված է վերջնականապես: Հիմա խնդիրն այն է, վորպեսզի ամրացնենք կոլտնտեսությունները կազմակերպորեն, դուրս շպրտենք այնտեղից վնասարարական տարրերին, ընտրենք իսկական, ստուգված բոլշևիկյան կադրեր կոլտնտեսությունների համար և կոլտնտեսություններն իրոք բոլշևիկյան դարձնենք:

Այդ է հիմա գլխավորը»:

Իսկ Կենտկոմի նույն այդ պլենումում «Գյուղում կատարվող աշխատանքի» հարցի առթիվ ունեցած իր յելույթի մեջ նա ասում է. «Անցումը դեպի կոլեկտիվ տնտեսություն իբրև տնտեսության գերակշռող ձև՝ վո՛չ թե նվազեցնում, այլ ավելացնում է մեր հոգատարությունը գյուղատնտեսության վերաբերմամբ, վո՛չ թե նվազեցնում, այլ ավելացնում է կոմունիստների ղեկավար դերը գյուղատնտեսության բարձրացման գործում: Այժմ ավելի քան յերբևիցե ինքնահոսը վտանգավոր է գյուղատնտեսության զարգացման գործի համար: Ինքնահոսն այժմ կարող է ամբողջ գործը կործանել»:

Ընկեր Ստալինն այնուհետև նախազգուշացնում է, վոր կոլեկտիվացման թշնամիները շարունակում են իրենց աշխատանքը: «Այդպիսի ճարպիկ թշնամուն նշմարելու և դեմագոգիայի չենթարկվելու համար հարկավոր է հեղափոխական զգաստություն ունենալ, հարկավոր է ընդունակություն ունենալ՝ պատռելու թշնամու դիմակը և կոլտնտեսականներին ցույց տալու նրա իսկական, հակահեղափոխական դեմքը»:

Այդ դրույթները կազմակերպորեն ամրապնդելու, կոլտնտեսություններին ոգնելու՝ նրանց ամրապնդման գործում և կուլակային վնասարարությանը վերջ դնելու համար, ընկեր Ստալինի առաջարկությամբ Կուսակցության Կենտկոմը վորոշում ընդունեց ՄՏԿ-ներին կից քաղբաժիններ կազմակերպելու և 17 հազար կուսակցական աշխատողների գյուղ ուղարկելու մասին: Այդ միջոցառումները հսկայական նշանակություն ունեցան կոլտնտեսությունների հետագա ամրապնդման գործում:

1933 թվին ընկեր Ստալինի առաջարկությամբ հրավիրվում է կոլտնտեսականների առաջին համագումարը, վորտեղ նա իր ճառի մեջ ամփոփելով կոլտնտեսային շարժման հանրագումարները, բնորոշեց նաև նրա առաջիկա խնդիրները: Նա ասաց. «Սխալ կլիներ կարծել, թե մենք պետք է կանգ առնենք այդ առաջին քայլի վրա, այդ առաջին նվաճման վրա: Վո՛չ, ընկերներ, մենք չենք կարող կանգ առնել այդ նվաճման վրա: Վորպեսզի ավելի առաջ շարժվենք և վերջնականապես ամրացնենք կոլտնտեսությունները, մենք պետք է անենք յերկրորդ քայլը, մենք պետք է ձեռք բերենք նոր նվաճում: Վո՞րն է այդ յերկրորդ քայլը. այդ քայլն է՝ է՛լ ավելի վեր բարձրացնել կոլտնտեսականներին,— թե նախկին չքավորներին, թե նախկին միջակներին:



Այդ քայլն է՝ ունևոր դարձնել բոլոր կոլտնտեսականներին: Այո՛, ընկերներ, ունևոր դարձնել»:

«Վորպեսզի կոլտնտեսականներն ունևոր դառնան, այժմ դրա համար միայն մի բան է պահանջվում. աշխատել կոլտնտեսության մեջ ազնվորեն, ճիշտ ոգտագործել տրակտորներն ու մեքենաները, ճիշտ ոգտագործել բանող անասուններին, ճիշտ մշակել հողը, պահպանել կոլտնտեսային սեփականությունը»:

Այդ դրույթներն էլ հենց, դարձան կոլտնտեսային շինարարության մեջ կուսակցության հետագա պրակտիկ աշխատանքի հիմքը:

Հետագա բոլոր տարիներին ընկեր Ստալինը մեծագույն հոգատարությամբ շարունակում է անդուլ կերպով ղեկավարել կոլտնտեսությունների հետագա ամրապնդման գործը:

Ամրապնդված և հաղթանակած կոլտնտեսային շարժումը պահանջում է արդեն մի ամբողջ շարք կազմակերպական ներքին հարցերի լուծում:

1935 թվին գումարվում է կոլտնտեսականների յերկրորդ համագումարը: Համագումարը մշակում է գյուղատնտեսական արտելի որինակելի կանոնադրությունը: Ընկեր Ստալինն այդ աշխատանքի մեջ ունենում է ամենաակտիվ մասնակցություն: Կանոնադրության մեջ փաստորեն ներդրված է կուսակցության ամբողջ քաղաքականությունն ու պրակտիկան սոցիալիստական գյուղատնտեսության կազմակերպման գործում: Կոլտնտեսականներն իրավամբ այդ կանոնադրությունն անվանում են կոլտնտեսային կյանքի ստալինյան որենք: Որինակելի կանոնադրության մեջ ամրապնդված է նաև ամբողջ հողի հանձնումը կոլտնտեսություններին՝ առհավետ ոգտագործման համար, արգելելով նրա վերահանձնումը, գնումը, վաճառքը կամ կապալով տալը:

Այս տարիներին կոլտնտեսային կարգն արդեն անխախտ է: Կոլտնտեսությունները զինված են առաջնակարգ տեխնիկայով: Կոլտնտեսություններում և խորհտնտեսություններում աճել են նոր կադրեր: Կոլտնտեսականներն արդեն լրիվ զգացել են հանրային տնտեսության համը: Մեկը մյուսի հետևից ռեալիզացիայի յե յենթարկվում կոլտնտեսային խոշոր հողագործության հաղթանակը: Հացահատիկային պրոբլեմը լուծված է: Հացահատիկի համախառն բերքը 1937 թվին կազմեց 7·350 միլիոն փութ, այսինքն՝ մինչպատերազմյան մակարդակից 2·450 միլիոն փթով և 1928 թվի համեմատությամբ 2·860 միլիոն փթով ավելի:

Ընկեր Ստալինը դնում է նոր խնդիրներ—հասնել հացահատիկի արտադրության հետագա ավելացման, վորի համար ամբողջ ճակատով ծավալել պայքար՝ հանուն բերքատվության բարձրացման, մտցնելով ցանքաշրջանառություն, ավելացնելով պարարտանյութերի կիրառումը հողագործության մեջ, յերաշտի դեմ պայքարելու միջոցառումներով: Այդ ուղղությամբ էլ հենց ընթանում է կուսակցության և կոլտնտեսությունների հետագա աշխատանքը: Ընկեր Ստալինը կուսակցության XVII համագումարում նշում է՝ վորպես դեռևս լուրջ թերություն—անասնապահության հետ մնալը և կուսակցությանը կոչ է անում լուծել նաև այդ պրոբլեմը:

Ինչպես նախորդ բոլոր ետապներում, ընկեր Ստալինը բնորոշելով կոլտնտեսային շինարարության խնդիրներն ու ուղղությունը, ինքն անմիջականորեն տառացիորեն թափանցում է տրակտորներ, գյուղատնտեսական մեքենաներ ու պարարտանյութեր արտադրող գործարանների կառուցման ընթացքի ու աշխատանքի, ՄՏԿ-ների և խորհտնտեսությունների աշխատանքի բոլոր կոնկրետ հարցերի մեջ, կոլտնտեսությունների կազմակերպական հարցերի, գյուղատնտեսության համար մարդկանց ընտրության և ուրիշ շատ հարցերի մեջ, և այդ բոլորի մեջ, ամենից առաջ, դրսևորվում է ընկեր Ստալինի հայրական մեծագույն հոգատարությունը կոլտնտեսության շահերի նկատմամբ: Հենց վոր ընթացիկ տարում կուսակցության Կենտկոմում սկսեցին ազդանշաններ հասնել կոլտնտեսությունների հանրային հողերը շռայլելու փաստերի մասին, ընկեր Ստալինն առաջինն էր, վոր պահանջեց այդ հարցը հատկապես քննարկել Կենտկոմի պլենումում և այդ պլենումում խիստ քննադատության յենթարկեց տեղական կուսակցական ու խորհրդային կազմակերպությունների մեր ղեկավարներին՝ կոլտնտեսությունների հանրային հողերը շռայլելու հակակոլտնտեսային պրակտիկայի նկատմամբ անհոգ, ոպորտունիստական վերաբերմունքի համար, ու պահանջեց անհապաղ լիկվիդացիայի յենթարկել այն:

Դրանից հետո ընկեր Ստալինն առաջ է քաշում կոլտնտեսային անասնապահությունն ամեն կերպ զարգացնելու, կոլտնտեսություններում նոր ֆերմաներ կազմակերպելու անհրաժեշտության հարցը, հանրային տնտեսության գործն առաջ մղելու համար: Դրան համապատասխան, Կառավարությունը և կուսակցությունն որենք ընդունեցին կոլտնտեսություններում անասնապահության զարգացման միջոցառումների մասին: Կասկած չկա, վոր այդ խնդիրը ևս կոլտնտեսություններն ամենամոտիկ ժամանակում հաջողությամբ կլուծեն:



Մեր կոլտնտեսությունների հետագա հաղթանակներն ապահովելու վերաբերյալ ընկեր Ստալինի ջերմ հոգատարության նման որինակներ կարելի յե բերել անվերջ:

Այսպիսին է ընկեր Ստալինը, վորպես կոլտնտեսային մեծ շարժման վոգեշնչող, կազմակերպող ու ղեկավար:

Առանց մազաչափ անգամ չափազանցնելու, կարելի յե ուղղակի ասել, վոր ընկեր Ստալինի իմաստուն ղեկավարությունը հենց, մեր բոլշևիկյան կուսակցությանը հնարավորություն տվեց համեմատաբար կարճ ժամանակամիջոցում ապահովել սոցիալիզմի մեծագույն պատմական հաղթանակները գյուղատնտեսության մեջ:

Բոլշևիկների կուսակցությունը և բազմամիլիոն կոլտնտեսային գյուղացիությունն այսոր ընկեր Ստալինի վաթսունամյակի կապակցությամբ կամփոփեն կատարված աշխատանքի պանծալի հանրագումարները, աշխատանք, վորի հետևանքով վերջնականապես լուծված է սոցիալիստական հեղափոխության ամենաբարդ ու դժվարին խնդիրը—մանր, հետամնաց անհատական գյուղացիության տնտեսության փոխադրումը հանրային սոցիալիստական խոշոր տնտեսության ռելսերի վրա: Սոցիալիստական հեղափոխությունները մյուս յերկրներում՝ յերկար ժամանակ այդ հիանալի աշխատանքից փորձ կքաղեն իրենց մոտ գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման խնդիրը լուծելու համար:

Ստեղծված է ամենախոշոր հանրային հողագործություն, զինված հարյուր-հազարավոր տրակտորներով և առաջնակարգ մեքենաներով: Արմատապես փոխվել են աշխատանքի պայմանները գյուղատնտեսության մեջ, այժմ այնտեղ այլևս չկա արշալույսից մինչև վերջալույս կատարվող հյուծիչ աշխատանքը. մեքենաները հեշտացրել և զգալի չափով փոխարինել են նրան:

Լիկվիդացիայի յեն յենթարկված բոլոր շահագործող դասակարգերը, վորոնք նստած եյին գյուղացու վզին: Ընդմիշտ վերջ է տրված մարդու շահագործմանը մարդու կողմից, իսկ ինքը՝ կոլտնտեսային գյուղացիությունը դարձել է նոր դասակարգ, ճնշումից ու ստրկությունից ազատագրված—իր կյանքի տերը:

Ընկեր Ստալինի լոզունգը կոլտնտեսականներին ունևոր կյան-

քի մասին—իրականացված է. կոլտնտեսականների ունևոր կյանքը դարձել է փաստ։ Գյուղացիների սովին ու մահացությանը, աղքատությանն ու կարիքին, վորոնք դարերից ի վեր քայքայում եյին գյուղը,—այժմ ընդմիշտ վերջ է տրված։

Լիկվիդացիայի յե յենթարկված քաղաքի և գյուղի՝ դարերից ի վեր գոյություն ունեցող հակադրությունը։ Քաղաքն ու գյուղը, բանվորն ու գյուղացին Խորհրդային Միության մեջ ապրում են քաղաքական, նյութական և կուլտուրական միևնույն կյանքով։

Սոցիալիստական գյուղատնտեսության մեջ և կոլտնտեսություններում ստեղծված են նոր բազմաթիվ կադրեր, իսկ կոլտնտեսային գյուղն այժմ ունի իր բազմաթիվ ինտելիգենցիան։

Դրան զուգընթաց այժմ մեզ մոտ ստեղծված են բոլոր նախադրյալները վիթխարի թռիչք կատարելու համար առաջ, դեպի գյուղատնտեսության աշխատանքի արտադրողականության չտեսնված վերելք, վորի մասին արդեն վկայում են գյուղատնտեսության առաջավորների ձեռք բերած հաջողությունները։ Հետևապես, ստեղծված են բոլոր պայմանները կոլտնտեսային գյուղացիության ե՛լ ավելի յերջանիկ կյանքի հետագա ծաղկման համար։

Ահա թե ինչու մեր բազմամիլիոն կոլտնտեսային գյուղացիությունը, ինչպես և ամբողջ խորհրդային ժողովուրդն այսոր մեկ անգամ ևս ի սրտե շնորհակալություն կհայտնի ընկեր Ստալինին—մարդկային յերջանկությունը ստեղծողին, կոլտնտեսային նոր կյանքը վոգեշնչողին ու կազմակերպողին և կցանկանա նրան յերկար տարիների առողջություն ու հաջող աշխատանք՝ կոմունիստական հասարակակարգի կառուցման ուղղությամբ։



Ն. Ս. ԽՐՈՒՇՉՈՎ

# ՍՏԱԼԻՆԸ ՅԵՎ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ՄԵԾ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅՈՒՆԸ

Այսօր, ընկեր Ստալինի 60-ամյակի օրը, բոլոր հայացքներն ուղղված կլինեն դեպի ժողովուրդների մեր մեծ առաջնորդ, մեր բարեկամ և հայր՝ Իոսիֆ Վիսսարիոնովիչ Ստալինը։

Համայն աշխարհի աշխատավորները կգրեն ու կխոսեն նրա մասին սիրով ու երախտագիտությամբ։

Աշխատավորության թշնամիները կգրեն ու կխոսեն նրա մասին չարախինդ փրփուրը բերաններին։

Համայն աշխարհի աշխատավորներն ի դեմս ընկեր Ստալինի տեսնում են իրենց առաջնորդին, կապիտալիզմի լծից իրենց ազատագրողին։ Մեր երկրի աշխատավորները հանձին ընկեր Ստալինի ունեն իրենց ուսուցիչը, բարեկամն ու հայրը։

Աշխատավորության թշնամիները հանձին ընկեր Ստալինի տեսնում են իրենց ամենավտանգավոր թշնամուն։ Բոլոր երկրների իմպերիալիստները գիտեն, որ ընկեր Ստալինի ամեն մի խոսքը 183-միլիոնանոց ժողովրդի խոսքն է, որ ընկեր Ստալինի առաջադրած յուրաքանչյուր դրույթի հետև կանգնած է հզոր, մեծ ու բազմազգ խորհրդային ժողովուրդը՝ ամբողջ աշխարհի կեղեքվածների հույսը և միջազգային իմպերիալիզմի մահացու ոսոխը։

Մեծ Ստալինն աշխատավոր ժողովրդի զավակն է։ Իր ամբողջ կյանքը նա նվիրում է հեղափոխական պայքարին՝ հանուն կոմունիստական հասարակության գործի։

Ընկեր Ստալինի կենսագրությունը—դա աշխատավորության՝ բանվորների, գյուղացիների ու ինտելիգենցիայի պայքարի ու հաղթանակների հերոսական պատմությունն է։

Ընկեր Ստալինի կենսագրությունը—դա մեր բոլշևիկյան կուսակցության փառապանծ պատմությունն է։

Ընկեր Ստալինի կենսագրությունը—դա բանվոր դասակարգի հեղափոխական պայքարի պատմությունն է իր կեղեքիչների՝ կալվածատերերի ու կապիտալիստների դեմ։

Բոլշևիկների մեծ կուսակցության ստեղծման համար մղված պայքարում ընկեր Ստալինը գտնվում եր առաջին շարքում, մշտապես Լենինի հետ եր, նա աննահանջ պայքար եր մղում բոլշևիկյան շարքերի անաղարտության համար, նա մշտապես անհաշտ, սկզբունքային պայքար եր մղում ամեն յերանգի օպորտունիստների՝ մենշևիկների, եսերների, նարոդնիկների և բուրժուական նացիոնալիստների դեմ:

Պատանեկական հասակից ընկեր Ստալինն իր կյանքը նվիրում ե աշխատավոր ժողովրդին, ժողովրդի պայքարին ընդդեմ կապիտալիզմի, հանուն կոմունիզմի: Անհաշտ ու անխոնջ ե այս պայքարում ընկեր Ստալինը:

Վորքան ել ցարական սատրապները, ժանդարմներն ու վոստիկաններն աշխատում եյին դուրս պոկել ընկեր Ստալինին մարտնչող բանվոր դասակարգի շարքերից, վորքան ել նրանք աշխատում եյին գցել նրան բանտ և աքսորել հեռավոր Սիբիր, այդ նրանց յերկար ժամանակով չեր հաջողվում անել:

Ընկեր Ստալինը վոչ մի րոպե չեր դադարեցնում իր պայքարը: Նա բանտում գտնված ժամանակ նույնպես անհաշտ պայքար եր մղում բանվոր դասակարգի թշնամիների դեմ: Նա բանտից կապվում եր հեղափոխական բանվորների հետ և ղեկավարում նրանց պայքարը: Աքսորում գտնվելով, նա սերտ կապ եր պահպանում կուսակցության հետ և աքսորից Լենինի հետ միասին ղեկավարում եր կուսակցության պայքարը, բանվոր դասակարգի պայքարը:

Առաջին հնարավորության դեպքում ընկեր Ստալինը փախավ աքսորից, վորպեսզի նորից գտնվի բանվորական գործի համար մարտնչողների շարքերում, ղեկավարի այդ պայքարը, աշխատավոր ժողովրդի մասսաներին կազմակերպի գրոհելու ցարիզմի ու կապիտալիզմի դեմ:

Ստալինը մեծ Լենինի մերձավոր բարեկամն ու զինակիցն ե: Լենինը Ստալինի հետ միասին ստեղծեց բոլշևիկյան մեծ կուսակցությունը, նոր տիպի կուսակցությունը, բանվոր դասակարգի հեղափոխական կուսակցությունը: Ստալինը Լենինի հավատարիմ հենարանն եր բոլշևիկյան կուսակցության ստեղծման համար մղվող պայքարում, նրա շարքերի անաղարտության համար մղվող պայքարում:

Հանձին ընկեր Ստալինի բանվոր դասակարգն ու աշխատավորներն ունեն մեր դարաշրջանի մեծագույն մարդը, բանվոր դասակարգի և համայն աշխատավորության ընդդեմ կապիտալիզ-



մի, հանուն կոմունիզմի մղած պայքարի ու հաղթանակների թեորետիկը, պրակտիկն ու կազմակերպիչը:

Ընկեր Ստալինը մեծ թեորետիկ ե նաև ազգային հարցում: Դեռևս ռուսական առաջին հեղափոխության նախօրյակին նա բանվոր դասակարգին սովորեցնում ե, վոր առանց ազգային հարցը ճիշտ լուծելու չի կարելի հաղթել ցարիզմին ու կապիտալիզմին:

Իր «Ի՞նչպես ե հասկանում սոցիալ-դեմոկրատիան ազգային հարցը» սքանչելի հոդվածում, վոր հրապարակված ե «Պրոլետարիատիս բրձոլա» լրագրի 1904 թ. սեպտեմբերի 1-ի № 7-ում, ընկեր Ստալինը հիմնավորում և պարզաբանում ե պրոլետարիատի կուսակցության ազգային ծրագիրը: «Փոփոխվում ե հասարակական կյանքը և նրա հետ միասին փոփոխվում ե նաև «ազգային հարցը»,—գրում ե ընկեր Ստալինը:—Զանազան ժամանակներում զանազան դասակարգեր հանդես են գալիս պայքարի ասպարեզ,—և ամեն մի դասակարգ իր ձևով ե ըմբռնում «ազգային հարցը»... Պայքարի ասպարեզ ե դուրս յեկել նոր դասակարգ՝ պրոլետարիատը,—և նրա հետ միասին առաջացել ե նոր «ազգային հարց», պրոլետարիատի «ազգային հարցը»: Վորքան վոր պրոլետարիատը տարբերվում ե ազնվականությունից ու բուրժուազիայից, նույնչափ ել պրոլետարիատի առաջադրած «ազգային հարցը» տարբերվում ե ազնվականության ու բուրժուազիայի «ազգային հարցից»:

Այս հոդվածում ընկեր Ստալինը կոնկրետ օրինակներով ցույց ե տալիս, թե ինչպես եյին ազնվականները դնում ազգային հարցը հօգուտ իրենց շահերի, ինչպես ե ֆեոդալական հասարակարգին փոխարինելու յեկած բուրժուազիան առաջադրում իր բուրժուական նացիոնալիզմը և ինչպիսի ծրագիր ե առաջադրում հեղափոխական դասակարգը՝ պրոլետարիատը:

Այս հոդվածում ընկեր Ստալինը կրակը կենտրոնացնում ե ազգային հարցում յեղած օպորտունիստական սկզբունքների դեմ: Ընկեր Ստալինը հետևողականորեն պաշտպանում ե պրոլետարական դասակարգային կազմակերպությունների կառուցման ինտերնացիոնալիստական տիպը: Նա ձևակերպում ե մեր կուսակցության հիմնական դրույթներն ազգային հարցում, վորոնք նա հետագայում—1913 թվին—հանճարեղ կերպով մշակում ե իր «Մարքսիզմը և ազգային հարցը» հոյակապ աշխատության մեջ:

«Մարքսիզմը և ազգային հարցը» աշխատության մեջ ընկեր

Ստալինը ջախջախեց II Ինտերնացիոնալի դավաճանական օպորտունիստական հայացքներն ազգային հարցում:

Լենինն ու Ստալինը մշակեցին բոլշևիկյան ծրագիրն ազգային հարցում: Ըստ ընկեր Ստալինի ուսմունքի՝ ազգային հարցը պրոլետարական հեղափոխության ընդհանուր հարցի մի մասն ե: Ազգային հարցը,—ուսուցանում ե ընկեր Ստալինը,—անխզելիորեն կապված ե իմպերիալիզմի դարաշրջանի ամբողջ միջազգային իրադրության հետ:

Լենինի հետ միասին Ստալինը հիմնավորեց բանվորների ինտերնացիոնալ համախմբման բոլշևիկյան սկզբունքը: Լենինի հետ միասին Ստալինն ապացուցեց, վոր պրոլետարիատը չի կարող հաղթանակ տանել ցարիզմի ու կապիտալիզմի նկատմամբ առանց ազգային ճիշտ քաղաքականություն վարելու: Այս առանձնապես վերաբերում ե այնպիսի յերկրի, վորպիսին բազմազգ Ռուսաստանն եր:

Ազգային հարցի ճիշտ լուծումից եր կախված հեղափոխության բախտը Ռուսաստանում,—սովորեցնում եր ընկեր Ստալինը: Ցարական Ռուսաստանը, ինչպես սովորեցնում եյին Լենինն ու Ստալինը, ժողովուրդների բանտ եր, վորի մեջ բորբոքվում եր ազգային թշնամանք, վորտեղ կալվածատերերն ու կապիտալիստները մի ազգությունը հրահրում եյին մյուսի դեմ, վորպեսզի, ոգտվելով ազգային յերկպառակությունից, ե՛լ ավելի սարկացնեն, ե՛լ ավելի շահագործեն աշխատավոր մասսաներին:

Բոլշևիկյան կուսակցությունը ճիշտ մոտեցավ ազգային հարցի լուծմանը Ռուսաստանում: Այս հարցի լուծման մեջ հսկայական յերախտիք ունի ընկեր Ստալինը: Ընկեր Ստալինի ղեկավարությամբ բոլշևիկյան կուսակցությունը համախմբեց նախկին Ռուսաստանի բոլոր ազգությունները, բոլոր ժողովուրդները և ժողովուրդների փոխադարձ վստահության, մեծագույն բարեկամության հիման վրա ստեղծեց խորհրդային պետություն՝ Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Մեծ Միությունը:

1917 թվի պատմական որերին, բոլշևիկների VII (ապրիլյան) կոնֆերենցիայում ընկեր Ստալինը հանդես յեկավ ազգային հարցի վերաբերյալ զեկուցումով, վորի մեջ հիմնավորեց բոլշևիկյան ազգային քաղաքականությունը: Մեծ Հոկտեմբերի համար մղած մարտերում լենինյան-ստալինյան ազգային քաղաքականությունը Ռուսաստանի բանվոր դասակարգի համար ապահովեց բոլոր կե-



ղեքված ազգությունների պաշտպանությունը, վորը հանդիսացավ Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ հեղափոխության հաղթանակի պատճառներից մեկը:

Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակն ամրապնդելու համար բոլշևիկները պետք ե ստեղծեյին նոր պետություն, վորի մեջ միավորվեյին հավասար, ազատ ազգություններն ու ժողովուրդները:

Պատմական այս մեծագույն խնդրի իրագործումը, Լենինի առաջարկությամբ, կուսակցությունը հանձնարարում ե ընկեր Ստալինին: 1917 թվից մինչև 1923 թ. ընկեր Ստալինն Ազգությունների գործերի ժողովրդական կոմիսար ե: Նրան ե պատկանում պատմական հռչակավոր «Ռուսաստանի ժողովուրդների իրավունքների դեկլարացիան»: Այս նշանավոր փաստաթղթով ազդարարվեց յեղբայրական վստահություն, մեծ բարեկամություն մեր յերկրի ժողովուրդների միջև: Մեր Մեծ Խորհրդային Միության յուրաքանչյուր ազգային հանրապետության ստեղծման մեջ գործուն մասնակցություն ե ցույց տվել Իոսիֆ Վիսսարիոնովիչ Ստալինը: Ընկեր Ստալինն անմիջականորեն ղեկավարում եր Խորհրդային Ուկրաինական Հանրապետության համար մղվող պայքարը: Նա անձամբ մասնակցություն եր ցույց տալիս Բելոռուսական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության ստեղծմանը: Նա ստեղծեց Անդրկովկասի ու Միջին Ասիայի խորհրդային սոցիալիստական հանրապետությունները: Մեր յերկրում նա սիրով, հայրաբար եր վերաբերվում ամեն մի ազգության, ամեն մի ժողովրդի, ոգնում եր նրանց կառուցելու իրենց խորհրդային ազատ կյանքը:

1921 թվին, մեր կուսակցության X պատմական համագումարում Լենինի առաջարկությամբ ընդունվեց նոր տնտեսական քաղաքականությունը, վորն ապահովեց բանվոր դասակարգի և գյուղացիության ամուր դաշինքը: Այս դաշինքը հարկավոր եր նրա համար, վորպեսզի ակտիվորեն կառուցենք սոցիալիզմը մեր յերկրում: Այս հիմնական խնդրին, բանվորների և գյուղացիների դաշինքի խնդրին, սոցիալիզմի կառուցման խնդրին ել հենց նվիրված եր ընկեր Ստալինի զեկուցումը՝ «Կուսակցության հերթական խնդիրները ազգային հարցում»:

Մենք վերացրինք ազգային ճնշումը,—ասում եր ընկեր Ստալինը,—բայց դա բավական չե, հարկավոր ե վերացնել անցյալի ծանր ժառանգությունը՝ առաջներում ճնշված ժողովուրդների

տնտեսական, քաղաքական և կուլտուրական հետամնացությունը, հարկավոր է ոգնել նրանց հասնելու այս տեսակետից կենտրոնական Ռուսաստանին:

Իր զեկուցման մեջ ընկեր Ստալինը կոչ էր անում մեր բոլշևիկյան կուսակցությանն անհաշտ պայքար մղել մեծապետական շովինիզմի և տեղական նացիոնալիզմի դեմ:

Կուսակցության XII համագումարում ընկեր Ստալինը հանդես է գալիս զեկուցումով ազգային հարցի մասին: Այս զեկուցման մեջ ընկեր Ստալինը նշում է բոլշևիկյան ազգային քաղաքականության միջազգային հսկայական նշանակությունը: Ցայտուն որինակներով ընկեր Ստալինը ցույց տվեց մեծապետական շովինիզմի ու տեղական նացիոնալիզմի վնասակարությունը և կոչ արեց կուսակցությանը անհաշտ պայքար մղելու մեծապետական շովինիզմի ու տեղական նացիոնալիզմի դեմ: Ընկեր Ստալինը վճռական մարտ տվեց վրացական նացիոնալ-ուկլոնիստներին: Նա մերկացրեց տրոցկիստների խորամանկ պլանները, վորոնք պաշտպանում էին բուրժուական նացիոնալիստներին:

1922 թվին, Խորհուրդների Համամիութենական I համագումարում, Լենինի ու Ստալինի առաջարկությամբ ընդունվում է պատմական վորոշում Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միություն՝ ԽՍՀՄ ստեղծելու մասին:

Այս համագումարում ընկեր Ստալինն իր յելույթի մեջ ասաց·

«Խորհրդային իշխանությունը մտածում է արդեն վոչ միայն գոյության մասին, այլև այն մասին, վորպեսզի զարգանա ու դառնա միջազգային լուրջ ուժ, վորը կարող է ներգործել միջազգային իրադրության վրա, վորը կարող է փոփոխել այն հոգուտ աշխատավորների շահերի»:

Այսոր մենք կարող ենք ասել, վոր մեր բոլշևիկյան կուսակցության կատարած վիթխարի աշխատանքի հետևանքով, մեծ Ստալինի կատարած անխոնջ աշխատանքի հետևանքով մեր Խորհրդային Միությունը դարձել է բանվորների ու գյուղացիների հզոր, անպարտելի սոցիալիստական պետություն, վորը հաջողությամբ ներգործում է միջազգային իրադրության վրա, վորի հետ ստիպված են հաշվի նստելու նաև մեր թշնամիները:

Մենք վոչ միայն ապահովում ենք մեր անկախ, ազատ գոյությունը, այլև մենք արդեն յեղբայրական ոգնություն ցույց տվինք մեր արյունակից յեղբայրներին՝ ուկրաինացիներին ու բելո-



ռուսներին, վորոնց առաջներում կեղեքում էին լեհական պաներն ու կապիտալիստները, և նրանց վերամիացրինք ուկրաինական և բելոռուսական ժողովուրդներին: Մենք այժմ հնարավորություն ունենք մեծ ոգնության ցույց տալու ֆինլանդական ժողովրդին նրան իմպերիալիզմի լծից ազատագրելու գործում:

Խորհրդային Միության մեջ ծաղկում ու զարգանում են մեր յեղբայրական հանրապետությունները: Նրանք ամրացնում են Խորհրդային Միության հզորությունը և յեղբայրական ոգնություն ստանում իրենց ավագ, բայց հավասար յեղբորից՝ ռուս մեծ ժողովրդից:

Ծաղկել է մեր Խորհրդային Մեծ Միությունը, զարգանում է յուրաքանչյուր ժողովրդի, յուրաքանչյուր հանրապետության կուլտուրան առանձին վերցրած: Բարձրացել է այն ժողովուրդը, վորը ցարական կարգերում ընկճված էր, անգրագետ: Այժմ նա բարձրացրել է իր կուլտուրան, բարձրացրել է իր գրագիտությունը, զարգացնում է իր արվեստը, զարգացնում է իր հարստությունները և ապրում յերջանիկ, ունևոր կյանքով:

Ստալինը խորհրդային մեծ ժողովրդի անխախտելի բարեկամության սիմվոլն է: Խորհրդային Միության բոլոր ժողովուրդներն ի դեմս Ստալինի տեսնում են իրենց բարեկամը, հայրն ու առաջնորդը:

Ստալինը՝ ժողովրդի բարեկամն է իր պարզությամբ:

Ստալինը՝ ժողովրդի հայրն է իր սիրով դեպի ժողովուրդը:

Ստալինը՝ ժողովուրդների առաջնորդն է, ժողովուրդների պայքարի ղեկավարի իր իմաստունությամբ:

Ընկեր Ստալինի մեծությունն այն է, վոր նա, իբրև ժողովրդից յելած, նրա իսկական զավակը, վորը ծանր կյանք է անցկացրել ժողովրդի շահերի համար պայքարելով, մշտապես իր հեղափոխական գործունեությունն ուղղել է դեպի աշխատավոր ժողովրդի բարեկեցությունը: Ժողովրդի մեջ է մեր ամբողջ հզորությունը, մեր ամբողջ անպարտելիությունը: Ժողովրդի ստեղծարար ուժը մեծ ուժ է,—անդադար ուսուցանում է ընկեր Ստալինը:

Բոլշևիկյան կուսակցությունն անպարտելի յե այն պատճառով, վոր նա անխզելի կապերով կապված է աշխատավոր մեծ ժողովրդի հետ: Ստալինի վեհությունը մեր ազատ խորհրդային ժողովրդի վեհությունն է:

Ահա թե ինչու,—ասում է ընկեր Ստալինը,—«մեր կառավարությունն ու կուսակցությունն ուրիշ շահեր և ուրիշ հոգսեր

չունեն, բացի ժողովրդի շահերից ու հոգսերից»: Բայց որպեսզի արտահայտվեր ժողովրդի ստեղծարար ուժը, որպեսզի բղխեր ժողովրդական ստեղծագործ աղբյուրը, հարկավոր էր նրա սոցիալական ու ազգային ազատագրումը, հարկավոր էր ստեղծել բոլշևիկյան կուսակցություն, որը կարողանար ապահովել աշխատավորների սոցիալական և ազգային ազատագրումը:

Լենինն ու Ստալինը բոլշևիկյան այդպիսի հեղափոխական կուսակցության կազմակերպիչներն են ու ստեղծողները: Լենինի հետ միասին Ստալինը կառուցում, մաքրում ու ամրացնում էր բոլշևիկյան կուսակցությունը: Լենինի մահվանից հետո, ընկեր Ստալինը պաշտպանեց բոլշևիկյան կուսակցության վերաբերյալ լենինյան ուսմունքի անաղարտությունն ու սկզբունքները, նա պաշտպանեց մեր կուսակցությունը անողոք պայքար մղելով տրոցկիստների, աջերի, մենշևիկների, եսերների ու բուրժուական նացիոնալիստների—աշխատավոր ժողովրդի այս բոլոր թշնամիների դեմ:

Յեվ այսօր, ընկեր Ստալինի 60-ամյակի որը, մենք տոնում ենք բանվոր դասակարգի հաղթանակը, մեր բոլշևիկյան կուսակցության, լենինիզմի հաղթանակը:

Բանվոր դասակարգը հաղթեց, որովհետև պայքարը ղեկավարում էր բոլշևիկյան կուսակցությունը, իսկ բոլշևիկյան կուսակցությունն ստեղծել են Լենինն ու Ստալինը:

Աշխատավոր ժողովուրդը հաղթեց, որովհետև նա ստեղծեց խոշոր արդյունաբերություն, իսկ դրա համար մենք պարտական ենք ընկեր Ստալինին, իբրև յերկրի սոցիալիստական ինդուստրացման համար անհաշտ մարտնչողի:

Ժողովուրդը հաղթեց, որովհետև հաղթեց բանվոր դասակարգի դաշինքն աշխատավոր գյուղացիության հետ: Սրանով մենք պարտական ենք ընկեր Ստալինին, իբրև բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքի համար մարտնչողի:

Սոցիալիզմը հաղթեց մեր յերկրում, որովհետև մեր գյուղացիության համար ապահովվեց անցումը սոցիալիստական շինարարության ռելսերի վրա, իսկ դրա համար մենք պարտական ենք կոլտնտեսային կարգերին, որոնք ստեղծեց մեր մեծ Ստալինը:

Մեր պետության անկախ գոյությունը պաշտպանելու համար հարկավոր է մեր ժողովրդի համագործակցությունը: Այս համախմբվածությունը մենք ունենք: Մեր մեծ Խորհրդային Միության



բոլոր ժողովուրդները համախմբված են ի մի: Այս համախմբվածությունը մեզ ապահովեց ընկեր Ստալինն ազգային քաղաքականության իր հանճարեղ թեորիայով և պրակտիկայով:

Ժողովուրդը նվաճեց մեր մեծ Խորհրդային Միության գոյության իրավունքը, որովհետև նա ունի քաջարի Կարմիր Բանակ և Ռազմածովային Նավատորմ, իսկ բանակն ու նավատորմն ստեղծել է և ամենայն որ ամրացնում է մեր մեծ Ստալինը:

Ամբողջ Խորհրդային Միության բոլոր ազգությունների ժողովուրդները խոսում են իրենց հաջողությունների մասին, և այդ հաջողությունները նրանք կապում են ընկեր Ստալինի անվան հետ:

Ուկրաինական ժողովուրդն առանձին սիրով է տոնում իր առաջնորդ, բարեկամ և ուսուցիչ ընկեր Ստալինի 60-ամյակը, որովհետև Ստալինը քաղաքացիական պատերազմի տարիներին անմիջականորեն ղեկավարում էր ուկրաինական ժողովրդի ազատագրական պայքարն իմպերիալիստ-ինտերվենտներից, Պետլյուրայից, Մախնոյից և Դենիկինից. որովհետև ընկեր Ստալինն ամեն որ ղեկավարում է Ուկրաինայի սոցիալիստական շինարարությունը:

Ուկրաինական ժողովուրդը մեծ սիրով շնորհակալություն է հայտնում ընկեր Ստալինին լեհական պաների ու կապիտալիստների լծի տակ տառապող իրենց յեղբայր ուկրաինացիներին ազատագրելու համար: Ուկրաինական ժողովուրդը շնորհակալություն է հայտնում ընկեր Ստալինին ուկրաինական մեծ ժողովրդին միասնական ուկրաինական պետության մեջ վերամիավորելու համար:

Այսօր, ընկեր Ստալինի 60-ամյակի որը ուզում եմ ուկրաինական մեծ ժողովրդի խոսքերով ասել.

**Живи довгі, довгі роки, на благо трудового народу—наш рідний, наш любий Сталін!**

Լ. Պ. ԲԵՐԻԱ

# ՄԵՐ ԺԱՄԱՆԱԿԻ ՄԵԾԱԳՈՒՅՆ ՄԱՐԴԸ

Բոլշևիկների կուսակցությունը, մեր ամբողջ յերկիրը հպարտությամբ ու հրճվանքով այսօր նշում են մի պատմական տարեթիվ՝ իրենց սիրելի առաջնորդ ընկեր Ստալինի ծննդյան 60-ամյակը։

Այսօր մեզանից յուրաքանչյուրն արտահայտում է անսահման սերը ու նվիրվածության իր զգացմունքներն առաջնորդի նկատմամբ, խոր յերախտագիտության զգացմունքները մեր պատմական հաղթանակների համար և հաստատ վճռականությունն՝ առաջ ընթանալու մեծ Ստալինի իմաստուն առաջնորդությամբ։

Մենք բոլորս ամեն օր, մեր կյանքի ու աշխատանքի ամեն մի բնագավառում, մեր հզոր սոցիալիստական հայրենիքի կյանքում զգում և տեսնում ենք ստալինյան գործերի մեծությունը։ Այսօր դժվար է ընդգրկել և բառերով արտահայտել այն ամենը, ինչ արել և անում է ընկեր Ստալինը՝ հասարակության արմատական վերակառուցման համար, մարդկության ազատության ու յերջանկության համար։ Միայն գալիք սերունդները կկարողանան լիովին պատկերացնել կոմունիզմի կառուցման հոյակապ պատմական պրոցեսի պատկերը, կառուցում, վորի վոգեշնչողն ու կազմակերպողն է ընկեր Ստալինը։

Պատանեկան տարիքից սկսած իր կյանքն ու աշխատանքն ընկեր Ստալինը նվիրում է աշխատավորներին ճնշումից ու շահագործումից ազատագրելու գործին։ Նա վաղ կռահեց այդ մեծ գործի իրականացման ուղիները՝ ռուս մարքսիստների ավագ սերնդի հետ ունեցած շփման շնորհիվ։

«Հեղափոխական շարժման մեջ,—ասում է ընկեր Ստալինը,— յես մտել եմ 15 տարեկան հասակից, յերբ յես կապվեցի այն ժամանակ Անդրկովկասում ապրող ռուս մարքսիստների ընդհատակյա խմբակների հետ։ Այդ խմբակներն ինձ վրա մեծ ազդեցություն ունեցան և մարքսիստական ընդհատակյա գրականության ճաշակ պատվաստեցին ինձ» (Լենին և Ստալին։ ՀամԿ(բ)Կ

*պատմության ուսումնասիրման վերաբերյալ յերկերի ժողովածու*, *հատ*. III, *եջ* 527, *ռուս*. *հրատ*.):

Լենինի յերկերի ուսումնասիրությունը վորոշեց այն ուղին, ուր ընկեր Ստալինը վոտք դրեց իր հեղափոխական գործունեյության հենց սկզբից: *Այդ—պրոլետարիատի իսկական հեղափոխական կուսակցության ստեղծման ու ամրապնդման, ինքնակալության և բուրժուազիայի տիրապետությունը տապալելու համար բանվոր դասակարգի բացահայտ քաղաքական պայքարի կազմակերպման ուղին ե:*

*Հեշտ չեր բաց անել այդ ուղին Կովկասում, վորտեղ ցարիզմի ազգային-գաղութային ճնշման պայմաններում ազգայնական բուրժուազիան և մանր-բուրժուական ինտելլիգենցիան մարքսիզմը հարմարեցնում եյին իրենց ծրագրին և ձգտում եյին բանվորական շարժումն ոգտագործել իրենց ազգայնական նպատակների իրականացման համար: Հայտնի յե, վոր Կովկասը, մասնավորապես Վրաստանը, հայրենիքն ու հիմնական բազան եր համառուսաստանյան մենշևիզմի այնպիսի գամփռների գործունեյության, ինչպես Ժորդանիան, Ձխեիձեն, Ծերեթելին, Ձխենկելին և ուրիշները:*

*Այդ պայմաններում յերիտասարդ Ստալինը գլխավորեց Կովկասի բանվորների հեղափոխական պայքարը: Ստեղծելով լենինյան-իսկրայական ուղղության առաջին հեղափոխական բանվորական կազմակերպությունները, ընկեր Ստալինը և նրա զինակիցները անողոք պայքար եյին մղում բուրժուա-նացիոնալիստական ու մանր-բուրժուական կուսակցությունների մերկացման համար, բանվորներին իդեոլոգիական ու քաղաքական խորթ ազդեցությունների տակից դուրս բերելու համար:*

Այդ ուղղությամբ ընկեր Ստալինի առաջին քայլը յեղավ մարքսիզմի ուսումնասիրումը, մարքսիստական հեղափոխական թեորիայի մաքրումը բուրժուա-նացիոնալիստական ու այլ խլամից, վորն այդտեղ եր մտցվել մենշևիզմի սյուների՝ Ժորդանիայի, Ձխեիձեյի և ուրիշների գրական աշխատություններով, վորոնք բանվորների մեջ տարածվում եյին լեգալ-մարքսիստական որգանների միջոցով: *Արդեն անցյալ դարի 90-ական թվականների վերջերին ընկեր Ստալինը խորապես կրթված մարքսիստ եր, ճանաչված հեղինակություն՝ հեղափոխական շարժման թեորիայի հարցերի ասպարեզում:*

Նրա յերկրորդ քայլը յեղավ՝ սոցիալիզմը բանվորական շարժման հետ միացնելու պրակտիկ իրագործումը: *Ստալինը գիտական սոցիալիզմի թեորիան մտցրեց բանվորների հոծ զանգվածների մեջ, մարքսիզմի պրոպագանդան կապելով վոչ միայն Ռուսաստանի հեղափոխական շարժման ընդհանուր հարցերի հետ, այլ և Անդրկովկասի պայմաններում բանվորների հեղափոխական պայքարի կազմակերպման կոնկրետ հարցերի հետ: Դա այն ժամանակ վճռական նշանակություն ուներ, քանի վոր մենշևիկներն ամեն կերպ ձգտում եյին բանվորներին իրենց կողմը գրավել զանազան խմբակների, կիրակնորյա լուսավորական դպրոցների կազմակերպման և այլ միջոցներով: Ահա թե ինչ ե ասում իր հիշողությունների մեջ առաջավոր բանվորներից մեկը, Բաթում քաղաքում 1901 թվին գոյություն ունեցող ստալինյան խմբակի մի մասնակից.*

*«Մի անգամ ընկեր Ստալինն ինձ հարցրեց. «Ի՞նչ են սովորեցնում ձեզ կիրակնորյա դպրոցում»,—և յերբ յես նրան պատասխանեցի, վոր այնտեղ սովորեցնում են, թե ինչպես ե շարժվում արևը, նա ժպտալով ասաց.*

—«Լսի՛ր, արևը, մի վախեցիր, ճանապարհը չի կորցնի: Բայց ահա, դու սովորիր, թե ինչպես պետք ե շարժվի հեղափոխական գործը, և ինձ համար սարքիր մի փոքրիկ անլեգալ տպարան...»: *Այսպես եր ընկեր Ստալինը հավաքում ու խլում «մեսամեդասիականներից» բանվորներին, նրանց ներգրավելով կուսակցության մեջ»: («Հին բանվորների պատմածները մեծ առաջնորդի մասին»: Թբիլիսի*, 1937 *թ*., *եջ* 38—39, *ռուս*. *հրատ*.):

*Նոր տիպի կուսակցության կազմակերպման լենինյան պլանը դարձավ ընկեր Ստալինի հեղափոխական գործունեյության մարտական ծրագիրը,—և այդ մոմենտից սկսած նա իր ամբողջ անսպառ յեռանդը, իր ամբողջ մարտական տեմպերամենտը և իր խոր գիտելիքները նվիրում ե Կովկասում լենինյան-իսկրայական կազմակերպությունների ստեղծման ու կազմակերպման գործին, բոլշևիկների կուսակցության կառուցման ու ամրապնդման գործին: Կիրառելով լենինյան գիծը և ջերմորեն պաշտպանելով կուսակցության շինարարության լենինյան սկզբունքները, ընկեր Ստալինը* 1904 *թվին գրում եր.*

«Միայն այն ժամանակ, յերբ մենք կմտնենք կուսակցական կազմակերպություններից մեկի մեջ և, այդպիսով, մեր անձնական շահերը կմիաձուլենք կուսակցության շահերի հետ,—միայն այդ ժամանակ մենք կկարողանանք դառնալ կուսակցության ան-

դամներ և, դրա հետ միասին, պրոլետարների բանակի իսկական ղեկավարներ»:

*Այնպես, ինչպես և Լենինը, Ստալինն իր անձնական շահերն ու իր կյանքը լիովին միաձուլել է կուսակցության շահերի ու կյանքի հետ: Նրա կյանքն ու գործունեությունն անբաժանելի յեն բոլշևիկյան կուսակցության պատմությունից:*

*Սկսած* 1898 *թվից, ընկեր Ստալինը դառնում է լենինյան դպրոցի պրոֆեսիոնալ հեղափոխական և հսկայական աշխատանք է կատարում Կովկասում բոլշևիկյան կազմակերպությունների ստեղծման ու ամրապնդման ուղղությամբ, Անդրկովկասում ցարական ինքնակալության դեմ բանվորների և գյուղացիների առաջին հեղափոխական մարտերի ղեկավարման ուղղությամբ: Լենինյան—իսկրայական, հետագայում բոլշևիկյան, սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների ստեղծումը Թիֆլիսում, Բաքվում, Բաթումում և արդյունաբերական այլ կենտրոններում, առաջին մասսայական քաղաքական գործադուլի և բացահայտ ցույցի կազմակերպումը Թիֆլիսում* (1900—1901 *թ. թ.*), *Բաթումի հռչակավոր քաղաքական ցույցի* (1902 *թ.*), *Բաքվի խոշորագույն քաղաքական գործադուլի* (1904 *թ.*) *և Վրաստանի ու Անդրկովկասի բանվորների ու գյուղացիների առաջին մասսայական զինված ելույթների կազմակերպումը, ինչպես նաև բոլշևիկյան մամուլի հրատարակումն ու տարածումը, մենշևիզմի ու անարխիզմի գաղափարական ու կազմակերպական ջախջախումը և իր նշանակությամբ կարևորագույն՝ Բաքվի կազմակերպության վերածումը բոլշևիզմի անառիկ ամրոցի—այս բոլորն անխզելիորեն կապված են ընկեր Ստալինի անվան ու ղեկավարության հետ: Այդ պայքարի մեջ ընկեր Ստալինը կոփվեց վորպես ամրակուռ բոլշևիկ, վորպես լենինյան տիպի քաղաքական ղեկավար:*

*Անդրկովկասում կատարած իր աշխատանքի շրջանում ընկեր Ստալինն ակտիվ մասնակցություն է ունենում Ռուսաստանի հեղափոխական շարժման ղեկավարմանը, անձամբ ու գրավոր մշտական կոնտակտ է պահպանում Լենինի հետ, հանդիսանալով նրա հավատարիմ ոգնականը կուսակցական համագումարների և կոնֆերանսների նախապատրաստման ու աշխատանքի ասպարեզում:*

1911 *թվին ընկեր Ստալինը կուսակցության կամքով աշխատանքի յե անցնում Ռուսաստանի հեղափոխական կենտրոնում—Պետերբուրգում, և դառնում է Լենինի ամենամերձավոր ու անմիջական ոգնականը Ռուսաստանի հեղափոխական շարժումը ղեկավարելու և սոցիալիստական հեղափոխությունը նախապատրաստելու գործում:*

*Ցարական ինքնակալությունը հենց սկզբից հանձին Ստալինի նախազգացել էր իր վտանգավոր ու անհաշտ թշնամուն: Սկսած* 1902 *թվից նա ութ անգամ ձերբակալում է Ստալինին, պահում է նրան բանտերում, յոթ անգամ քշում է դաժան հյուսիսի հեռավոր ծայրամասերը և դրանցից վեց անգամ ընկեր Ստալինին հաջողվել է փախչել ցարական աքսորավայրից, վորպեսզի նոր յեռանդով ղեկավարի պայքարը բուրժուա-կալվածատիրական կարգերի տապալման համար:*

*Հեղափոխական զգաստություն և անհաշտություն հեղափոխական շարժման մեջ մարքսիստական-լենինյան գծից կատարվող նույնիսկ ամենափոքր նահանջների նկատմամբ—ահա այն հիմնական ու կարևորագույն սկզբունքը, վորի վրա ընկեր Ստալինը, Լենինի հետ միասին, դաստիարակում է բոլշևիկների կուսակցությունը, պաշտպանելով նրա միաձուլությունն ու միասնությունը, պրոլետարիատի դիկտատուրայի ամրությունն ու անխորտակելիությունը: Դեռ բոլշևիզմի կազմավորման առաջին տարիներին,* 1904 *թվին, ընկեր Ստալինը գրում էր.*

«Ծրագրային, տակտիկական ու կազմակերպական հայացքների *միասնությունն* այն հողն է, վորի վրա կառուցվում է մեր կուսակցությունը: Այդ հայացքների *միասնությունը* միայն կարող է կուսակցության անդամներին միավորել *մեկ* կենտրոնացված կուսակցության մեջ... Մենք պետք է լինենք չափազանց զգաստ և չպետք է մոռանանք, վոր մեր կուսակցությունը *մի ամրոց* է, վորի դռները բացվում են միայն արժանավորների համար»:

*Լենինի հետ միասին և նրա ղեկավարությամբ, իսկ Լենինի մահից հետո լենինիզմի դրոշի տակ ընկեր Ստալինը կառուցում էր սոցիալիզմի այդ անառիկ ամրոցը—բոլշևիկյան կուսակցությունը:*

*Լենինի հետ միասին ընկեր Ստալինը բոլշևիկների Պրագայի կոնֆերանսի ժամանակաշրջանում կործանիչ հարվածներ է հասցնում լիկվիդատոր-մենշևիկներին, տրոցկիստներին ու հաշտվողականներին:*

1917 *թվին, յերբ կուսակցության կյանքի և սոցիալիստական*

հեղափոխության վճռական շրջանում ժողովրդի՝ հետագայում մերկացված թշնամիներ Զինովևը, Կամենևը, Ռիկովը և ուրիշները փորձում էյին դավաճանել կուսակցությանն ու բանվոր դասակարգին, ընկեր Ստալինը Լենինի ամենահավատարիմ ու ամենամոտիկ ոգնականն էր ստոր դավաճանների մերկացման ու ջախջախման գործում, հեղափոխության ուժերը մոբիլիզացիայի յենթարկելու և Հոկտեմբերյան հաղթական զինված ապստամբությունն իրականացնելու գործում:

1918 թվին, յերբ իմպերիալիզմի անարգ գործակալները՝ Տրոցկին, Բուխարինը և նրանց շայկան փորձում էյին վիժեցնել Բրեստի հաշտությունը և դրանով իսկ կործանել խորհրդային իշխանությունը Ռուսաստանում, ընկեր Ստալինը Լենինի հետ էր և ակտիվ կերպով ոգնում էր Լենինին հեղափոխության թշնամիների քայքայիչ գործունեությունը խափանելու գործում:

1918—1920 թվականներին, քաղաքացիական ամենադաժան պատերազմի ու ինտերվենցիայի պայմաններում, Հուդա Տրոցկին ձգնում էր վիժեցնել Խորհրդային Հանրապետության պաշտպանությունը: Լենինի ղեկավարությամբ ընկեր Ստալինը յերկաթե ավելով մաքրեց տրոցկիստական դրածոներին և ապահովեց ներքին ու արտաքին հակահեղափոխության զինված ուժերի ջախջախումը:

1920—1921 թվականներին Ստալինը Լենինի հավատարիմ ու ամենամերձավոր ոգնականն էր բոլոր հակակուսակցական խմբերի դեմ կուսակցության կողմից մղվող պայքարում, խմբեր, վորոնք փորձում էյին վիժեցնել կուսակցության լենինյան գիծը յերկրի քաղաքական ու տնտեսական ղեկավարման գործում:

Յերբ ծավալուն սոցիալիստական շինարարության անցնելու ժամանակ մեռավ Լենինը, բոլշևիկների կուսակցությունը, մեր յերկրի աշխատավորները սերտորեն համախմբվեցին ընկեր Ստալինի շուրջը, վորպես լավագույն լենինյանի, փորձված առաջնորդի:

Ընկեր Ստալինը վստահ ու համարձակ՝ կուսակցությանն ու ժողովրդին առաջ տարավ լենինյան ուղիով դեպի սոցիալիզմի հաղթանակը մեր յերկրում: Նրա իմաստուն ղեկավարությամբ բոլշևիկների կուսակցությունն իր շուրջը համախմբելով աշխատավորության ամենալայն մասսաներին, կործանիչ հարվածներ հասցրեց սոցիալիզմի բոլոր թշնամիներին—տրոցկիստներին, աջերին, տրոցկիստական-բուխարինական բլոկին, վորոնք ձըգ-



նում էյին վիժեցնել հաղթական սոցիալիստական շինարարությունը մեր յերկրում և վերականգնել կապիտալիզմը,—ջախջախեց ու հողմացրիվ արեց նրանց:

Ընկեր Ստալինը հիմնավորեց ու զարգացրեց լենինյան ուսմունքը մեկ յերկրում՝ կապիտալիստական շրջապատման պայմաններում՝ սոցիալիզմի հաղթանակի մասին, մերկացրեց ու ջախջախեց հակալենինյան գաղափարական հոսանքները պետական, տնտեսական ու կուլտուրական շինարարության հարցերում: Նա ստեղծեց մեծ ուսմունքը յերկրի սոցիալիստական ինդուստրացման ու գյուղատնտեսության կոլեկտիվացման մասին և կուսակցությանն ու ժողովրդին մոբիլիզացիայի յենթարկեց արդյունաբերության շինարարության և գյուղատնտեսության վերակառուցման վիթխարի պլանների իրագործման համար,—պլաններ, վորոնք փայլուն արտահայտություն գտան ստալինյան հնգամյակների մեջ:

Ընկեր Ստալինն ե՛լ ավելի զարգացրեց Մարքսի—Ենգելսի—Լենինի ուսմունքը, ե՛լ ավելի բարձրացրեց թեորիայի նշանակությունը կոմունիզմի կառուցման պրակտիկ աշխատանքի ղեկավարման գործում՝ պրակտիկ փորձի ընդհանրացման և շարժման հեռանկարների կանխատեսման հիման վրա: Նա մերկացրեց բոլշևիզմի պատմության ֆալսիֆիկատորներին, նոր բարձրության հասցրեց կուսակցական թեորիայի անաղարտության նշանակությունը և մեր կուսակցությանն ու ժողովրդին, ամբողջ աշխարհի աշխատավորներին զինեց տեսական հանճարեղ յերկերով, վորոնք նրանց կողմնորոշում են պայքարի ու շինարարության ամենաբարդ հարցերում:

Ընկեր Ստալինը ստեղծեց ամբողջական մարքսիստական-լենինյան ուսմունքը կադրերի մասին: Զգոնությունը, բարձր սկզբունքայնությունն ու գաղափարականությունը, մարդկանց ճանաչելու և նրանց դրական ու բացասական կողմերը տեսնելու հմտությունը, անսահման նվիրվածությունը ժողովրդին, կադրերի հոգատար աճեցումը—կադրերի մասին ստալինյան ուսմունքի հիմնական սկզբունքներն են: Այդ ուսմունքի հիման վրա ընկեր Ստալինի ղեկավարությամբ և ամենորյա հոգատարությամբ մեր յերկրում ստեղծված են կուսակցական, խորհրդային ու տնտեսական ղեկավարների միլիոնավոր կադրեր, խորհրդային ինտելիգենցիայի կադրեր:

Հեղափոխական զգոնության մասին, կապիտալիստական շըր-

*ջապատման վտանգի մասին ստալինյան ուսմունքին ենք մենք պարտական մեր հայրենիքի պաշտպանական հզորության ստեղծման համար, այն սոցիալիզմի անառիկ ամրոցը դարձնելու, մեր Խորհրդային պետության հետագա ամրապնդման համար:*

*Ուրիշի ձեռքերով կրակից շագանակներ հանելու ձգտող իմպերիալիստական պետությունների նենգ մեքենաների վերաբերմամբ զգոն լինելու ստալինյան ուսմունքին ենք պարտական մենք միջազգային քաղաքականության ասպարեզում մեր հաջողությունների և միջազգային գործերում Խորհրդային Միության բացառիկ կերպով աճած հեղինակության համար, վորոնք հասցրին մեր արյունակից յեղբայրների—արևմտյան ուկրաինացիների ու բելոռուսների ազատագրմանը պանական ճնշումից և նրանց վերամիացմանը մեզ հետ:*

Բացառիկ կերպով մեծ է ընկեր Ստալինի դերն ազգային հարցի ծրագրի մշակման և մեր կուսակցության ազգային քաղաքականության իրականացման գործում: *Մեր կուսակցությունն ընկեր Ստալինի ղեկավարությամբ վերջնականապես ջախջախելով բուրժուա-նացիոնալիստական հոսանքներն ու խմբավորումները, ապահովեց յեղբայրական անխորտակելի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միությունը, ապահովեց ԽՍՀՄ ժողովուրդների ստալինյան բարեկամությունը՝ մեծ ռուս ժողովրդի ղեկավարությամբ:*

*Հեղափոխական զգոնության մասին ստալինյան իմաստուն ուսմունքով զինված, մեր կուսակցությունը և նրա Կենտրոնական Կոմիտեն, ամբողջ խորհրդային ժողովուրդը սովորեցին մերկացնել և վճռականորեն խափանել ներքին ու արտաքին թշնամիների քայքայիչ աշխատանքի ամեն մի արտահայտություն:*

Ընկեր Ստալինն է ուղղություն տալիս մեր յերկրի կյանքի բոլոր կողմերին: Նա յե նախաձեռնողն ու կազմակերպողը մեր բոլոր հաղթանակների, նոր կյանքի կառուցման բոլոր մեծ ձեռնարկումների: Նա սովորեցրեց մեզ, թե ինչպես տիրապետել ժամանակակից, առաջավոր սոցիալիստական տեխնիկային և դնել ի սպաս ժողովրդի մեր անծայրածիր հայրենիքի ընդերքի անսպառ հարստությունները:

*Ընկեր Ստալինն անձնվիրաբար սիրում է խորհրդային ժողովրդին, անսահմանորեն հավատում է նրա ստեղծագործական ուժերին և ժողովրդի շահերը դասում է ամեն ինչից բարձր: Դեպի ժողովուրդն ունեցած այդ սիրով է տոգորված Ստալինյան*



*Սահմանադրությունը, ժողովրդի ազատության ու յերջանկության Սահմանադրությունը:*

*Յեվ մեր ամբողջ բազմամիլլիոն ժողովուրդը, վորի համար ապահովված է ազատ, խաղաղ աշխատանքը, լավ գիտե, վոր իր յերջանիկ, կուլտուրական ու հարուստ կյանքի համար ինքը պարտական է Ստալինին:*

*Մեր անծայրածիր յերկրի բոլոր ազգություններն ու ժողովուրդները միատեսակ սիրով են արտասանում «Ստալին» անունը, և այդ անվան մեջ է նրանց կյանքն ու յերջանկությունը:*

*Դեպի ընկեր Ստալինն են սիրով ուղղված ամբողջ աշխարհի աշխատավորների հայացքները:*

Ստալինը մեր ժամանակի մեծագույն մարդն է: Նա մեր դարաշրջանի խորագույն տեսաբանն է և պրոլետարական հեղափոխության հանճարեղ ստրատեգն ու տակտիկը:

*Չնայած ցարական բանտերին ու աքսորներին, չնայած քառասունհինգամյա հեղափոխական լարված աշխատանքին, ընկեր Ստալինն առույգ է ու յեռանդով լի: Նա իր ձեռքում ամուր պահում է համաշխարհային կոմունիզմի ղեկը:*

*Ցանկանանք մեր առաջնորդին, ուսուցչին և բարեկամին, հարազատ Ստալինին յերկար ու յերկար կյանք՝ ի բարորություն մեր ժողովրդի, ի բարորություն ամբողջ աշխարհի աշխատավորների:*

Ն. Մ. ՇՎԵՐՆԻԿ

# ՍՏԱԼԻՆԸ ՅԵՎ ՀՈԳԱՏԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՐԴՈՒ ՆԿԱՏՄԱՄԲ

Ոչ ոք այնպես չի կարողանում գնահատել մարդկանց, ոչ ոք այնպես ընդունակ չէ թափանցելու մարդկային հոգու ամենախոր գաղտնարանները, ինչպես Ստալինը:

Բանվոր դասակարգի կուսակցության, խորհրդային 183-միլիոնանոց ժողովրդի առաջնորդ և ուսուցիչ ընկեր Ստալինը վորևէ հարց լուծելիս, լինի նա մեծ, կամ թվում է թե ամենաաննշան հարց, մշտապես մեծագույն հոգատարություն է ցուցաբերում մարդկանց նկատմամբ, հոգատարություն մարդու նկատմամբ: Յեվ սա պատահական չէ: Այս մեծ մարդն իր ամբողջ կյանքի ուղին, իր հեղափոխական յեռուն գործունեության ավելի քան քառասուն տարին նվիրել է հանուն մարդկության յերջանկության, կոմունիստական հասարակակարգի հաղթանակի:

Իր հեղափոխական պայքարի առաջին որերից ընկեր Ստալինը մշտապես յեղել է բանվոր դասակարգի հետ, սովորեցրել է նրան պայքարել շահագործողների դեմ, ցույց տալով անվեհերության ու հերոսության օրինակներ իր կազմակերպած ցույցերում ու գործադուլներում, բանվոր դասակարգի իշխանության համար կապիտալի դեմ զինված կռիվ մղելիս, քաղաքացիական պատերազմի ռազմաճակատներում միջազգային ինտերվենցիայի դեմ կռվելիս:

Բանվոր դասակարգի դավաճանների դեմ անողոք կռիվ մղելով, մեծ Լենինի հավատարիմ աշակերտ ու մերձավոր զինակից մեծ Ստալինը Լենինի հետ միասին կառուցեց մեր փառապանծ բոլշևիկյան կուսակցությունը, վորի ղեկավարությամբ բանվոր դասակարգը տապալեց կալվածատերերի ու կապիտալիստների իշխանությունը, հիմնեց բանվոր դասակարգի դիկտատուրան, ջախջախեց իր թշնամիներին և կառուցեց սոցիալիստական հասարակություն:

Լենինի մահվանից հետո ընկեր Ստալինի առջև ծառացավ պատմական խնդիր՝ հսկայական յերկիրը լենինյան ուղիով տա-

նել դեպի կոմունիզմի հաղթանակը: Յերկիրն այն ժամանակ դեռ նոր եր շոկվում այն քայքայումից, վոր նրան պատճառել եյին չորս տարվա իմպերիալիստական պատերազմն ու յերեք տարվա քաղաքացիական պատերազմը: Ժողովրդական տնտեսությունը ցածր մակարդակի վրա յեր, գյուղը ներկայացնում եր մանր անհատական տնտեսությունների մի ովկիանոս: Քաղաքներում աճում եր գործազրկությունը:

Լենինի մահով սոցիալիզմի թշնամիները, ժողովրդի թըշնամիները նպատակադրել եյին վերադառնալ հին, կապիտալիստական կարգերին, վերականգնել մեր յերկրում կապիտալիստական ստրկությունն ու կեղեքումը:

Իմպերիալիստական պետությունների շտաբները չեյին դադարեցնում նոր ինտերվենցիայի պատրաստությունները Խորհուրդների յերկրի դեմ: Կուսակցության ներսում վարպետորեն քողարկված՝ իմպերիալիզմի ստոր վարձկանները—տրոցկիստները, զինովյեվականները, բուխարինականները դավաճանական, քայքայիչ աշխատանք եյին կատարում իրենց իմպերիալիստական տերերի առաջադրանքներով: Նրանք չարանենգորեն ատում եյին խորհրդային ազատ ժողովրդին և ամենից առաջ բանվոր դասակարգին և կապիտալիստական տաժանք եյին պատրաստում նրա համար: Հարկավոր եր մարդկության հանճար ընկեր Ստալինի մեծագույն խորաթափանցությունը, վորպեսզի այդ դժվարագույն պայմաններում ժամանակին կանխատեսվեր և հնարավոր լիներ մերկացնել թշնամիների բոլոր խորամանկությունները, նրանց ստոր մեքենայությունները և յերկիրը դուրս բերվեր սոցիալիստական հաղթանակների ուղին:

Մեծ յերդում տալով Լենինի դագաղի մոտ, ընկեր Ստալինը, չնայելով թշնամիների վոչ մի գրոհին, իր ձեռքից բաց չթողեց լենինիզմի դրոշը և կուսակցությունը, բանվոր դասակարգը, ամբողջ խորհրդային ժողովուրդը տարավ լենինյան ուղիով, հանուն սոցիալիզմի հաղթանակի պայքարելու համար:

Ամրացնելով բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքը, իբրև խորհրդային իշխանության գոյության և կոմունիզմի ուղիով սոցիալիստական հեղափոխության զարգացման հիմք, ընկեր Ստալինը, իբրև իսկական լենինյան, մեծագույն ստրատեգ և առաջնորդ՝ կուսակցության, բանվոր դասակարգի և ամբողջ խորհրդային ժողովրդի առջև պատմական խնդիր դրեց յերկիրը յենթարկելու սոցիալիստական ինդուստրացման:

Սոցիալիստական ինդուստրացումը հանդիսանում եր կու-



սակցության կենտրոնական խնդիրը սոցիալիզմի հաղթանակի համար մղվող պայքարում, մեր յերկիրը ագրարայինից ինդուստրիալ յերկիր դարձնելու համար մղվող պայքարում, յերկիր, վորն ընդունակ լինի իր սեփական ուժերով արտադրելու այն ամենը, ինչ անհրաժեշտ ե ժողովրդական տնտեսության համար, յերկրի պաշտպանությունն ամրացնելու համար:

Յերկրի սոցիալիստական ինդուստրացման մեջ արտահայտվում եր ստալինյան մեծագույն հոգատարությունը սոցիալիստական հեղափոխության բախտի մասին, բազմամիլիոն խորհրդային ժողովրդի բախտի մասին: Յեվ պատահական չեր, վոր ժողովրդի թշնամիներն ամենադաժան գրոհներով հանդես եյին գալիս կուսակցության դեմ, վորը վարում եր յերկրի ինդուստրացման լենինյան-ստալինյան քաղաքականություն: Ընկեր Ստալինը, վոր հենվում ե Լենինի մեծ ավանդների վրա, ամենից ավելի յեր տեսնում, ամենից խորն եր ըմբռնում ու ամենից ավելի ռեալ կերպով գնահատում մեր յերկրի զարգացման հեռանկարները կապիտալիստական շրջապատման պայմաններում:

Ստալինի համար, իբրև հեղափոխության մեծագույն վարպետի, պարզ եր, վոր առանց հզոր եներգետիկ բազա ստեղծելու, առանց զարգացնելու մետալուրգիան, մեքենաշինությունը, ավտոշինությունը, տրակտորաշինությունը, — այսինքն՝ առանց ծանր ինդուստրիայի զարգացման յերկիրը չի կարող տնտեսապես ամրանալ, յերկիրը չի կարող ապահովել իր պաշտպանունակությունը, յերկիրը չի կարող ապահովել տնտեսական անկախությունը կապիտալիստական յերկրներից:

Ստալինի համար պարզ եր, վոր ծանր ինդուստրիայի զարգացման մեջ ե միայն, և այն ել ամենակարճ ժամանակամիջոցում կատարված զարգացման մեջ, պրոլետարական պետության փրկությունը կապիտալիզմի ռեստավրացիայից, վոր յերկրի ինդուստրացման բազայի վրա միայն կարելի յե հասնել ամբողջ եկոնոմիկայի վերակառուցմանը սոցիալիստական սկզբունքներով:

Ստալինի համար պարզ եր, վոր յերկիրն իր հետամնաց տեխնիկայով, մանրատված գյուղատնտեսությամբ կապիտալիստների հետ տեղի ունենալիք առաջիկա ընդհարման ժամանակ անխուսափելիորեն կճզմվի: Այժմ, իմպերիալիստական յերկրորդ պատերազմի պայմաններում, ընկեր Ստալինի վողջ հանճարեղ խորաթափանցությունն առանձնապես տեսանելի ու հասկանալի յե մեր յերկրի յուրաքանչյուր աշխատավորի՝ ամեն մի բանվորի, ամեն մի կոլտնտեսականի, ամեն մի ծառայողի համար:

Մեր յերկրի յուրաքանչյուր աշխատավորի համար հասկանալի յե, վոր յեթե մենք չունենայինք մեծ Ստալինի ստեղծած պաշտպանական արդյունաբերությունը, վոր յեթե մենք չունենայինք առաջավոր տեխնիկայով հագեցած առաջնակարգ, սոցիալիստական արդյունաբերություն, վորն արտադրում ե ժողովրդական տնտեսության և յերկրի պաշտպանության հետագա զարգացման համար անհրաժեշտ ամեն ինչ, ապա ներկա պայմաններում, յերբ իմպերիալիստական յերկրորդ պատերազմի հրդեհը բոցավառվում ե Արևմուտքում ու Արևելքում, Խորհրդային Միությունն անզեն կլիներ մինչև ատամները զինված թշնամու հանդեպ:

Խորհրդային ժողովուրդն ազատված ե պատերազմի սարսափներից, խորհրդային ժողովուրդը կառուցում ե կոմունիստական հասարակություն, և այս ամենի համար նա պարտական ե մեծ Ստալինին, վորը ժամանակին հոգ տարավ սոցիալիստական պետության տնտեսական և պաշտպանական հզորության ամրացման մասին, վորը հանճարեղ կերպով մերկացրեց պատերազմի հրձիգների թշնամական դավերը, վորոնք ջանում եյին Խորհրդային Միությունը ներքաշել պատերազմի մեջ հոգուտ նրանց, ովքեր սիրում են ուրիշների ձեռքով կրակից շագանակներ հանել:

Ստալինյան սոցիալիստական ինդուստրացումն ապահովեց վոչ միայն հզոր արդյունաբերության զարգացումը· Նրա հիման վրա մեր յերկիրը մեծագույն հեղաշրջում կատարեց նաև գյուղատնտեսության զարգացման մեջ:

Ստալինի ղեկավարությամբ միլիոնավոր մանրատված անհատական տնտեսություններ կանգնեցին կոլեկտիվ աշխատանքի ուղու վրա, կոլտնտեսային շինարարության ուղու վրա, սոցիալիզմի ուղու վրա: Սոցիալիստական արդյունաբերությունը գյուղին տվեց հարյուր-հազարավոր տրակտորներ, կոմբայններ և գյուղատնտեսական ուրիշ ամենաբարդ մեքենաներ, վորոնք թեթևացրին գյուղացու ծանր աշխատանքը, վերջինս դարձրին ավելի արտադրողական:

Հաջող կերպով իրականացված ստալինյան յերկու հնգամյակները հեղափոխության մեծագույն ստրատեգի հանճարեղ պլաններն եյին, սոցիալիզմի ամբողջ ֆրոնտով ծավալուն հարձակման պլանները: Նրանք ապահովեցին արդյունաբերության տեխնիկական վերակառուցումը, յերկրի եկոնոմիկայի արմատական վերափոխումը սոցիալիզմի բազայի վրա, նրա տնտեսական անկախու-



թյունը կապիտալիստական յերկրներից, աշխատավորական մասսաների կյանքի աննախընթաց ծաղկումը:

Ստալինյան հնգամյակների հաջող կատարման հետևանքով վերացված են չահագործող դասակարգերն ինչպես քաղաքում, այնպես ել գյուղում: Ընդմիշտ վերացված ե գործազրկությունը՝ կապիտալիստական յերկրների բանվոր դասակարգի այդ սարսափելի չարիքը, վորից կապիտալիզմի յերկրներում մինչև որս տառապում են տասնյակ-միլիոնավոր մարդիկ:

Մեր յերկրի աշխատավոր մասսաները վոչ միայն ընդմիշտ ազատված են գործազրկությունից, այլև Լենինի—Ստալինի մեծ կուսակցության ղեկավարությամբ նվաճել են աշխատանքի իրավունքը—այն սրբազան իրավունքը, վորի մասին դարերով յերազել են մարդկության առաջավոր մտքերը, վորի մասին միլիոնավոր մարդիկ յերազում են կապիտալիստական յերկրներում: Այս իրավունքը վոչ միայն որենսդրությամբ ամրապնդված ե Ստալինյան Սահմանադրության մեջ, այլև ռեալ կերպով ապահովված ե մեր հայրենիքի յուրաքանչյուր աշխատավորի համար սոցիալիստական ժողովրդական տնտեսությամբ, վորը չգիտե ճգնաժամեր ու կանգառումներ և տարեցտարի հաջողությամբ զարգանում ե:

Մեծ Ստալինի առաջնորդությամբ իրականացված սոցիալիզմը մեր յերկրի աշխատավորների համար ամրապես ապահովել ե հանգստի իրավունքը: Այս իրավունքը յերաշխավորված ե աշխարհի ամենակարճ աշխատանքային որով, տարեկան արձակուրդներ տալով՝ աշխատավարձի պահպանումով, աշխատավորության տրամադրության տակ դնելով ակումբներ, կուլտուրայի պալատներ, կարմիր անկյուններ, հանգստյան տներ և սանատորիաներ: Նախահեղափոխական Ռուսաստանի բանվորներն ու գյուղացիները վոչ միայն յերբեք չեյին յեղել սանատորիաներում կամ կուրորտներում, այլև նրանց ճնշող մեծամասնությունը նույնիսկ վոչ մի գաղափար չուներ դրանց մասին:

Ստալինյան հնգամյակների տարիներին կառուցվել են նոր հանգստյան տներ, նոր սանատորիաներ, կազմակերպված են նոր կուրորտներ:

Ընկեր Ստալինը բացառիկ ուշադրություն ե նվիրում կուրորտների զարգացմանը, նոր սանատորիաների ու հանգստյան տների շինարարությանը: Նա մշտապես հոգ ե տանում այն մասին, վորպեսզի կուրորտներում, սանատորիաներում և հանգըս-

տյան տներում բոլոր պայմաններն ապահովվեն բանվորների, կոլտնտեսականների ու ծառայողների լավագույն հանգստի և բուժման համար։ Ընկեր Ստալինը մշտապես հոգ է տանում ավելացնելու նոր սանատորիաների ու հանգստյան տների շինարարության, կուրորտների բարեկարգման հատկացումները։ Նա պահանջում է, վորպեսզի տարեցտարի աճի հանգստյան տների ու սանատորիաների սպասարկած աշխատավորների թիվը։

Ստալինյան հնգամյակների տարիներին միայն պետական սոցիալական ապահովագրության միջոցներով սանատորիաներում բուժվել են և հանգստյան տներում հանգստացել 16,5 միլիոն մարդ։ Հանգստյան տներում հանգստացողների և սանատորիաներում ու կուրորտներում բուժվողների մեջ քիչ տոկոս չեն կազմում կանայք ու յերեխաները։

Խորհրդային Միության մեջ կին-մայրերը շրջապատված են ստալինյան մշտական հոգատարությամբ։ Տարեցտարի ավելի ու ավելի շատ են հատուկ հանգստյան տներ կազմակերպվում հղի կանանց համար, հանգստյան տներ կազմակերպվում ծննդկան կանանց համար։ Ստեղծված է մանկամսուրների ու մանկապարտեզների հսկայական ցանց, վորը հնարավորություն է տալիս կին-մորը լինելու սոցիալիստական շինարարության ակտիվ մասնակից։

Խորհրդային միլիոնավոր յերեխաներ ամառը հանգստանում են պիոներական ճամբարներում, մանկական հանգստյան տներում, հատկապես կազմակերպված մանկական պարկերում ու մանկական հրապարակներում։

Ու մեր հայրենիքի բոլոր անկյուններում յերեխաներն ասում, գրում, յերգում են իրենց յերգերում՝ «Շնորհակալությո՛ւն մեծ Ստալինին մեր յերջանիկ մանկության համար»։

Այս մանկությունը հիրավի յերջանիկ է։ Մեր յերեխաներն աճում և զարգանում են՝ շրջապատված ստալինյան հոգատարությամբ, նրանց առջև լայն ճանապարհ է բացված իրենց տաղանդը զարգացնելու և կիրառելու համար։

Ստալինյան Սահմանադրությունը բոլոր քաղաքացիների համար ապահովել է կրթության իրավունք։ Խորհրդային յերեխաները կարող են դառնալ ուզած պրոֆեսիայի, ուզած մասնագիտության մարդիկ, դառնալ գիտնականներ գիտության և տեխնիկայի ուզած բնագավառում։ Բոլոր ուսումնական հաստատությունների դռները լայնորեն բաց են մեր հայրենիքի բոլոր քաղաքացիների, մեր աճող սոցիալիստական սերնդի առջև։



Ստալինյան Սահմանադրությունը վոչ միայն ազդարարեց կրթության իրավունքը, այլև այդ իրավունքը ռեալ կերպով ապահովվում է դպրոցների, բարձրագույն ուսումնական հաստատությունների, գիտահետազոտական հիմնարկների ու ակադեմիաների հսկայական զարգացումով։

Ընկեր Ստալինի նախաձեռնությամբ հազարավոր նոր դպրոցներ են կառուցված ինչպես քաղաքում, այնպես էլ գյուղում, հարյուրավոր նոր բուհեր ու տեխնիկումներ են ստեղծված Խորհրդային Միության զանազան քաղաքներում։

Քաղաքում իրականացված է ընդհանուր պարտադիր ուսուցում։ Յերեխաները դպրոցներում կրթվում են ի հաշիվ պետության, իսկ բարձրագույն ուսումնական հաստատությունների սովորողները ձրի կրթությունից բացի ստանում են նաև պետական թոշակ։ Մեր յերկրում ընդհանուր առմամբ սովորում են մոտ 50 միլիոն մարդ։

Մեր յերկրում ստեղծագործ միտքը, նովատորությունն ամեն կերպ խրախուսում են կուսակցությունն ու կառավարությունը և ամենից առաջ ընկեր Ստալինը։ Այնպիսի նովատորներ, ինչպիսիք են Ստախանովն ու Պապանինը, դաստիարակվել ու պատվի և հարգանքի հսկայական բարձրության են հասցվել բոլշևիկյան կուսակցության, մեծ Ստալինի կողմից։

Ստախանովի և նրա հետևորդների նախաձեռնությունը ժամանակին պաշտպանեց մեծ Ստալինը և հսկայական բարձրության հասցրեց իբրև արդիականության անհաղթահարելի շարժման արտահայտություն—իբրև սոցիալիզմի հաղթանակի համար բանվոր դասակարգի պայքարի փառավոր էջերից մեկը։

Պապանինյան հռչակավոր եպոպեյան, վորը գրեց փայլուն էջերից մեկը դաժան Արկտիկայի գաղտնիքների հայտաբերման պատմության մեջ, փայլուն կերպով ավարտվեց շնորհիվ ընկեր Ստալինի ամենօրյա հոգատարության և ուշադրության։ Մեծ Ստալինի հայրական հոգատարությունը վոգևորում էր պապանինականների հերոսական քառյակին տարերքի դեմ մղած նրանց պայքարում, Ստալինի սերը մշտապես ջերմացնում էր նրանց սրտերը և լիակատար հաղթանակի վստահություն ներշնչում։

Դժվարագույն պայմաններում նրանք մշտապես զգում էյին իրենց վերաբերմամբ ստալինյան հոգատարության վողջ ջերմությունը, նրանք վստահ էյին, վոր ինչպիսի դժվարություն էլ նրանց պատահի—մեծ Ստալինն ամեն ինչ կանի նրանց հայրենիք

վերադարձնելու համար: Նրանք գիտեյին, ինչպես այդ գիտե ամբողջ խորհրդային ժողովուրդը, վոր Ստալինի համար մարդու կյանքը ամենագլխավորն է:

Ընկեր Ստալինը մշտապես սովորեցնում է հոգատար վերաբերմունք ցույց տալ մարդկանց և յուրաքանչյուր ղեկավարից պահանջում է սովորել՝ գնահատել մարդկանց, գնահատել մեր ընդհանուր գործին օգուտ բերելու ընդունակ ամեն մի աշխատողի: Ընկեր Ստալինը սովորեցնում է. «...աշխարհի բոլոր արժեքավոր կապիտալների մեջ ամենաարժեքավոր ու ամենավճռողական կապիտալը մարդիկ են, կադրերը»:

Պրոֆմիությունների աշխատանքում ընկեր Ստալինը մշտապես պահանջում է հոգատար և ուշադիր վերաբերմունք դեպի բանվորների ու ծառայողների կարիքներն ու պահանջները: Նա մշտապես պրոֆմիություններից պահանջում է այնպիսի աշխատանք, վորպեսզի պրոֆմիության յուրաքանչյուր անդամ զգա, վոր ինքն ունի իր հարազատ կազմակերպությունը, ուր նա կարող է իր գործով գալ, վստահ լինելով, վոր իրեն ուշադիր կերպով կլսեն, մարդկայնորեն կհասկանան և անհրաժեշտ ոգնություն ցույց կտան:

Ստալինյան հոգատարությամբ են շրջապատված մարդիկ խորհրդային յերկրում վոչ միայն մանուկ հասակում, վոչ միայն նրանց կերտիչ, ստեղծագործ աշխատանքի տարիներին սոցիալիզմի կառուցման ասպարեզում, այլև թե՛ ծերության, թե՛ հիվանդության ժամանակ:

Ստալինյան Սահմանադրությունը յուրաքանչյուր քաղաքացու համար յերաշխավորում է նյութական ապահովվածություն ծերության հասակում և աշխատունակությունը կորցնելու դեպքում: Մեր յերկրում ամեն տարի ավելի ու ավելի շատ բան է արվում, վորպեսզի ծերությունը յերջանիկ լինի, վորպեսզի մարդն իր կյանքի վերջին տարիներին ապրի հոգատարությամբ և ուշադրությամբ շրջապատված, նյութապես ապահով:

Մեր սոցիալիստական հայրենիքի աշխատավորներին տրված այս հսկայական իրավունքները սոցիալիստական ինդուստրացման ստալինյան քաղաքականության պտուղն են, ստալինյան հնգամյակների իրականացման արդյունք, կադրերի, մարդկանց՝ կոմունիստական հասարակություն կառուցողների նկատմամբ ստալինյան մեծագույն հոգատարության արդյունք:

Կուսակցության XVIII պատմական համագումարում մեծ



Ստալինը խորհրդային ժողովրդի առջև խնդիր դրեց՝ մոտակա 10—15 տարիների ընթացքում տնտեսական տեսակետից հասնել և անցնել գլխավոր կապիտալիստական յերկրներից: Սրա մեջ արտահայտվում է ստալինյան խորագույն հոգատարությունը մեր յերկրի տնտեսական և պաշտպանական հզորության հետագա բարգավաճման մասին, հոգատարությունը՝ աշխատավորության նյութական և կուլտուրական մակարդակի հետագա բարձրացման մասին:

Տնտեսական տեսակետից հասնել և անցնել գլխավոր կապիտալիստական յերկրներից,—այդ նշանակում է, վոր մեր յերկրում կլինեն է՛լ ավելի շատ ֆաբրիկաներ ու գործարաններ, յերկաթուղիներ և ջրային ճանապարհներ, ավտոմոբիլային մագիստրալներ և ոդային գծեր: Դա նշանակում է, հետևաբար, վոր մեր յերկրում ավելի շատ կարտադրվեն սպառման բոլոր առարկաները, ավելի շատ կարտադրվեն կոշկեղեն, մանուֆակտուրա, հագուստ և լայն սպառման այլ առարկաներ, ավելի շատ կարտադրվեն մթերքներ աշխատավորական լայն մասսաների աճող պահանջները բավարարելու համար: Դա նշանակում է, վոր յերկրում կստեղծվի մթերքների ու սպառման առարկաների այնպիսի առատություն, վորը հնարավորություն կտա իրականացնելու սոցիալիզմից անցումը կոմունիզմին, իրականացնելու կոմունիզմի բարձրագույն ֆազի սկզբունքը՝ «յուրաքնչյուրից ըստ նրա ընդունակությունների, յուրաքանչյուրին ըստ նրա պահանջների»:

Խորհրդային ժողովուրդը, վորը մեծ Ստալինի ղեկավարությամբ իրականացրեց համաշխարհային-պատմական հաղթանակներ և հիմնականում կառուցեց սոցիալիզմը, ընկեր Ստալինի և կուսակցության XVIII համագումարի դրած խնդրին պատասխանեց ստեղծագործական նախաձեռնության ու արտադրական ակտիվության նոր վերելքով:

Խորհրդային ժողովուրդը յեռանդուն պայքար ծավալեց ստալինյան յերրորդ հնգամյակի մեծ պլանի կատարման և գերակատարման համար, հնգամյակ, վորը կարևորագույն ետապ է հանդիսանում ընկեր Ստալինի դրած պատմական խնդրի իրականացման գործում:

Հզոր ալիքով ծավալված սոցիալիստական մրցությունը խորհրդային ժողովրդն անվանեց Ստալինյան Յերրորդ Հնգամյակի անվան մրցություն: Սրանով նա վոչ միայն ցուցադրեց իր պատրաստակամությունը՝ պայքարելու կոմունիզմի նոր հաղ-

թանակների համար, այլև մի անգամ ևս արտահայտեց իր անսահման սերն ու նվիրվածությունը սոցիալիստական հայրենիքին, բոլշևիկյան կուսակցությանը, առաջնորդ և ուսուցիչ ընկեր Ստալինին:

Մեծ Ստալինի ծննդյան 60-ամյակի օրը ամբողջ խորհրդային ժողովրդի, բանվորների, գյուղացիների, ծառայողների, Կարմիր Բանակի ու Ռազմածովային Նավատորմի մարտիկների, Խորհրդային Միության սահմաններին հսկող փառապանծ սահմանապահների սրտերը լի յեն անհուն շնորհակալության զգացմունքով իմաստուն առաջնորդ և ուսուցիչ, հայր և բարեկամ մեծ Ստալինին այն բանի համար, վոր նա մեր յերկիրը հասցրեց համաշխարհային-պատմական հաղթանակների, նրա դերն ու նշանակությունը միջազգային կյանքում հասցրեց աննախընթաց բարձրության, այն բանի համար, վոր նա իր հայրական հոգատարությամբ ժողովուրդների համար ապահովեց յերջանիկ ու ազատ կյանք:

Այդ օրը յուրաքանչյուր բանվոր, կոլտնտեսական ու ծառայող, յուրաքանչյուր պիոներ և դպրոցական իրենց իմաստուն առաջնորդին և ուսուցչին անկեղծ ցանկություններ են հղում՝ ապրել ու վողջ լինել ե՛լի յերկար ու յերկար տարիներ ի յերջանկություն ու խնդություն համայն աշխարհի աշխատավորության, ի սարսափ ժողովրդի թշնամիների:

Այդ օրն ամբողջ բազմազգ, բազմամիլիոն խորհրդային ժողովուրդն իր հզոր միահամուռությամբ գոչում է.

— Կեցցե՛ մեր սիրելի Ստալինը, կեցցե՛ կոմունիզմը:



Գ. Մ. ՄԱԼԵՆԿՈՎ

# ՍՏԱԼԻՆԸ ԲՈԼՇԵՎԻԿՅԱՆ ԿԱԴՐԵՐԻ ՄԱՍԻՆ

Ապացուցված է, որ բոլշևիկները տիրապետում են հաղթելու արվեստին:

Լենինի և Ստալինի ղեկավարությամբ բոլշևիկյան կուսակցությունը, խորհրդային ժողովուրդը ջախջախեցին սոցիալիզմի բազմաթիվ թշնամիներին: Ահա 22 տարի է արդեն, ինչ Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միությունը վիթխարի գրանիտե ժայռի նման վեր է խոյանում յերկրագնդի մեկ վեցերորդ մասում:

Բոլշևիկյան կուսակցությունն ընկեր Ստալինի՝ Լենինի գործի մեծ շարունակողի գլխավորությամբ հաղթել է և հաղթում է այն պատճառով, որ նա կոմունիզմի համար մղած իր պայքարում առաջնորդվում է գիտական մարքսիստական-լենինյան առաջավոր թեորիայով, ճիշտ քաղաքականություն է վարում, կարողանում է մասսաներին կազմակերպել կենսագործելու այդ քաղաքականությունը:

Ցուրաքանչյուր օբյեկտիվ հետազոտող, ուսումնասիրելով կոմունիստական կուսակցության հաջողությունների պատճառները, ծանոթանալով բոլշևիկյան սպառազինման զինանոցի հետ, անտարակույս պարտավոր կլինի պատշաճը հատուցել Լենինի—Ստալինի կուսակցության կազմակերպական քաղաքականությանը, պայքարի ընթացքում հրամանատարական կադրեր ձևավորելու և ժողովրդական լայն մասսաներից կազմակերպական նորանոր ուժեր քաղելու նրա հմտությանը:

Հաղթելու արվեստի բոլշևիկյան գիտության մեջ պատվավոր տեղ է գրավում կադրերի վերաբերյալ լենինյան-ստալինյան ուսմունքը, բացառապես կարևոր են հանդիսանում լենինյան-ստալինյան այն սկզբունքները, վորոնցով ղեկավարվում է կուսակցությունը կադրերի դասավորման, ընտրության և դաստիարակության գործում կոմունիստական հասարակության կառուցման համար մղած պայքարի բոլոր ետապներում:

Մեր կուսակցության պայքարի պատմական փորձը ցույց է տալիս, թե այդ պայքարում մշտապես ինչպիսի հսկայական դեր է խաղացել բոլշևիկների կողմից կադրերի ընտրությունը, դասավորման և դաստիարակման հարցերի ճիշտ լուծումը, կադրեր, վորոնք ընդունակ լինեն հաջողությամբ իրականացնելու պատմության կողմից կոմունիստական կուսակցության և բանվոր դասակարգի առջև դրված խնդիրները:

Լենինն ու Ստալինն ուսուցանում են, վոր կադրերը վճռական ուժ են, առանց վորի անկարելի յե կազմակերպել շարժումը և ղեկավարել, անկարելի յե իրականացնել կուսակցական և պետական ղեկավարությունը: Լենինը գրում եր, վոր պատմության մեջ վոչ մի դասակարգ տիրապետության չի հասել, յեթե նա չի առանձնացրել իր քաղաքական առաջնորդները, իր առաջավոր ներկայացուցիչները, վորոնք ընդունակ են կազմակերպելու շարժումը և ղեկավարելու: Յերբ մշակված և գործնականում ստուգված քաղաքական ճիշտ գիծ, ասում է ընկ. Ստալինը, կուսակցության կադրերը դառնում են կուսակցական և պետական ղեկավարության վճռական ուժ:

Լենինն ու Ստալինն ուսուցանում են խնամքով վերաբերվել դեպի կադրերը, դեպի մարդիկ: 1935 թ. Կարմիր Բանակի ակադեմիականների ավարտմանն արտասանած իր ճառում ընկեր Ստալինն ասաց.

«Պետք է, վերջապես, հասկանալ, վոր աշխարհում յեղած բոլոր արժեքավոր կապիտալների մեջ ամենաարժեքավորն ու ամենավճռողական կապիտալը մարդիկ են, կադրերը: Պետք է հասկանալ, վոր մեր ներկայիս պայմաններում «կադրերն են վճռում ամեն ինչ»: Յեթե մեզ մոտ լավ ու բազմաթիվ կադրեր լինեն արդյունաբերության մեջ, գյուղատնտեսության մեջ, տրանսպորտում, բանակում,—մեր յերկիրն անպարտելի կլինի: Յեթե չլինեն մեզ մոտ այդպիսի կադրեր, մենք կկաղանք յերկու վոտքով»: Հանրահայտնի յե ընկեր Ստալինի այն ցուցումը, թե մարդկանց պետք է խնամքով և ուշադիր աճեցնել, ինչպես այգեպանն է աճեցնում իր սիրասուն պտղատու ծառը, դաստիարակել, ոգնել աճմանը, հեռանկարներ տալ, ժամանակին առաջ քաշել, ժամանակին փոխադրել ուրիշ աշխատանքի, յեթե մարդը չի կարողանում գլուխ բերել իր գործը, չսպասելով, վոր նա վերջնականապես տապալվի:

Լենինն ու Ստալինը սովորեցնում են, վոր կադրերի հարցը



մշտապես պետք է լուծել հեղափոխության առջև նրա զարգացման զանազան ետապներում դրված խնդիրներին համապատասխան ու ելնելով պատմական կոնկրետ իրադրությունից:

Ընդհատակի տարիներն են: Հեղափոխության արշալույսին ցարիզմի, կապիտալիստների և կալվածատերերի դեմ բանվոր դասակարգի մղած պայքարի ակունքներում գլխավոր խնդիրն եր ստեղծել կուսակցությունն իբրև բանվոր դասակարգի առաջավոր, կազմակերպված գիտակից ջոկատ: Լենինն ու Ստալինն անդադար աշխատանք են կատարում աճեցնելու պրոֆեսիոնալ հեղափոխականների կադրեր, ստեղծելու կուսակցություն և նրա մեջ համախմբելու բանվոր դասակարգի լավագույն մարդկանց, կուսակցություն, վորն ընդունակ է կազմակերպելու բանվորների կապիտալիզմի դեմ հաջող պայքար մղելու համար:

Մեր կուսակցության ստեղծման պատմության մեջ նշանակալից է այն պայքարը, վոր մղեցին Լենինն ու Ստալինը մենշևիկների դեմ այն հարցում, թե ով է հանդիսանում կուսակցության անդամ: Վեճ եր մղվում այն մասին, թե ում կարելի յե համարել Ռուսաստանի Սոցիալ-Դեմոկրատական Բանվորական կուսակցության անդամ: Այս վեճի մեջ յերևան յեկան արմատական տարաձայնություններ մի կողմից Լենինի, Ստալինի, բոլշևիկների և մյուս կողմից՝ մենշևիկների միջև: Լենինն ու Ստալինը պարզ և հստակ պատասխան եյին տալիս այս հարցին, վորի ճիշտ լուծումը, ինչպես պատմությունը ցույց տվեց, ապահովեց բոլշևիկների մարտունակ, հաղթական, կոմունիստական կուսակցության ստեղծումը:

«Большевик» և «Партийное строительство» ժուռնալների հենց նոր լույս տեսած համարներում զետեղված է ընկ. Ստալինի այն հոդվածը, վոր նա գրել է և հրապարակել է 1905 թ. հունվարի 1(14)-ին «Պրոլետարիատիս բրձոլա» լրագրում: Այս հոդվածը մի ցայտուն փաստաթուղթ է, վորը ցույց է տալիս, թե ինչպես եյին Լենինն ու Ստալինը ընդհատակի պայմաններում մոտենում կադրերի հարցին, բանվոր դասակարգը կազմակերպելով պայքար մղելու ցարիզմի, կապիտալիստների ու կալվածատերերի դեմ: Այս հոդվածում ընկ. Ստալինն անողոքաբար մերկացնում է մենշևիկներին, վորոնք պաշտպանում եյին մի ճապաղ հասկացողություն կուսակցության անդամի պարտականությունների մասին և բացատրում կուսակցության անդամի համար կուսակցական կազմակերպություններից վորևե մեկում աշխատելու անհրաժեշտությունը: Ընկեր Ստալինը պաշտպանում է լենինյան

այն դրույթը, թե ով կարող է համարվել կուսակցության անդամ: Ընկեր Ստալինը գրում է.

«Այն ժամանակ, յերբ ինքնակալությունն աշխատում է պրոլետարիատի դասակարգային ինքնագիտակցությունն ապականել «տրեդ-յունիոնիզմով», նացիոնալիզմով, կղերականությամբ և այլն, յերբ, մյուս կողմից՝ լիբերալ ինտելիգենցիան համառորեն աշխատում է սպանել պրոլետարիատի քաղաքական ինքնագործունեությունը և խնամակալություն ձեռք բերել նրա նկատմամբ,—այդ ժամանակ մենք պետք է չափազանց աչալուրջ լինենք և չպետք է մոռանանք, վոր մեր կուսակցությունը մի ամրոց է, վորի դռները բացվում են միմիայն արժանավորների համար...»:

«...Իզուր չեն ասում, վոր մեր կուսակցությունը ղեկավարների կազմակերպություն է, և վոչ թե մենակների հավաքածու: Իսկ յեթե մեր կուսակցությունը ղեկավարների կազմակերպություն է, ապա պարզ է, վոր այդ կուսակցության, այդ կազմակերպության անդամ կարելի յե համարել միայն նրան, ով աշխատում է այդ կազմակերպության մեջ, ով, հետևաբար, իր պարտականությունն է համարում իր ցանկությունները ձուլել կուսակցության ցանկությունների հետ և գործել կուսակցության հետ միասին»: Ընկեր Ստալինն այս հոդվածում ընդգծում է, վոր Լենինի տված՝ կուսակցական կանոնադրության առաջին կետի բնորոշումն ամբողջովին բխում է այն հայացքից, վորի համաձայն մեր կուսակցությունը կենտրոնացված կազմակերպություն է, և վոչ թե մենակների կույտ: «Յեթե հարցնելու լինեք,—գրում է այնուհետև ընկեր Ստալինը,—թե մենք ում պետք է անվանենք Ռուսաստանի Սոցիալ-Դեմոկրատական Բանվորական Կուսակցության անդամ, ապա այդ կուսակցությունը կարող է միայն մի պատասխան տալ. նրան, ով ընդունում է կուսակցության ծրագիրը, նյութապես օգնում է կուսակցությանը և աշխատում կուսակցական կազմակերպություններից վորևե մեկում:

Հենց այս ակներև ճշմարտությունն արտահայտեց ընկեր Լենինն իր հիանալի բնորոշման մեջ»:

Այսպես եյին Լենինն ու Ստալինը մենշևիկների դեմ կռվելիս պաշտպանում և պաշտպանեցին կուսակցությունն իբրև բանվոր դասակարգի քաղաքական կազմակերպություն, վորն իր շարքե-



րում համախմբում է լավագույն, առավել գիտակից, առավել անձնուրաց մարտիկներին հանուն բանվոր դասակարգի գործի:

Քաղաքացիական պատերազմի տարիներն են: Մահացու վտանգ է կախվել աշխարհի առաջին սոցիալիստական պետության գլխին: Լենինն ու Ստալինը հսկայական ուշադրություն են հատկացնում կադրերի ընտրությանը, դասավորմանն ու դաստիարակմանը Խորհրդային Հանրապետության առջև կանգնած պատերազմական խնդիրների համապատասխան: Լենինն ու Ստալինը մեր կուսակցության լավագույն ուժերը, նրա լավագույն կադրերը կենտրոնացնում են քաղաքացիական կռվի ճակատներում:

Լենինի և Ստալինի ղեկավարությամբ ձևավորվում է Կարմիր Բանակը: Կուսակցությունն այս շրջանում կոմունիստների կեսից ավելին ուղարկում է անմիջականորեն Կարմիր Բանակի շարքերը: Ընկեր Ստալինն անձամբ ղեկավարում է հակահեղափոխության ջախջախման կարևորագույն գործողությունները քաղաքացիական պատերազմի բոլոր հիմնական ռազմաճակատներում: Ընկեր Ստալինը հսկայական ուշադրություն է հատկացնում Կարմիր Բանակի հրամանատարական ու քաղաքական կադրերի ձևավորման հարցերին: Նրա ղեկավարությամբ են կոփվում հրամանատարների ու կոմիսարների լավագույն կադրերը:

Կուսակցությունն ու խորհրդային ժողովուրդը ջախջախեցին իրենց թշնամիներին ռազմաճակատներում: Դեռ չեր դադարել թնդանոթների վորոտը—Լենինն ու Ստալինը վերակառուցում են կուսակցության շարքերը, կադրերը դարձնում են դեպի տնտեսական շինարարության ճակատը: Լենինն ու Ստալինն առաջին պլանի վրա յեն մղում այն կադրերի ընտրության և մշակման խնդիրը, վորոնք ընդունակ են ղեկավարելու տնտեսությունը՝ ֆաբրիկաները, գործարանները, հանքահորերը, առևտուրը: «Այժմ,—ասում է ընկ. Ստալինը,—քաղաքացիական պատերազմի ճակատներից մենք անցել ենք ինդուստրիայի ճակատը: Սրա համապատասխան այժմ մեզ պետք են ինդուստրիայի նոր հրամանատար մարդիկ, ֆաբրիկաների ու գործարանների լավ դիրեկտորներ, տրեստների լավ աշխատողներ, գործունյա առևտրականներ, սինդիկատների գործունյա աշխատողներ, արդյունաբերական շինարարության խելամիտ պլանավորողներ: Այժմ մենք պետք է կոփենք նոր գնդի հրամանատարներ ու բրիգադի հրամանատարներ, դիվիզիայի պետեր և կորպուսի հրամանատարներ

տնտեսության ասպարեզում, արդյունաբերության ասպարեզում: Առանց այսպիսի մարդկանց մենք վոչ մի քայլ չենք կարող առաջ շարժվել»:

Առաջնորդվելով Լենինի և Ստալինի ցուցումներով, կուսակցությունն իր ուշադրության կենտրոնը դարձրեց տնտեսական կադրերի հարցը, տասնյակ-հազարավոր աշխատողներ առաջադրեց տնտեսական շինարարության ճակատում և ստեղծեց տնտեսավարների կադրեր, վորոնք ապահովեցին պատերազմից քայքայված ժողովրդական տնտեսության վերականգնման պլանի իրականացումը:

Ամրանում է տնտեսությունը, աճում է սոցիալիզմի նյութական բազան: Թշնամիները կատաղի դիմադրություն են ցույց տալիս յերկրի ինդուստրացման խնդրի իրագործմանը: Հայտաբերվում է վնասարարություն արդյունաբերության մեջ: Ընկեր Ստալինն ամբողջ սրությամբ առաջադրում է տեխնիկային տիրապետելու լոզունգը: Ընկ. Ստալինն ասում է. «Բոլշևիկները պետք է տիրապետեն տեխնիկային: Ժամանակն է, վոր բոլշևիկներն իրենք դառնան մասնագետներ: Տեխնիկան է վերակառուցման շրջանում վճռում ամեն ինչ: Յեվ այն տնտեսավարը, վորը չի ցանկանում ուսումնասիրել տեխնիկան, վորը չի ցանկանում տիրապետել տեխնիկային,—նա անեկդոտ է, և վոչ թե տնտեսավար»:

Սոցիալիզմն ընթանում է սարն ի վեր: Ավելի բարձր ու հոյակապ է դառնում սոցիալիզմի շենքը: Ավելի ու ավելի խոր խնդիրներ է առաջադրում ընկեր Ստալինը կադրերի բնագավառում: Ընկեր Ստալինն ասում է. «Մեր յերկիրը թևակոխել է զարգացման այնպիսի փուլ, յերբ բանվոր դասակարգը պետք է իր համար ստեղծի իր սեփական արտադրական-տեխնիկական ինտելիգենցիան՝ ընդունակ պաշտպանելու նրա շահերն արտադրության մեջ, իբրև գերիշխող դասակարգի շահեր»:

Ընկեր Ստալինը կոչ է անում յերիտասարդությանը տիրապետելու գիտությանը, սովորելու, սովորելու ամենահամառ կերպով և կոփելու բոլշևիկյան նոր կադրեր՝ գիտության բոլոր ճյուղերի մասնագետներ:

Նշելով արտադրական-տեխնիկական ինտելիգենցիայի ստեղծման ուղիները, ընկեր Ստալինը, բարձրագույն կրթության զարգացման հետ միասին, առաջադրում է բանվոր դասակարգի կուլտուրական ուժերը դաստիարակելու, աճեցնելու և ֆաբրիկաների



ու գործարանների պրակտիկ աշխատողների հրամանատարական պաշտոններում նրանց առաջ քաշելու անհրաժեշտության խնդիրը: «Բանվոր դասակարգի արտադրական-տեխնիկական ինտելիգենցիան,—ասում եր ընկեր Ստալինը,—ձևավորվելու յե վոչ միայն բարձրագույն դպրոցն անցած մարդկանցից, այլ և նա համալրվելու յե մեր ձեռնարկությունների պրակտիկ աշխատողներից, վորակյալ բանվորներից, բանվոր դասակարգի կուլտուրական ուժերից գործարանում, ֆաբրիկայում, հանքահորում: Մրցության կազմակերպիչներ, հարվածային բրիգադների ղեկավարներ, աշխատանքային վերելքի գործնական վոգեշնչողներ, աշխատանքի կազմակերպիչներ շինարարության այս կամ այն մասում—ահա բանվոր դասակարգի նոր միջնախավը, վորը և պետք է բարձրագույն դպրոցն անցած ընկերների հետ միասին կազմի բանվոր դասակարգի ինտելիգենցիայի միջուկը, մեր արդյունաբերության հրամանատարական կազմի միջուկը»:

Ընկեր Ստալինի ղեկավարությամբ կուսակցության կատարած հսկայական աշխատանքի հետևանքով ԽՍՀՄ բանվոր դասակարգն ստեղծեց իր սեփական արտադրական-տեխնիկական ինտելիգենցիան:

Աճեց բարձրագույն և միջնակարգ տեխնիկական ուսումնական հիմնարկների ցանցը: Հսկայական չափերով մեծացավ ուսումնական հիմնարկներն ավարտող մասնագետների քանակը:

Ցուցանշական են հետևյալ տվյալները.

1915 թվականին Ռուսաստանում կար 91 բարձրագույն ուսումնական հաստատություն, վորտեղ սովորում եր 112 հազ. մարդ, և 295 միջնակարգ դպրոց մասնագետների պատրաստման գծով, վորտեղ սովորում եյին 35 հազար աշակերտ: 1928 թվին ԽՍՀՄ-ում կար 129 բարձրագույն ուսումնական հաստատություն, վորտեղ սովորում եյին 167 հազ. հոգի, 1051 միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություն 206 հազ. սովորողներով: Ներկայումս ԽՍՀՄ-ում մենք ունենք 708 բարձրագույն ուսումնական հաստատություն, վորտեղ սովորում են 602 հազ. ուսանող և 3·732 միջնակարգ դպրոց մասնագետներ պատրաստելու գծով, վորտեղ սովորում են 951 հազ. մարդ:

Ստալինյան առաջին յերկու հնգամյակներում բարձրագույն ուսումնական հաստատություններն ավարտել են 522 հազ. յերիտասարդ մասնագետներ, վորոնցից առաջին հնգամյակի ընթացքում՝ 199 հազ. հոգի և յերկրորդի ընթացքում՝ 323 հազ. հոգի:

Միջնակարգ մասնագիտական դպրոցներից յերկու հնգամյակի ընթացքում ավարտել են 931 հազ. յերիտասարդ մասնագետ, այս թվում առաջին հնգամյակում՝ 320 հազ. և յերկրորդում՝ 611 հազ. հոգի:

Ժողովրդական տնտեսության զարգացման յերրորդ հնգամյա պլանի նախագծով յերրորդ հնգամյակի տարիներին բարձրագույն ուսումնական հաստատություններից պետք է ավարտեն 600 հազար յերիտասարդ մասնագետներ և նույն ժամանակամիջոցում բարձրագույն ուսումնական հաստատությունները պետք է ընդունվեն 743 հազ. հոգի: Յերրորդ հնգամյակի ընթացքում տեխնիկումներն ավարտած յերիտասարդ մասնագետների թիվը կհասնի 1·420 հազարի և այդ ժամանակամիջոցում տեխնիկումները կընդունվեն 1·953 հազ. հոգի:

Սոցիալիզմը հաղթում է բոլոր ճակատներում: Թշնամիները մոլեգնում են և աշխատում են խափանել սոցիալիստական շինարարության հաջողությունները: Յերևան են հանվում ժողովրդի թշնամիների քայքայիչ, պրովոկացիոն, վնասարարական աշխատանքի նողկալի մեթոդները:

Ընկեր Ստալինն ամբողջ սրությամբ առաջադրում է նոր լոզունգ կադրերի վերաբերմամբ: Ընկեր Ստալինը չեշտակի կերպով դնում է բոլշևիզմին տիրապետելու հարցը: Անհրաժեշտ է, ասում է ընկ. Ստալինը, տեխնիկայի տիրապետման հին լոզունգը, վոր համապատասխանում էր Շախտիի ժամանակաշրջանին, լրացնել նոր լոզունգով՝ կադրերի քաղաքական դաստիարակության, բոլշևիզմին տիրապետելու և մեր քաղաքական դյուրահավատության վերացման մասին, մի լոզունգով, վորը լիովին համապատասխանի ներկայիս մեր ապրած շրջանին:

Ընկեր Ստալինը վճռական նշանակություն է տալիս մեր կադրերի իդեոլոգիական պատրաստության խնդրին: «Յես կարծում եմ,—ասում է ընկ. Ստալինը,—վոր յեթե մենք կարողանայինք, յեթե մենք ընդունակ լինեյինք մեր կուսակցական կադրերը ներքևից մինչև վերև իդեոլոգիապես պատրաստել և քաղաքականապես կոփել այնպես, վոր նրանք կարողանային ազատորեն կողմնորոշվել ներքին ու միջազգային իրադրության մեջ, յեթե մենք կարողանայինք նրանց դարձնել միանգամայն հասուն լենինյաններ, մարքսիստներ՝ ընդունակ առանց լուրջ սխալների լուծելու յերկրի ղեկավարման հարցերը, ապա դրանով մենք լուծած կլինեյինք մեր բոլոր խնդիրների ինը տասերորդը»:



Հետևելով ընկեր Ստալինի ցուցումներին, և նրա անմիջական ղեկավարությամբ կուսակցությունը մեծ աշխատանք է կատարել և կատարում է բոլշևիզմին տիրապետելու լոզունգն իրականացնելու գործում: Կուսակցական կազմակերպություններն ուժեղացնում են կոմունիստներին զգոնությունը բարձրացնելու վոգով դաստիարակելու աշխատանքը: Կուսակցության անդամներն ավելի ակտիվորեն են ձեռնարկել թեորիայի ուսումնասիրությանը, Մարքսի, Ենգելսի, Լենինի, Ստալինի աշխատությունների ուսումնասիրությանը: Կադրերի իդեոլոգիական դաստիարակության գործում հսկայական նշանակություն ունի «ՀամԿ(բ)Կ պատմության համառոտ դասընթացը», վոր գրված է ընկեր Ստալինի անմիջական մասնակցությամբ: Կուսակցությունը բավականաչափ հաջողություններ է ձեռք բերել պրոպագանդիստական աշխատանքի ձևերն ու մեթոդները վերակառուցելու գործում, վորից դուրս է մղվում մինչ այդ թագավորող տնայնագործությունն ու կաղյոնչչինան: Կասկած չկա, վոր բոլշևիկները, կուսակցական կադրերը կկատարեն ընկեր Ստալինի ցուցումները բոլշևիզմին տիրապետելու մասին:

Կուսակցության վերաբերյալ Լենինի ու Ստալինի ուսմունքի անկյունաքարերից մեկն է հանդիսանում կուսակցության կապի հարցը մասսաների հետ: Լենինն ու Ստալինը սովորեցնում են, վոր կուսակցությունը, բոլշևիկյան կադրերն ուժեղ են մասսաների հետ ունեցած իրենց անխզելի կապով: Բոլշևիկյան ղեկավարության ուժի աղբյուրների մասին անմոռանալիորեն ասաց ընկեր Ստալինը ՀամԿ(բ)Կ Կենտկոմի 1937 թ. պլենումում.

«Կապ մասսաների հետ, այդ կապի ամրապնդումը, մասսաների ձայնին ունկնդրելու պատրաստակամություն—ահա թե ինչի մեջ է բոլշևիկյան ղեկավարության ուժն ու անպարտելիությունը:

Կարելի յե վորպես կանոն ընդունել, վոր քանի բոլշևիկները կապ են պահպանում ժողովրդի լայն մասսաների հետ, նրանք անպարտելի կլինեն: Յեվ, ընդհակառակը, բավական է միայն, վոր բոլշևիկները կտրվեն մասսաներից և կորցնեն նրանց հետ ունեցած կապը, բավական է միայն, վոր նրանք ծածկվեն բյուրոկրատական ժանգով, վորպեսզի նրանք զրկվեն ամեն ուժից և դատարկ բանի վերածվեն:

Հին հույներն իրենց առասպելաբանության սիստեմում ունեին մի հռչակավոր հերոս—Անթեյը, վորն, ինչպես ասում է ա-

ռասպելաբանությունը, չեղել է ծովերի աստված Պոսեյդոնի և հողի աստվածուհի Գեյայի որդին: Նա իրեն հատկապես կապված էր զգում իր մոր հետ, որը ծնել էր նրան, կերակրել և դաստիարակել: Չկար այնպիսի հերոս, որին նա, այդ Անթեյը չհաղթեր: Նա համարվում էր անպարտելի հերոս: Ինչո՞ւմն էր նրա ուժը: Այդ ուժն այն բանի մեջ էր, որ ամեն անգամ, յերբ հակառակորդի դեմ մղած պայքարում նա նեղն էր ընկնում, նա շփվում էր գետնին, իր մորը, որը ծնել ու կերակրել էր նրան, և նոր ուժ էր ստանում: Բայց նա, այնուամենայնիվ, ուներ իր թույլ տեղը—այդ որևէ կերպ հողից կտրվելու վտանգն էր: Թշնամիները հաշվի էին առնում նրա այդ թուլությունը և դարանակալում էին նրան: Յեվ ահա, գտնվեց մի թշնամի, որն օգտագործեց նրա այդ թուլությունը և հաղթեց նրան: Դա Հերկուլեսն էր: Բայց Հերկուլեսն ի՞նչպես հաղթեց նրան: Նա Անթեյին կտրեց գետնից, բարձրացրեց օդի մեջ, խլեց նրանից հողին շփվելու հնարավորությունը և այդպիսով օդի մեջ խեղդեց նրան:

Յես կարծում եմ, որ բոլշևիկները մեզ հիշեցնում են հունական առասպելաբանության հերոս Անթեյին: Նրանք նույնպես, ինչպես և Անթեյը, ուժեղ են նրանով, որ կապ են պահպանում իրենց մոր հետ, մասսաների հետ, որոնք ծնել, սնել և դաստիարակել են նրանց: Յեվ քանի նրանք կապ են պահպանում իրենց մոր հետ, ժողովրդի հետ, նրանք բոլոր յերաշխիքներն ունեն՝ անպարտելի մնալու համար:

Սրա մեջ է բոլշևիկյան ղեկավարության անպարտելիության բանալին»:

Լենինն ու Ստալինը մշտապես մեր կադրերին հավատ էին ներշնչում բանվոր դասակարգի ուժերի նկատմամբ, մասսաների ուժերի նկատմամբ, որոնք հաղթականորեն առաջ են գնում կոմունիստական կուսակցության մարտական ղեկավարությամբ:

Հայտնի յե, որ մենշևիկները, օպորտունիստները, բանվոր դասակարգի շահերի դավաճանները ձգտում էին մարել բանվոր դասակարգի հավատը դեպի իր ուժերը, նրանք պնդում էին, որ նախ պետք է կադրեր մշակել կապիտալիզմի պայմաններում և ապա արդեն վերցնել իշխանությունը: Լենինն ու Ստալինը շուռ տվին օպորտունիստների այս թեորիական դոգման: Բոլշևիկների կուսակցությունն օգտագործեց պատմական սիտուացիան և Լենինի ու Ստալինի ղեկավարությամբ բանվոր դասակարգին տարավ գրոհելու կապիտալիզմը, իշխանությունը վերցրեց իր ձեռքը և դրանով իսկ բարենպաստ պայմաններ ստեղծեց աշխատավորական մասսաների կուլտուրական մակարդակը բարձրացնելու համար, խորհրդային ղեկավարների ու ադմինիստրատորների մեծաքանակ կադրեր պատրաստելու համար:



Լենինն ու Ստալինը մշտապես կարևորագույն ուշադրություն էին դարձնում նոր ուժեր առաջ քաշելու, յերիտասարդ կադրեր առաջ քաշելու վրա:

Ահավասիկ ինչ էր ասում այս մասին Լենինը.

«Հարկավոր են յերիտասարդ ուժեր: Յես խորհուրդ կտայի ուղղակի տեղնուտեղը գնդակահարել նրանց, ովքեր թույլ են տալիս իրենց ասելու, թե մարդիկ չկան: Ռուսաստանում անսահման թվով մարդիկ կան, հարկավոր է միայն լայնորեն ու համարձակ, համարձակ ու լայնորեն, նորից լայնորեն ու նորից համարձակ հավաքագրել յերիտասարդությանը, չվախենալով նրանից»:

«Փորձված կուսակցական աշխատողների հմտությունը կենտրոնում ու տեղերում պետք է արտահայտվի նրանում, որ ուժգնորեն օգտագործեն նոր, թարմ կուսակցական ուժերը»:

Ավելի ևս զարգացնելով Լենինի մտքերը՝ կադրերն ի հաշիվ յերիտասարդ ուժերի սիստեմատիկաբար ընդլայնելու նշանակության մասին, ընկեր Ստալինը ՀամԿ(բ)Կ XIII համագումարում տված զեկուցման մեջ ասում էր.

«Ոչ մի դեպքում չպետք է կուսակցության կադրերը դիտել իբրև մի ինչ-որ ինքնամփոփ բան: Կադրերը քայլ առ քայլ պետք է ընդարձակվեն կուսակցական յերիտասարդության հաշվին: Կուսակցական յերիտասարդությունը պետք է լրացնի կադրերը: Առանց այս բանի կադրերի գոյությունն աննպատակ է»:

Միմիայն XVII կուսակցական համագումարից մինչև XVIII համագումարը կուսակցությունը կարողացավ պետական և կուսակցական գծով ղեկավար պոստերում առաջ քաշել ավելի, քան 500 հազար կուսակցական և կուսակցությանը հարող յերիտասարդ բոլշևիկներ, որոնցից 20%-ից ավելին՝ կին: Կուսակցության համագումարի որոշման հիման վրա այժմ տեղի յե ունենում նոր կադրերի հետագա հաջող առաջքաշում:

Կուսակցության XVIII համագումարում տված զեկուցման մեջ ընկ. Ստալինը փայլուն կերպով շարադրեց կադրերի բոլշևիկյան ընտրության, դասավորման, դաստիարակության սկզբունքները, օրենքները: Ընկ. Ստալինն ասաց.

«Կադրերը ճիշտ ընտրել—այդ նշանակում է՝

Նախ՝ կադրերը գնահատել վորպես կուսակցության և պետության վոսկե ֆոնդը, թանկ գնահատել նրանց, հարգանք տածել դեպի նրանց:

Երկրորդ՝ ճանաչել կադրերը, ուշադիր կերպով ուսումնասիրել յուրաքանչյուր կադրային աշխատողի արժանիքներն ու թերությունները, գիտենալ, թե ինչ պոստում ամենից հեշտ կարող են ծավալվել աշխատողի ընդունակությունները:

Երրորդ՝ հոգատար կերպով աճեցնել կադրերը, յուրաքանչյուր աճող աշխատողի օգնել վեր բարձրանալու, ժամանակ չխնայել այդպիսի աշխատողների հետ համբերատար կերպով «զբաղվելու» համար և արագացնելու նրանց աճումը:

Չորրորդ՝ ժամանակին և համարձակ կերպով առաջ քաշել նոր, յերիտասարդ կադրերին, թույլ չտալով, վոր նրանք յերկար մնան հին տեղում, թույլ չտալով, վոր նրանք թթվեն:

Հինգերորդ՝ աշխատողներին ըստ պոստերի դասավորել այնպես, վորպեսզի յուրաքանչյուր աշխատող իրեն իր տեղում զգա, վորպեսզի յուրաքանչյուր աշխատող կարողանա մեր ընդհանուր գործին տալ այն առավելագույնը, ինչ նա ընդհանրապես ընդունակ է տալու իր անձնական հատկություններով, վորպեսզի կադրերի դասավորման աշխատանքի ընդհանուր ուղղությունը լիովին համապատասխանի այն քաղաքական գծի պահանջներին, վորի կենսագործման համար կատարվում է այդ դասավորումը»:

Այնուհետև ընկ. Ստալինն այդ նույն զեկուցման մեջ ասաց, վոր մարդիկ ընտրելիս խնդիրն այն չե, վոր կողմնորոշվենք կամ հին կամ նոր կադրերի հանդեպ, այլ այն, վորպեսզի կուրս վերցնենք դեպի հին և յերիտասարդ կադրերի զուգորդումը, միացումը կուսակցության ու պետության ղեկավար աշխատանքի մի ընդհանուր օրկեստրի մեջ:

Կոմունիզմի գործի համար մղված մարտերում մեր կուսակցության շարքերում դաստիարակվել ու աճել են մեծաքանակ բոլշևիկյան կադրեր: Ընկեր Ստալինը սովորեցնում է մեր կադրերին.

անսահմանորեն նվիրված լինել կոմունիզմի գործին, սիրել իր հայրենիքը, սիրել իր ժողովուրդը, մշտապես հիշել իր պատասխանատվությունը ժողովրդի առջև.

սովորել մասսաներից, ունկնդրել մասսաների ձայնին, կարողանալ ղեկավարի փորձը միացնել մասսաների փորձին.

տեղի չտալ դժվարությունների առջև, կարողանալ պայքա-



րել դժվարությունների դեմ և հաղթահարել դրանք: «Միայն այն կադրերն են լավ,—ասում է ընկ. Ստալինը,—վորոնք չեն վախենում դժվարություններից, վորոնք չեն թաքնվում դժվարություններից, այլ ընդհակառակը, ընդառաջում են դժվարություններին, վորպեսզի հաղթահարեն և վերացնեն դրանք: Միայն դժվարությունների դեմ մղվող պայքարի մեջ են կոփվում իսկական կադրերը».

չմեծամտանալ, չամբարտավանանալ, չինքնահանգստանալ հաջողություններից.

կարողանալ ազնվորեն ընդունել և ուղղել սխալները, հիշել, վոր սխալների բարեխիղճ հայտաբերումը, այդ սխալներն առաջացնող պատճառների ուսումնասիրումն ու այդ սխալները շտկելու համար անհրաժեշտ ուղիների նշումն ամենաշիտակ միջոցներից մեկն է կուսակցական կադրերին ճիշտ սովորեցնելու և դաստիարակելու համար.

կարողանալ իրադարձությունները, փաստերը տեսնել նրանց զարգացման, նրանց կապի մեջ, կարողանալ նախատեսել իրադարձությունների ընթացքը, հետաքրքրվել մեր առաջխաղացման հեռանկարով, գործամոլ—մանրախնդիրներ չդառնալ.

աշխատողներին ստուգել վոչ թե ըստ նրանց խոստումների ու դեկլարացիաների, այլ ըստ նրանց աշխատանքի արդյունքների:

Ընկեր Ստալինի այս բոլոր պարզ, սպառիչ ցուցումները կադրերի ճիշտ ընտրության, առաջքաշման, դասավորման, դաստիարակության գործի դերի ու նշանակության մասին հսկայական բարձրության հասցրին բոլշևիզմի կազմակերպական գիտությունն ու կուսակցության կազմակերպական աշխատանքը:

Իր կազմակերպական ճիշտ քաղաքականության հետևանքով է, վոր մեր կուսակցությունը «հասավ այն չտեսնված ճկունության, վորի շնորհիվ նա ի վիճակի յե ուզած մոմենտին վերակառուցելու իր շարքերը և իր հարյուր—հազարավոր անդամներին կենտրոնացնելու ուզած մեծ աշխատանքի վրա՝ խառնաշփոթություն չմտցնելով իր շարքերը» (Ստալին):

Այժմ, յերբ կուսակցության առջև կանգնած են զարգացման նոր շրջանի առաջադրած հսկայական խնդիրները—սոցիալիստական հասարակության կառուցման ավարտումն ու աստիճանական անցումը սոցիալիզմից կոմունիզմին—կադրերի ընտրության, առաջքաշման ու պատրաստման գործը հատկապես կարևոր նշանակություն է ձեռք բերում: Այս եր մատնանշում ընկեր Ստալինը

կուսակցության XVIII համագումարում տված իր զեկուցման մեջ:

Բոլոր կուսակցական կազմակերպությունների կարևորագույն գործն է՝ մինչև վերջը կատարել ընկեր Ստալինի ցուցումները, կադրերի ընտրության գործը հասցնել պատշաճ, գիտական, բոլշևիկյան բարձրության, առավելագույն հոգս տածել լենինյան-ստալինյան տիպի բոլշևիկյան կադրերի աճեցման նկատմամբ:



Գ. Մ. ԴԻՄԻՏՐՈՎ

# ՍՏԱԼԻՆԸ ՅԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԸ

# I

Սոցիալիզմի անծայրածիր յերկրի ժողովուրդների հետ միասին կապիտալիստական աշխարհի բոլոր անկյուններում միլիոնավոր մարդիկ հուզիչ բերկրանքի, խորունկ հարգանքի ու անսահման սիրո զգացմունքով նշում են ընկեր Ստալինի վաթսունամյակի օրը:

Կապիտալիստական յերկրների միլիոնավոր բանվորներ և աշխատավորներ ի դեմս Ստալինի տեսնում են իրենց մերձավոր բարեկամին, իմաստուն ուսուցչին ու մեծ առաջնորդին: Չկա մի մարդ, վորը վայելեր այդպիսի անխախտ վստահություն ու հեղինակություն բանվորական շարժման շարքերում, բոլոր յերկրների աշխատավորների շարքերում, ինչպես մեր Ստալինը՝ Մարքսի—Ենգելսի—Լենինի գործի հանճարեղ շարունակողը:

Ընկեր Ստալինի ամեն մի յելույթ ագահորեն լսում և ուսումնասիրում են միլիոնավոր ու միլիոնավոր մարդիկ, վորոնք վոգեշնչվում են նրա խոսքերով հանուն հերոսական սխրագործությունների և նոր վստահություն քաղում, վոր սոցիալիզմը կհաղթանակի ամբողջ աշխարհում:

Ինչո՞վ է բացատրվում Ստալինի ազդեցության անսահման ուժը: Ինչո՞ւ յեն աշխատավորներն այնպես հարգում և այնպես սիրում նրան: Վորովհետև նրանք գիտեն, վոր Ստալինն այլ շահ չունի, քան կեղեքված ու տառապող մարդկության պաշտպանությունը, ուրիշ կյանք չունի, քան աշխատավորների բարիքին նվիրված նրա կյանքը: Վորովհետև նրանք գիտեն, վոր Ստալինը, նրա ամբողջ թեորետիկ ու պրակտիկ գործունեությունը, նրա ամբողջ կյանքն անբաժան են սոցիալիզմից· գիտեն, վոր նրա առաջնորդությամբ խորհրդային ժողովուրդը կառուցեց սոցիալիստական հասարակություն, մարդկության լավագույն մտքերի դարավոր յերազները դարձրեց այսօրվա հրաշագեղ իրականություն: Վորովհետև ի դեմս Խորհրդային Միության նրանք տես-

նում են հզոր հենարան իրենց ազատագրական պայքարի համար, իսկ ի դեմս Ստալինի՝ հաղթանակած սոցիալիզմի յերկրի—համայն աշխարհի աշխատավորության հայրենիքի—իմաստուն առաջնորդին: Վորովհետև նրանք գիտեն, վոր Ստալինը և խորհրդային ժողովուրդը միասնական միտք ունեն և միասնական կամք, վորոնք ի սպաս են դրված բոլոր կեղեքվածների, շահագործվողների և թշվառների շահերին:

Ստալինի ազդեցության ուժը նրա մեծ ուսմունքն է՝ ստուգված միլիոնների փորձով, նրա իրավացիությունը՝ հաստատված անմահ գործերով: Բուրժուական գիտնականները տասնամյակներ շարունակ պնդում եյին, թե սոցիալիզմը ուտոպիա յե: Ստալինը միլիոնավոր մարդկանց ցույց տվեց կյանքի մեջ մարմնավորված սոցիալիզմը: Բուրժուազիայի իդեոլոգները տասնամյակներ շարունակ պնդում եյին, թե գյուղացին «հակակոլեկտիվիստական դանդ» ունի, թե նա յերբեք չի հաշտվի սոցիալիզմի հետ: Ստալինն ապացուցեց, վոր բանվոր դասակարգի ձեռքով պետականորեն ղեկավարվող գյուղացիությունն ընդմիշտ կամրանա սոցիալիստական ափին: Սոցիալ-դեմոկրատական խաբեբաները պնդում եյին, թե սոցիալիզմին կարելի յե հասնել բուրժուական դեմոկրատիայի միջոցով: Ստալինն ապացուցեց, վոր ժողովուրդները սոցիալիզմին հասնում են պրոլետարական դիկտատուրայի միջոցով, իսկ բուրժուական դեմոկրատիան ճանապարհ է բացում կապիտալիստական ռեակցիային և հրահրում իմպերիալիստական պատերազմներ:

Ժողովրդական մասսաներն այժմ տեսնում են, վոր մինչդեռ կապիտալիզմը նրանց դատապարտում է աղքատության, սովի, գործազրկության և շպրտում կործանարար պատերազմների արյունոտ անդունդը, Խորհրդային Միությունը, Ստալինի ղեկավարությամբ, վոչ միայն իր 183-միլիոնանոց ժողովուրդը պահպանում է իմպերիալիստական պատերազմի մեջ ներքաշելուց, այլև հզոր պատվար է ստեղծում այդ պատերազմը համաշխարհային սպանդի վերածելու դեմ:

Համայն աշխարհում աշխատանքի միլիոնավոր մարդիկ ի դեմս Ստալինի, նրա ուսմունքի ու ղեկավարության, տեսնում են բոլշևիկների կուսակցության և մարքսիզմ-լենինիզմի հեղափոխական թեորիայի ամենահաղթ ուժի մարմնացումը, բանվոր դասակարգի ամենահաղթ ուժի մարմնացումը: Այստեղից է այն



խորասույզ գաղափարական համոզվածությունը, վոր շարժման մեջ է դնում հեղափոխական մարտիկների բանակները կապիտալիզմի յերկրում և վորի առաջխաղացումը չի կարող կասեցնել վոչ մի խոչընդոտ:

## II

Կապիտալիստական յերկրների բանվոր դասակարգը սովորում է ու պիտի սովորի Ստալինից բոլշևիկյան այն արվեստը, թե ինչպես պետք է կռվել դասակարգային թշնամուն հաղթելու համար: Սոցիալիզմի համար մղված հաղթական կռվի հսկայական փորձով ստուգված ու հաստատված նրա ուսմունքը հանդիսանում է ամբողջ միջազգային պրոլետարիատի գաղափարական զինման անսպառ աղբյուրը:

Առաջավոր պրոլետարները Ստալինից ամենից առաջ սովորում են ըմբռնել հեղափոխական թեորիայի բացառիկ դերը բանվոր դասակարգի ազատագրական պայքարի համար:

«Առանց հեղափոխական թեորիայի չի կարող լինել և հեղափոխական շարժում»—Լենինի այս հռչակավոր դրույթն ընկեր Ստալինը կիրառում է անշեղ հետևողականությամբ իր վողջ հեղափոխական գործունեյության ընթացքում:

Ընկեր Ստալինը տասնամյակների ընթացքում զարգացնում, լրացնում ու հարստացնում է մարքսիստական-լենինյան ուսմունքը: Ընկեր Ստալինի այս ամբողջ վիթխարի աշխատանքը ստեղծագործական մարքսիզմի մարմնացումն է: Նա անհաշտ թշնամի յե ամեն մի դոգմատիզմի: Նա չի հանդուրժում պատրաստի շաբլոնների ու քարացած սխեմաների կիրառումը պրոլետարիատի դասակարգային կռվի կոնկրետ պրոբլեմների նկատմամբ:

Տալով բոլշևիկյան սկզբունքայնության և մեծագույն ճկունության զուգորդման փայլուն նմուշներ, վարպետորեն գործադրելով մարքսիստական դիալեկտիկան, ընկեր Ստալինն անդադրում նախազգուշացնում է վորոշ յերկրների փորձը տարբեր պայմաններում գտնվող ուրիշ յերկրների բանվորական շարժման վրա մեխանիկորեն փոխադրելուց: Նա պահանջում է համակողմանի անալիզի յենթարկել պատմական յուրաքանչյուր կոնկրետ սիտուացիա, անալիզի յենթարկել դասակարգային ուժերի դասավորումը, հաշվի առնել յուրաքանչյուր յերկրի ազգային-առանձնահատուկ ու սպեցիֆիկ կողմերը: Նա ուսուցանում է կոմունիստներին իրենց ստրատեգիան և տակտիկան կառուցել

կենդանի իրականության վրա, թեորիայի մեջ տեսնել վոչ թե վերացական դոգմաների կոլեկցիա, այլ գործողության ուղեցույց:

Առաջ մղելով մարքսիստական-լենինյան թեորիան, ընկեր Ստալինը միաժամանակ վարում եր և վարում է ամենաանհաշտ պայքար ընդդեմ լենինիզմն ոպորտունիստորեն աղավաղելու և աղճատելու բոլոր փորձերի:

Քաղաքականության մեջ դավաճանությունը սովորաբար սկսվում եր թեորիայի ռևիզիայով: Այսպես եյին ոպորտունիստները Յերկրորդ Ինտերնացիոնալում: Այսպես եյին մենշևիկները: Այսպես եյին տրոցկիստները, բուխարինականները, զինովյևականները և կուսակցության ու բանվոր դասակարգի այլ թշնամիները: Հեղափոխական թեորիայի մաքրության համար պայքարելը, անհաշտությունը նրա գռեհկացման ու աղավաղման հանդեպ՝ անբաժանելի յեն բոլշևիզմից: Բոլշևիզմի առաջնորդներ ու թեորետիկներ Լենինն ու Ստալինը վճռական նշանակություն եյին տալիս այս պայքարին և այն մղում եյին անդադար:

Իր ամբողջ գործունեյությամբ ընկեր Ստալինը չգերազանցված նմուշ տվեց այն բանի, թե ինչպես պետք է պաշտպանել մարքսիզմ-լենինիզմը: Նման այն բանին, ինչպես Լենինը բազմամյա պայքարում պաշտպանեց մարքսիզմն ընդդեմ ռևիզիոնիզմի մի ամբողջ կույտ «թեորետիկների», թույլ չտվեց նրանց մարքսիզմից դուրս հանելու նրա հեղափոխական եյությունը և ներքինացնելու այն, ընկեր Ստալինը պաշտպանեց մարքսիզմ-լենինիզմն ընդդեմ թշնամական գործակալության ստոր փորձերի՝ աղճատելու այդ ուսմունքը և դրանով իսկ ուժասպառ անելու պրոլետարիատը:

Ընկեր Ստալինի անդադրում հոգատարությունը բանվոր դասակարգի առաջավոր թեորիայի մաքրության վերաբերյալ և այդ թեորիայի մշակումն ընկեր Ստալինի կողմից առանձնահատուկ նշանակություն ունի ժամանակակից պայմաններում: Այս թեորիայի դեմ են զինվում այժմ բանվոր դասակարգի թշնամիները կապիտալիստական բոլոր յերկրներում: Այնտեղ իմպերիալիստական պատերազմի և համաշխարհային ռեակցիայի սկսվելու կապակցությամբ կատաղի կամպանիա յե ծավալված ընդդեմ հեղափոխական մարքսիզմի, ընդդեմ կոմունիզմի: Թշնամիները մահացու կերպով ատում են մարքսիստական-լենինյան թեորիան, վորովհետև նրանք տեսնում են, վոր նա տիրապետում է մասսաներին և նյութական ուժ է դառնում, վորովհետև այս թեորիան աշխատավորներին ցույց է տալիս պայքարի ուղիղ ճանապարհ ընդդեմ իմպերիալիստական պատերազմի, բուրժուական ռեակցիայի և կապիտալիստական ստրկության:



Բուրժուազիան ամեն ինչ գործի յե դրել՝ նպատակ ունենալով գաղափարապես զինաթափել բանվոր դասակարգին: Յեկեղեցին խաչակրաց արշավանք է հայտարարում մարքսիզմի դեմ, նրա հետ միասին գնում են բուրժուազիայի գիտական լակեյները. նրանց ասածն են կրկնում իմպերիալիզմի՝ Յերկրորդ Ինտերնացիոնալից յեկած գործակալները. մարքսիզմի դեմ աղմկալի անշնորհք կամպանիա յեն մղում հատկապես ստեղծված պրոպագանդայի մինիստրությունները. ռեակցիայի լկտի հարվածային ջոկատները տակնուվրա յեն անում և այրում են Լենինի ու Ստալինի յերկերը:

Բայց ապարդյուն են բուրժուազիայի բոլոր ջանքերը, վորն իր հակամարքսիստական արշավի մեջ նուրբ խաբեյությունը զուգակցում է վոստիկանական կոպիտ հաշվեհարդարին, հրապուրանքներն՝ սպառնալիքներին, կաշառքը՝ դաշտային դատարաններին: Նրանք ապարդյուն են, վորովհետև առաջավոր բանվորներն ընկեր Ստալինից սովորում են մարքսիստական-լենինյան թեորիա, հմտություն՝ պաշտպանելու այն բոլոր թշնամիների վոտնձգություններից, տանելու այն աշխատավորների լայն մասսաների մեջ, զուգորդելու դասակարգային պայքարի պրակտիկային և ապահովելու նրա անբաժան տիրապետությունը միջազգային բանվորական շարժման մեջ:

## III

Այնուհետև կապիտալիստական յերկրների բանվորները սովորում են ընկեր Ստալինից ըմբռնել բանվոր դասակարգի կուսակցության մեծ դերը, նրա ստեղծման ու ամրացման, նրա մարտունակությունն ու մանևրունակությունն ամեն կերպ ուժեղացնելու, նրա կապերը բանվորական մասսաների հետ ընդարձակելու արվեստը: Նրանք բոլշևիկյան հմտություն են սովորում իրագործելու բանվոր դասակարգի առաջատար դերը բոլոր աշխատավորների նկատմամբ: ՀամԿ(բ)Կ փառապանծ, հերոսական պատմության վերաբերյալ ստալինյան հոյակապ պատմումը պարունակում է բանվոր դասակարգի գործի համար կուսակցության նշանակության կլասիկ բնութագրում.

«կուսակցության պատմությունը, ամենից առաջ, սովորեցնում ե, վոր պրոլետարական հեղափոխության հաղթանակը, պրոլետարիատի դիկտատուրայի հաղթանակն անհնարին ե առանց պրոլետարիատի հեղափոխական կուսակցության, վորն ազատ ե օպորտունիզմից, անհաշտ ե հաշտվողականների և կապիտուլյանտների նկատմամբ՝ հեղափոխական ե բուրժուազիայի և նրա պետական իշխանության նկատմամբ» («ՀամԿ(բ)Կ պատմության համառոտ դասընթաց», եջ 474):

Այս կուսակցության կառուցումը, ամրացումն ու ըստ ամենայնի զարգացումը, կուսակցություն, վորի հավասարը չգիտե պատմությունը, յեղել ե և մնում ե ընկեր Ստալինի գլխավոր հոգսը:

Տասնամյակների ընթացքում մինչև Հոկտեմբերյան հեղափոխությունը, որ որի վրա, ցարական ընդհատակի ամենածանր պայմաններում և ապա նոր, խորհրդային միջավայրում ընկեր Ստալինը Լենինի հետ միասին կառուցում, կռում ու կոփում եր բոլշևիկյան կուսակցությունը: Կուսակցության համար մղած այդ պայքարը չեյին կարող դադարեցնել վոչ ցարիզմի վոստիկանական ռեպրեսիաները, վոչ ժամանակավոր կառավարության հալածանքները, վոչ բուրժուազիայի բազմատեսակ դավերը, վոչ մենշևիկների, տրոցկիստների ու դասակարգային թշնամու այլ գործակալների քայքայիչ աշխատանքը:

Լենինն ու Ստալինը հաղթահարեցին բոլոր արգելքները, ջարդեցին հին աշխարհի բոլոր ուժերի դիմադրությունը, վորովհետև բոլշևիզմի առաջնորդներն այդ պայքարում հենվում եյին բանվոր դասակարգի զորության վրա և արտահայտում նրա պատմական կոչումը: Բոլշևիկների կուսակցության ամրացումն ու զարգացումը չկարողացան դադարեցնել նաև տրոցկիստների, զինովյեվականների, բուխարինականների լպիրշ վնասարարական գործողությունները, վորոնք Լենինի մահվանից հետո հատուկ կատաղությամբ հանդես յեկան ընդդեմ կուսակցության և ընդդեմ բոլշևիկյան կուսակցականության հիմունքների:

Ստալինը ջախջախեց թշնամիների բոլոր վորոգայթները, նրանց դեն շպրտեց բանվոր դասակարգի հաղթական ճանապարհից, պաշտպանեց կուսակցությունը, ցեմենտեց նրա շարքերի յերկաթյա միասնությունը և հասցրեց հաղթանակների ամենաբարձր գագաթներին: Նա ի մի հավաքեց ինչպես բուրժուա-դեմոկրատական, այնպես ել սոցիալիստական հեղափոխության դա-



րաշրջանում բոլշևիկյան կուսակցություն կառուցելու պատմական ամբողջ մեծ փորձը և այդ ընդհանրացրած փորձով զինեց միջազգային պրոլետարիատը: «ՀամԿ(բ)Կ պատմության համառոտ դասընթացի» ստալինյան «Յեզրակացության» մեջ կատարյալ պարզությամբ, խորությամբ ու հստակությամբ արտահայտված ե այն, ինչ եր և հանդիսանում ե բոլշևիկների կուսակցությունը, վոր որինակ ե ծառայում կապիտալիստական յերկրների պրոլետարական կուսակցությունների համար:

Բոլշևիզմի սաղմնավորման արշալույսին Լենինն առաջադրեց իր հռչակավոր թեզը կազմակերպվածության նշանակության մասին բանվոր դասակարգի համար: «Պրոլետարիատը,—ուսուցանում եր նա,—ուրիշ զենք չունի իշխանության համար կռվելիս, բացի կազմակերպությունից»: Պրոլետարիատի այս կազմակերպվածությունն ամենից առաջ մարմնավորված ե նրա կուսակցության մեջ: Նա հանդիսանում ե նրա առաջավոր ջոկատը, նրա մարտական շտաբը, առանց վորի անկարելի յե հավաքել պրոլետարիատի ուժերը, ստեղծել նրա հզոր դասակարգային կազմակերպությունները, ապահովել բանվոր դասակարգի դաշինքը քաղաքի ու գյուղի աշխատավորների հետ՝ հաղթանակի հասնելու համար: Ուստի կապիտալիստական յերկրների բանվոր դասակարգի համար ամենագլխավոր, առաջնակարգ կարևորություն ունեցող խնդիր ե հանդիսանում կոփել իսկական հեղափոխական կուսակցություններ, նոր տիպի կուսակցություններ:

Ի՞նչ ե հարկավոր այդպիսի կուսակցություններ կոփելու համար: Հարկավոր ե անշեղ պայքար հանուն կոմունիստական կուսակցությունների բոլշևիզացիայի: Ընկեր Ստալինը, յելնելով մի կողմից բոլշևիկյան կուսակցության պատմական փորձից և մյուս կողմից՝ հաշվի առնելով այն պայմանների վողջ յուրահատկությունը, վորոնց մեջ զարգանում ե կապիտալիստական յերկրների կոմունիստական շարժումը, ցույց ե տալիս, թե վորն ե բոլշևիզացիայի եյությունը և ինչպես պետք ե իրականացնել այն:

«Բոլշևիզացիա կատարելու համար,—ասում եր ընկեր Ստալինը 1925 թ.,—անհրաժեշտ ե ձեռք բերել գոնե վորոշ հիմնական պայմաններ, առանց վորոնց անկարելի յե առհասարակ կոմկուսակցությունների բոլշևիզացիան:

1) Անհրաժեշտ ե, վորպեսզի կուսակցությունն իրեն չհամարի պառլամենտական ընտրական մեխանիզմի մի

կցորդ, ինչպես ըստ էության իրեն համարում է սոցիալ-դեմոկրատիան, իրեն չհամարի արհեստակցական միությունների ձրի հավելված, ինչպես սրա վրա յերբեմն պնդում են անարխո-սինդիկալիստական վորոշ տարրեր,— այլ իրեն համարի պրոլետարիատի դասակարգային միավորության բարձրագույն ձևը, վոր կոչված է ղեկավարելու պրոլետարական կազմակերպությունների մնացած բոլոր ձևերը՝ արհմիություններից սկսած մինչև պառլամենտական ֆրակցիան:

2) Անհրաժեշտ է, վորպեսզի կուսակցությունը, առանձնապես նրա ղեկավար տարրերը, լրիվ տիրապետեն մարքսիզմի հեղափոխական թեորիային, վորն անխզելիորեն կապված է հեղափոխական պրակտիկայի հետ:

3) Անհրաժեշտ է, վորպեսզի կուսակցությունը լոզունգներ ու դիրեկտիվներ մշակի վոչ թե սերտած ֆորմուլաների ու պատմական զուգահեռների հիման վրա, այլ խնամքով վերլուծելով հեղափոխական շարժման ներքին և միջազգային կոնկրետ պայմանները, անպայման հաշվի առնելով բոլոր յերկրների հեղափոխությունների փորձը:

4) Անհրաժեշտ է, վորպեսզի կուսակցությունն այդ լոզունգների ու դիրեկտիվների ճշտությունն ստուգի մասսաների հեղափոխական պայքարի բովի մեջ:

5) Անհրաժեշտ է, վորպեսզի կուսակցության ամբողջ աշխատանքը, առանձնապես յեթե սոցիալ-դեմոկրատական տրադիցիաները դեռ չեն վերացված նրա մեջ, վերակառուցվի նոր, հեղափոխական ձևով, վորի համաձայն կուսակցության յուրաքանչյուր քայլ և նրա յուրաքանչյուր յելույթ բնականաբար հանգեն մասսաների հեղափոխականացման, բանվոր դասակարգի լայն մասսաները հեղափոխության վոգով նախապատրաստելուն:

6) Անհրաժեշտ է, վորպեսզի կուսակցությունն իր աշխատանքի ընթացքում կարողանա բարձրագույն սկզբունքայնությունը (չշփոթել սեկտանտության հետ) զուգորդել մասսաների հետ առավելագույն կապեր ու կոնտակտ ստեղծելու հետ (չշփոթել խվոստիզմի հետ), առանց վորի անկարելի յե կուսակցության համար վոչ միայն սովորեցնել մասսաներին, այլև սովորել նրանցից, վոչ միայն մասսաներին առաջ տանել և բարձրացնել մինչև կուսակ-



ցության մակարդակը, այլև ունկնդրել մասսաների ձայնին և կռահել նրանց ցավոտ կարիքները:

7) Անհրաժեշտ է, վորպեսզի կուսակցությունը կարողանա իր աշխատանքի ընթացքում անհաշտ հեղափոխականությունը (չշփոթել հեղափոխական ավանտյուրիզմի հետ) զուգորդել առավելագույն ճկունության ու մանևրունակության հետ (չշփոթել հարմարվողականության հետ), առանց վորի անկարելի յե կուսակցության համար տիրապետել պայքարի ու կազմակերպման բոլոր ձևերին, պրոլետարիատի առորյա շահերը շաղկապել պրոլետարական հեղափոխության արմատական շահերի հետ և իր աշխատանքի ընթացքում լեգալ պայքարը զուգորդել անլեգալ պայքարի հետ:

8) Անհրաժեշտ է, վորպեսզի կուսակցությունը չթաքցնի իր սխալները, վորպեսզի նա չվախենա քննադատությունից, վորպեսզի նա կարողանա իր կադրերը բարելավել ու դաստիարակել իր սեփական սխալների հիման վրա:

9) Անհրաժեշտ է, վորպեսզի կուսակցությունը կարողանա հիմնական ղեկավար խմբի մեջ ջոկել առաջավոր մարտիկների լավագույն տարրերին, վորոնք բավականաչափ նվիրված են, վորպեսզի լինեն հեղափոխական պրոլետարիատի ձգտումների իսկական արտահայտիչները, և բավականաչափ փորձված, վորպեսզի դառնան պրոլետարական հեղափոխության իսկական առաջնորդները՝ ընդունակ կիրառելու լենինիզմի տակտիկան և ստրատեգիան:

10) Անհրաժեշտ է, վորպեսզի կուսակցությունը սիստեմատիկաբար բարելավի իր կազմակերպությունների սոցիալական կազմը և մաքրի իրեն քայքայվող օպորտունիստական տարրերից, նկատի ունենալով, իբրև նպատակ, հասնել առավելագույն միաձուլության:

11) Անհրաժեշտ է, վորպեսզի կուսակցությունը մշակի պրոլետարական յերկաթյա կարգապահություն՝ աճած գաղափարական զոդվածության, շարժման նպատակների պարզության, պրակտիկ գործողությունների միասնության և կուսակցության խնդիրներին կուսակցական լայն մասսաների կողմից գիտակից վերաբերմունք ցույց տալու հիման վրա:

12) Անհրաժեշտ է, վորպեսզի կուսակցությունը սիստեմատիկ կերպով ստուգի իր սեփական վորոշումների ու դիրեկտիվների կատարումը, առանց վորի վերջիններս յենթակա յեն պարապ խոստումների վերածվելու ռիսկի՝ ընդունակ միայն խախտելու պրոլետարական լայն մասսաների վստահությունը դեպի կուսակցությունը:

Առանց այս և սրանց նման պայմանների բոլշևիզացիան դատարկ հնչյուն է»:

(Ի. Ստալին, «ԳԿԿ հեռանկարների մասին և բոլշևիզացիայի մասին», «Правда» 3 փետրվարի 1925 թ.):

Բոլշևիզացիայի ստալինյան այս պայմանները հսկայական դեր են խաղացել և խաղում են միջազգային կոմունիստական շարժման զարգացման ու ամրացման գործում: Սրանց նշանակությունը կարելի յե համեմատել այն դերի հետ, վոր բոլշևիկյան կուսակցության պատմության մեջ խաղացին Լենինի հռչակավոր «Ի՞նչ անել» և «Մի քայլ առաջ, յերկու քայլ հետ» աշխատությունները:

Ընկեր Ստալինի այս նշանավոր դրույթների նշանակությունն անսահմանորեն աճում է ներկա իրադրության մեջ: Սա աճում է շնորհիվ այն հանգամանքի, վոր բռնկված իմպերիալիստական պատերազմի և համաշխարհային մոլեգնող ռեակցիայի պայմաններում հսկայական տեղաշարժեր են կատարվում միջազգային բանվորական շարժման մեջ, վորոնցից նոր ու բարդ խնդիրներ են բխում կոմունիստական կուսակցությունների համար: Սա աճում է այն պատճառով, վոր սոցիալ-դեմոկրատական լիդերների դավաճանության հետևանքով միլլիոնավոր սոցիալ-դեմոկրատական բանվորներ գտնվում են յերկընտրանքի մեջ, նրանց լավագույն մասն ավելի ու ավելի յե գիտակցում կոմունիստների հետ միասին պայքարելու անհրաժեշտությունը, և կոմունիստների բոլշևիկյան հմտությունից է մեծ չափով կախված բանվոր դասակարգի մարտական միասնության արագ իրագործումը: Ստալինյան դրույթների նշանակությունն աճում է այն պատճառով, վոր կոմունիստական կուսակցությունների առջև առանձնապես սուր կերպով անհետաձգելի խնդիր է ծառանում դուրս մղել բուրժուազիայի գործակալներին բանվորական շարժման շարքերից, վորպեսզի այդ շարժումը վճռականապես ուղղվի իսկական պրոլետարական քաղաքականության ուղիով:

Ընկեր Ստալինից սովորելով, կապիտալիստական յերկրների



կոմունիստական կուսակցությունները քիչ բան չեն ձեռք բերել իրենց բոլշևիզացիայի ընթացքում: Նրանք աճել են գաղափարապես, քաղաքականապես ու կազմակերպորեն, խորթ օպորտունիստական տարրերի զտման մեծ աշխատանք են կատարել, ամրացրել են իրենց շարքերի միաձուլությունը և, ինչպես ցույց տվին վերջին իրադարձությունները, դիմացան դաժան ստուգման, ուղիղ ճանապարհից չշեղվեցին: Բայց նրանք զգում ու գիտակցում են, վոր իրենց շատ ու շատ բան է պակասում, վորպեսզի լինեն իսկական բոլշևիկյան կուսակցություններ:

Եվ կոմունիստները, առանց ձեռքերը ծալելու, ե՛լ ավելի ուժգնորեն պիտի աշխատեն, վորպեսզի կոմունիստական շարժման պրակտիկայում կենսագործեն բոլշևիզացիայի ստալինյան սկզբունքները, առանց վորոնց անկարելի յե ապահովել բանվոր դասակարգի հաղթանակը:

## IV

Կապիտալիստական յերկրների առաջավոր բանվորները սովորում եյին և սովորում են ընկեր Ստալինից, թե ինչպես պետք է բոլշևիկորեն պայքար մղել բուրժուազիայի ազդեցության և նրա գործակալության դեմ բանվոր դասակարգի շարքերում: Ժամանակին հայտաբերել այս ազդեցության կրողներին, պարզել նրա թափանցման ուղիները, պատռել այն մարդկանց դիմակը, վորոնք զգեստավորվում են պրոլետարիատի «բարեկամների» քղամիդով, անողոքաբար մերկացնել նրանց, ջլատել նրանց քայքայիչ աշխատանքի կործանարար հետևանքները—սրանով կենսականորեն շահագրգռված է ամբողջ բանվոր դասակարգը:

Բոլոր յերկրների բանվորական շարժման պատմությունը վկայում է, վոր բուրժուազիան բացահայտ բռնություն գործադրելու հետ միասին լայնորեն ոգտագործում է բանվորական շարժման շարքերը ներսից քայքայելու մեթոդները: Նա վարժեցնում է, կաշառում է; զանազան յեղանակներով այլասերում է բանվորական շարժման այն գործիչներին, վորոնք սիրում են շողոքորթություն, եժան ժողովրդականություն, ամեն տեսակ նյութական նվերներ. բուրժուազիան նրանց թույլ է տալիս մուտք ունենալու իր ընդունարանները, իր սեղանի մոտ, բորբոքում է նրանց փառասիրությունը, փաղաքշում ու գովում է նրանց կատարած յուրաքանչյուր ստորության համար: Նա կերակրում է բանվորական արիստոկրատիային, վորն աճեցվում է

ի հաշիվ գաղութային գերշահույթի: Սրա հետ միասին նա իր պետական իշխանության օրգանների միջոցով լրտեսներ ու պրովոկատորներ ե ուղարկում, ջանում ե նրանց առաջ մղել ղեկավար պոստերի՝ առաջադրանք տալով նրանց սիստեմատիկաբար կազմալուծելու բանվորական շարժումը և պահպանելու այն պառակտման ու անզորության վիճակում: Բացի սրանից, ինչպես հայտնի յե, բանվոր դասակարգը պատով չի անջատված բնակչության մնացած խավերից, մշտապես նրա շարքերի մեջ են լցվում մանր-բուրժուական խավերից յելած մարդիկ:

Այս ամենի հետևանքով բանվորական շարժման մեջ թափանցում են ոչ-պրոլետարական ազդեցություններ: Սա իր արտահայտությունն ե գտնում բանվոր դասակարգի շարքերում գործող կազմակերպությունների ու կուսակցությունների իդեոլոգիայի ու քաղաքականության մեջ: Առանց բանվորական շարժման ներսի բուրժուական ազդեցության ու բուրժուական գործակալության դեմ պայքարելու, հնարավոր չե ոչ պաշտպանել պրոլետարիատի ամենօրյա կարիքներն ու շահերը, ոչ ել հասնել նրա շարժման վերջնական նպատակներին:

Բանվոր դասակարգի մեջ բուրժուազիայի ազդեցության տարածման գլխավոր ուղին կապիտալիստական յերկրներում յեղել ե և մնում ե սոցիալ-դեմոկրատիզմը:

Սոցիալ-դեմոկրատիզմը թեորիայի ասպարեզում մարքսիզմի կամ գռեհկացումն ե, աղավաղումը, կամ նրա ուղղակի ցինիկ ուրացումը, բացահայտ խզումը մարքսիզմից և անցումը բուրժուազիայի իդեոլոգիական դիրքերը: Սոցիալ-դեմոկրատիզմը գործնականում—դա բուրժուազիայի ու պրոլետարիատի դասակարգային ներհակությունների հաշտեցման քաղաքականություն ե, նրանց միջև դասակարգային համագործակցության և պրոլետարիատի շահերը բուրժուազիայի շահերին ստորադասելու քաղաքականություն: Սոցիալ-դեմոկրատիզմը—դա պրոլետարական ամուր, համախմբված կուսակցության բացառումն ե, վորն ընդունակ լինի բանվոր դասակարգին վճռական կռվի տանելու կապիտալիզմի դեմ: Սոցիալ-դեմոկրատիզմը—դա կազմակերպական տարերայնության արմատացումն ե պրոլետարական կազմակերպությունների շարքերում, դա բանվորական շարժման պառակտումն ե: Սոցիալ-դեմոկրատիզմը—դա պրոլետարական ինտերնացիոնալիզմի բացառումն ե, դա մի զենք ե բանվոր դասակարգի շարքերում բուրժուական շովինիզմը թափցնելու համար: Սոցիալ-



դեմոկրատիզմը—դա իմպերիալիզմի ամենանենգ ու թունավոր զենքն ե սոցիալիստական յերկրի դեմ մղվող զրպարտողական կամպանիայում:

Միջազգային բանվորական շարժման ամբողջ փորձն ակնառու լուսաբանում ե սոցիալ-դեմոկրատիզմի այս կործանարար դերը: Պատմական ներկա մոմենտին սոցիալ-դեմոկրատիզմն ու նրա կրողները այն զենքն են բուրժուազիայի ձեռքին, վորի ոգնությամբ նա ջանում ե բանվոր դասակարգին շեղել իր հեղափոխական ճանապարհից, նրա կազմակերպություններն ի սպաս դնել վոճրապարտ իմպերիալիստական պատերազմին և հակահեղափոխական արշավանքին ընդդեմ սոցիալիզմի մեծ յերկրի:

Այն ժամանակ, յերբ Խորհրդային Միությունը ձգտում ե դադարեցնել վոճրապարտ իմպերիալիստական սպանդը, այն ժամանակ, յերբ առաջավոր պրոլետարները հանդես են գալիս նրա դեմ և բարձր են պահում պրոլետարական ինտերնացիոնալիզմի դրոշը, սոցիալ-դեմոկրատիզմի առաջյալներ՝ Յերկրորդ Ինտերնացիոնալի պարագլուխներ՝ այդ բոլոր Բլյումները, Սիտրինները, Տաններները, Սանդլերները հանդիսանում են պատերազմի ամենակատաղի հրձիգներն ու հակակոմունիստական և հակախորհրդային ամենագազազած կամպանիա հարուցողները: Իրենց իմպերիալիստական բուրժուազիայի հետ միասին, ֆիննական սպիտակ-գվարդիականների արյունոտ դահիճ Մաններհայմի հետ ձեռք ձեռքի տված, նրանք հանդես են գալիս ֆինն ժողովրդի դեմ, նրա դեմոկրատական հանրապետության և Խորհրդային Միության դեմ: Հավատով ու ճշմարտությամբ ծառայելով իրենց իմպերիալիստական տերերին, նրանք մոլեգնում են կոմունիզմի դեմ, պնդում են կոմունիստական կուսակցություններն ու կոմունիստական մամուլը փակելու վրա, վոստիկանական հարձակումներ են կազմակերպում և կոմունիստների համար պահանջում են բանտ, համակենտրոնացման ճամբարներ: Չկան այնպիսի վոճրագործություններ, չկա այնպիսի ստորություն, վոր սոցիալ-դեմոկրատիայի մինչև ուղն ու ծուծը նեխած վերնախավը գործի չդնի ընդդեմ հեղափոխական շարժման, ընդդեմ սոցիալիզմի յերկրի:

Սոցիալ-դեմոկրատիզմը, սկսելով մարքսիզմի ռևիզիայից, գլորվելով մինչև նրա լիակատար բացառումը, տասնամյակներով գործիք ծառայելով բանվորական շարժման բարոյալքման և կազմալուծման համար, այժմ դարձել ե բանվոր դասակարգի ճնշման

գործիք, ռեակցիայի, իմպերիալիստական պատերազմի գործիք և սոցիալիզմի յերկրի դեմ հակահեղափոխական արշավանք կատարելու գործիք:

*Միջազգային պրոլետարիատը ընկեր Ստալինին է պարտական այն բանի համար, որ նա, տասնամյակների ընթացքում անհաշտ պայքար մղելով սոցիալ-դեմոկրատիզմի դեմ, բացահայտեց նրա սոցիալական արմատները, նրա ազդեցության պատճառները, նշեց նրա հաղթահարման ու արմատահանման յեղանակներն ու միջոցները: Հոկտեմբերյան հեղափոխության տասնըորդ տարեդարձի օրը ընկեր Ստալինը գրում էր.*

> «*Ներկայիս սոցիալ-դեմոկրատիզմը կապիտալիզմի* գաղափարական հենարանն է... Անկարելի յե վերջ դնել կապիտալիզմին, վերջ չդնելով սոցիալ-դեմոկրատիզմին բանվորական շարժման մեջ»:

*Ընկեր Ստալինի այս խոր յեզրակացության ճշմարտությունը հաստատվում է կապիտալիստական յերկրների բանվորական շարժման ամբողջ փորձով: Այս յեզրակացությունն այժմ յուրացնում են նաև սոցիալ-դեմոկրատական բանվորները, որոնց մեջ ավելի ու ավելի ուժգնորեն է աճում վրդովմունքն իրենց առաջնորդների դավաճանական քաղաքականության դեմ:*

*Պայքարել խաբված բանվորներին սոցիալ-դեմոկրատիզմի ապականիչ ազդեցությունից ազատելու համար, նրանց ներգրավել միատեղ գործողությունների կոմունիստական բանվորների հետ, պայքարել սոցիալ-դեմոկրատիզմը վերջնականապես արմատախիլ անելու բանվոր դասակարգի շարքերից—սա յե կոմունիստական կուսակցությունների կարևորագույն խնդիրներից մեկը:* Յեվ այս խնդրի հաջող վճռման արվեստը նրանք սովորում են ու պետք է սովորեն ընկեր Ստալինից:

## V

*Միջազգային բանվոր դասակարգի համար ընկեր Ստալինը հանդիսանում է* պրոլետարական առաջնորդ, *որն իդեալական կերպով իր անձի մեջ մարմնավորում է այն դասակարգին հատուկ բոլոր լավագույն գծերը, հատկություններն ու որակները, որին պատմությունը կոչել է վերափոխելու աշխարհը:*

*Ստալինը հանդիսանում է պրոլետարական ինտերնացիոնալիզմի լավագույն արտահայտիչը: Ստալինի ամբողջ գործունեությունն ու ուսմունքը, ինչպես և Մարքսի, Ենգելսի, Լենինի*



*գործունեությունն ու ուսմունքը, խորապես թափանցված են պրոլետարական ինտերնացիոնալիզմով:*

*Ստալինն ինտերնացիոնալ է, ինչպես ինտերնացիոնալ է բանվոր դասակարգը: Ստալինն ինտերնացիոնալ է, ինչպես ինտերնացիոնալ է բոլշևիզմը: Ստալինն ինտերնացիոնալ է, ինչպես ինտերնացիոնալ է մարքսիստական-լենինյան ուսմունքը, որը ցույց է տալիս բոլոր շահագործվողների ու կեղեքվածների ազատագրման ուղին յերկրագնդի վրա: Ստալինի թեորետիկ և պրակտիկ աշխատանքն ընդգրկում է բոլոր յերկրների, բոլոր ժողովուրդների, բոլոր ցեղերի բանվորների շահերը:*

*Ընկեր Ստալինն ամենաանհաշտ պայքար է մղում նացիոնալիզմի ու շովինիզմի դեմ, որոնք ուժգնորեն բորբոքվում են բուրժուազիայի և նրա իդեոլոգների կողմից: Ինչպես և Լենինը, նա միջազգային պրոլետարիատին և Խորհրդային Միության աշխատավորներին դաստիարակել է և դաստիարակում է պրոլետարական ինտերնացիոնալիզմի ոգով: Նա ուսուցանում է, որ սոցիալիզմի հաղթանակը ԽՍՀՄ-ում—դա մի հզոր նեցուկ է կապիտալիստական յերկրների աշխատավորների ազատագրական շարժման համար: Նա ուսուցանում է խորհրդային ժողովրդին, որ այդ հաղթանակն անկարելի կլիներ առանց միջազգային բանվոր դասակարգի աջակցության: Նա ուսուցանում է, որ ԽՍՀՄ ժողովուրդների հաջողություններն ուժեղացնում են կապիտալիստական յերկրների աշխատավորների դիրքերը շահագործողների դեմ նրանց մղած պայքարում: Նա ուսուցանում է, որ կապիտալիստական յերկրների աշխատավորների պայքարը դյուրացնում է խորհրդային յերկրի առաջխաղացումը կոմունիզմի ճանապարհով: Ընկեր Ստալինի պրոլետարական այս խոր ինտերնացիոնալիզմը ամեն որ զգում են կապիտալիստական յերկրների բանվորները: Ստալինի մեջ նրանք տեսնում են ոչ միայն խորհրդային յերկրի ժողովուրդների առաջնորդին, այլև ամբողջ միջազգային պրոլետարիատի առաջնորդին, որն իր բովանդակ կյանքը նվիրել է նրա նվիրական հույսերի ու ակնկալիքների իրականացմանը:*

*Միջազգային կոմունիստական շարժման գործն անխզելիորեն կապված է ընկեր Ստալինի անվան հետ: Անդադրում աշխատելով բոլշևիկյան կուսակցության ստեղծման վրա, բազմամյա սկըզբունքային անհաշտ պայքար մղելով օպորտունիզմի դեմ Ռուսաստանում ու միջազգային ասպարեզում, մարքսիզմի հետագա զար-*

ղացումով դասակարգային պայքարի նոր պայմանների համապատասխան, ապահովելով սոցիալիստական մեծ հեղափոխության հաղթանակը ԽՍՀՄ-ում—Լենինն ու Ստալինը հիմք դրին Կոմունիստական Ինտերնացիոնալին: Կոմունիստական Ինտերնացիոնալը կառուցվել է, պայքարել է և պայքարում է նրանց մեծ ուսմունքի հիման վրա: Իր ամբողջ գործունեության ընթացքում նա ղեկավարվում է նրանց կոփած բոլշևիկների փառապանծ կուսակցության պայքարի օրինակով: Կոմունիստական Ինտերնացիոնալը Լենինի—Ստալինի Ինտերնացիոնալն է, նման այն բանին, ինչպես Առաջին Ինտերնացիոնալը Մարքսի—Ենգելսի Ինտերնացիոնալն էր:

Սոցիալ-դեմոկրատական լակեյները, փորձելով խայթել կոմունիստներին, հաճախ մեզ անվանում են «ստալինյաններ»: Իսկ մենք, կոմունիստներս, հպարտանում ենք այս պատվավոր անունով, ինչպես հպարտանում ենք լենինյան անունով: Պրոլետարական հեղափոխականի համար չկա ավելի մեծ պատիվ, քան իսկական լենինյան, իսկական ստալինյան լինելը, մինչև վերջը Լենինի ու Ստալինի հավատարիմ հետևորդներ լինելը: Ու չկա ավելի մեծ յերջանկություն կոմունիստների համար, քան մեծ Ստալինի ղեկավարությամբ պայքարել հանուն միջազգային պրոլետարիատի արդար գործի հաղթության:

Ամեն մեկին չի վիճակված ստալինյան լինել: Լենինյան-ստալինյան պատվավոր կոչմանը պետք է արժանանալ բոլշևիկյան պայքարով ու տոկունությամբ, անսահման նվիրվածությամբ բանվոր դասակարգի գործին: Ամենայն որ յերկրի բոլոր ծայրերին լայնանում ու բարձրանում է պրոլետարիատի մարտիկների լենինյան-ստալինյան գվարդիան, վորը կազմում է համաշխարհային բանվորական շարժման վոսկե ֆոնդը: Միայն նա, և վոչ թե իմպերիալիզմի սոցիալ-դեմոկրատական անարգ լակեյներն են արտահայտում բանվոր դասակարգի շահերն ու կարիքները, և այս փառապանծ գվարդիան միջազգային պրոլետարիատին Մարքսի—Ենգելսի—Լենինի—Ստալինի դրոշի տակ կտանի դեպի հաղթանակ հին աշխարհի ուժերի նկատմամբ:

Բայց բոլշևիկները գիտեն, վոր հաղթանակը յերբեք ինքն իրեն չի գալիս, վոր այն անհրաժեշտ է նախապատրաստել ու նվաճել: Սովորել Ստալինից ստեղծագործական մարքսիզմ, սովորել Ստալինից բոլշևիկյան կուսակցություն կառուցել, սովորել ընկեր Ստալինից ամեն տեսակ պայմաններում ամրացնել



կապերը մասսաների հետ, սովորել Ստալինից պայքարել սոցիալ-դեմոկրատիզմի դեմ, սովորել Ստալինից հեղափոխական մաքառում ու հեղափոխական ռեալիզմ, սովորել Ստալինից աներկյուղ լինել կռվի մեջ և անողոք դասակարգային թշնամու հանդեպ, սովորել Ստալինից անընկճելի կամքով հաղթահարել բոլոր դժվարությունները և հաղթել թշնամուն, սովորել Ստալինից մինչև վերջ հավատարիմ լինել պրոլետարական ինտերնացիոնալիզմի գործին—այս է բանվոր դասակարգի հաղթանակի նախապատրաստման ու նվաճման կարևորագույն պայմանը:

Խմբագրեցին Գ. Ղուկասյան և Գ. Հարությունյան
Տեխն. խմբ. Ս. Խաչատրյան
Սրբագրիչ Վ. Ջիդեչյան
Կոնտրոլ սրբագրիչ Լ. Սրոքյան

Գլավլիտի լիազոր Վ. 1117, հրատ. № 601,
Պատվեր № 46, տիրաժ 7.000
Թղթի չափը $60 \times 92\,^{1}/_{16}$ (38.400 տպ. նիշ 1 տպ. մամուլում)
$10\,^{1}/_{2}$ տպ. մամուլ, $5\,^{1}/_{4}$ թերթ թուղթ.
Հանձնվել է արտադրության 1 II 1940 թ.
Ստորագրվել է տպագրելու 19 III 1940 թ.
Գինը 1 ռ. 50 կ., կազմը 1 ռ. 50 կ.

Քաղաքական գրականության պետական հրատարակչության տպարան, Յերևան, Ալլավերդյան № 65

7

ՀՀ Ազգային գրադարան
NL0186108

ԳԻՆԸ 3ռ.